

Գլուխ առաջին — Հոլմսի դեղուկտիվ մեթոդի էությունը

Շերլոկ Հոլմսը բուխարու վրայից վերցրեց սրվակը և խնամքով պատրաստված սեկե պիտույքատուփից հանեց ներարկիչը՝ ենթամաշկային ներարկման համար: Ջղաձգված, երկար, սպիտակ մատներով ասեղն ամրացրեց ներարկիչին և քշտեց ձախ թևքը: Մի պահ մտազբաղ նայեց նախկին ներարկումներից ծակծկված իր մկանոտ ձեռքին: Ապա ասեղը կտրուկ խրեց մաշկի տակ և բավարարված, շունչ քաշելով, ետ ընկավ թավշե բազկաթոռի թիկնակին:

Բազում ամիսներ, օրը երեք անգամ, ես ականատես էի լինում միևնույն տեսարանին, բայց չէի կարողանում դրան ընտելանալ: Ընդհակառակը, օրեցօր ավելի ու ավելի էի զայրանում, որ քաջությունս չի բավարարում բողոքելու: Նորից ու նորից ինքս ինձ պարտադրում էի ընկերոջս ասել, թե ինչ եմ մտածում նրա այդ սովորության մասին, բայց նրա սառը, անկիրք խառնվածքը խափանում էր նրան ճիշտ ճանապարհի բերելու ամեն մի հավակնություն: Իմանալով նրա բացառիկ խելքի, տիրական բնավորության և այլ յուրօրինակ հատկությունների մասին, վախենում էի, լեզուս չորանում էր բերանիս մեջ:

Սակայն այդ օրը, չգիտեմ, նախաձաշին խմածս կլարետից էր, թե Հոլմսի անուղղելի համառության պատճառով ինձ պատած հուսահատությունից, այլևս չդիմացա ու պայթեցի:

— Այսօր ի՞նչ է, — հարցրի, — մորֆի՞, թե՞ կոկային:

Հոլմսը ծուլորեն աչքը կտրեց գոթական տառատեսակով հին գրքից:

— Կոկային, — պատասխանեց: — Յոթ տոկոսանոց: Ցանկանում եք փորձե՞լ:

— Խոնարհաբար շնորհակալ եմ, — նետեցի ես: — Իմ օրգանիզմը դեռ լիովին չի կազդուրվել աֆղանական արշավանքից: Եվ չեմ ցանկանում այն ավելորդ ծանրաբեռնել:

Հոլմսը ժպտաց ջղայնությանս վրա:

— Գուցեն ճիշտ եք, Ուոտսոն, — ասաց նա: — Թմրադեղերն էլ են վնասում առողջությանը: Բայց փոխարենը ես հայտնաբերեցի, որ դրանք զարմանալիորեն խթանում են մտավոր գործունեությունը և պայծառացնում գիտակցությունը: Այնպես որ, դրանց կողմնակի ազդեցության վրա կարելի է աչք փակել:

— Բայց մտածեք, — տենդագին բացականչեցի ես, — թե դրա դիմաց ինչ եք վճարում: Ասենք թե ձեր ուղեղը ինչ-որ ժամանակահատվածում սկսում է արդյունավետ գործել, բայց դա կործանարար վիճակ է, որը հանգեցնում է նյարդային բջիջների վերասերման և, ի վերջո, տկարամտության: Դուք շատ լավ գիտեք, թե հետո ինչպիսի հակազդեցություն է սկսվում: Ոչ, Հոլմս, իսկապես դա անմտություն է: Ինչպես կարող եք հանուն ինչ-որ մի քանի րոպեի

խթանման վտանգի ենթարկել բնության կողմից ձեռք տրված զարմանալի շնորհը:

Շերլոկ Հոլմսը չվիրավորվեց: Ընդհակառակը, մեր խոսակցությունը, թվում էր, զվարճացրեց նրան:

— Ուղեղս ըմբոստանում է անգործությունից, — ասաց նա, հենվելով բազկաթոռի արմնկակալներին և ազուցելով մատները: — Ինձ գործ տվեք, տվեք դժվարագույն խնդիր, անլուծելի առաջադրանք, խճճված դեպք, և ես կմոռանամ արհեստական ազդակների մասին: Ատում եմ կյանքի մռայլ, միապաղաղ ընթացքը: Ուղեղս պահանջում է լարված աշխատանք: Հատկապես դրա համար եմ ընտրել իմ հազվագյուտ մասնագիտությունը, ավելի ճիշտ, ստեղծել, որովհետև աշխարհում երկրորդ Շերլոկ Հոլմս չկա:

— Աշխարհում միակ մասնավոր խուզարկուն դու՞ ք եք, — հարցրի ես՝ բարձրացնելով հոնքերս:

Միակ մասնավոր խուզարկու խորհրդատուն, — պատասխանեց Շերլոկ Հոլմսը: — Վերջին և բարձրագույն ատյանը: Երբ Գրեգսոնը, Լեստրեյդը կամ Էթելնի Ջոնսը հայտնվում են փակուղում, իսկ դա նրանց սովորական վիճակն է, անմիջապես ինձ են կանչում: Ծանոթանում եմ գործի մանրամասներին և հայտնում կարծիքս՝ մասնագետի կարծիքը: Փառք չեմ փնտրում: Երբ ինձ հաջողվում է պարզել գործը, անունս չի հիշատակվում թերթերում: Բարձրագույն պարգևը տեսնում եմ հենց աշխատանքում, իմ մեթոդը գործնականում կիրառելու մեջ: Ուռտսոն, դուք այն լավ գիտեք: Հիշեք թեկուզ Ջեֆերսոն Հոուփի գործը:

— Այո, հիշում եմ, — պատասխանեցի փափկելով: — Հետաքրքիր դեպք էր: Նույնիսկ այդ մասին պատմվածքի պես մի բան գրեցի հետաքրքրաշարժ վերնագրով՝ «Էտյուդ արնագույն երանգներում» :

— Ես տեսա ձեր պատմվածքը, — առանց խանդավառության Հոլմսը տարուբերեց գլուխը: — Եվ պետք է խոստովանեմ, չեմ կարող ձեզ շնորհավորել հաջողության համար: Հանցագործության հետաքննությունը ճշգրիտ գիտություն է, համենայն դեպս, պետք է լինի այդպիսին: Եվ գործունեության այդ տեսակը պետք է նկարագրել զուսպ, անկիրք ոճով: Իսկ ձեր գրքում սենտիմենտալություն կա: Դա նույնն է, թե Էվկլիդեսի հինգերորդ կանխադրույթի մասին դատողություններին կցեն հրապուրիչ սիրո մի պատմություն:

Բայց այնտեղ իրոք ռոմանտիկ պատմություն կար, — առարկեցի ես: — Պարզապես հավատարիմ եմ մնացել փաստերին:

— Ինչ-որ բանի մասին կարելի էր և լռել կամ փաստերը շարադրելիս գոնե չափը չանցնել: Միակ բանը, որ այդ գործում արժանի է ուշադրության դատողությունների շղթան է՝ պատճառից մինչև հետևանք: Հենց դա էլ հանգեցրեց գործի բացահայտման հաջողությանը:

Ինձ գայրացրին այդ խոսքերը. չէ՞ որ ես նկարագրել էի Հոլմսի գործը, որ նրան հաճույք պատճառեմ: Ինձ գայրացրեց նաև նրա եսասիրությունը, որին բավարարություն տալու համար պետք էր գրքիս յուրաքանչյուր տողը նվիրել նրա անգնահատելի մեթոդին: Ընկերոջս հետ մի քանի տարի ապրելով Բեյքր-սթրիթում, մեկ անգամ չէ, որ նրա սովորական զսպվածության և տիրական բնավորության տակ թաքնված որոշ փառամոլություն եմ նկատել: Սակայն ոչինչ չպատասխանեցի և նստած հիվանդ ոտքս էի օրորում, որից վերջերս էին

հանել աֆղանական զենքից արձակված գնդակը, ու թեև վերքը չէր խանգարում քայլել, եղանակի փոփոխության ժամանակ ամեն անգամ նվվում էր:

— Վերջերս սկսեցի մասնակցել մայրցամաքում կատարված

հանցագործությունների բացահայտմանը, — մի փոքր անց ասաց Հովմար, լցնելով իր սիրելի ծխամորճը: — Անցյալ շաբաթ խորհրդի համար ինձ դիմեց Ֆրանսուա դը Վիլարը, որն, ինչպես հավանաբար դուք գիտեք, վերջերս մտավ Ֆրանսիայի լավագույն խուզարկուների շարքը: Նա կելտական ռասային հատուկ հիանալի արագ ինտուիցիա ունի, բայց առաջնակարգ խուզարկուի համար չափազանց անտեղյակ է մեր մասնագիտական արվեստին: Գործը վերաբերում էր մի կտակի և մի քանի հետաքրքիր մանրամասներ ունեւ: Ես Վիլարին հիշեցրի նմանատիպ երկու դեպք՝ մեկը հետաքննվել էր Ռիգայում 1857 թվականին, իսկ մյուսը՝ Սենտ-Լուիսում 1871- ին: Եվ դա նրան հետևություններ անելու բանալի տվեց: Այսօր առավոտյան նամակ ստացա, որով շնորհակալություն էր հայտնում օգնության համար:

Այդ ասելով, ինձ մեկնեց արտասահմանյան արտադրության երկծալ մի թուղթ, որտեղ, ինչպես նկատեցի, աչքի էին զարնում ֆրանսիացու ջերմ հիացմունքը վկայող *magnifique, coup-de-maitre* և *tours-de-force* բառերը:

— Նա ձեզ գրում է՝ ինչպես աշակերտը ուսուցչին, — ասացի ես:

— Նա գնահատում է իմ օգնությունը, — անտարբեր նկատեց Հովմար: — Ինքն անձամբ շատ ընդունակ մարդ է և տիրապետում է իդեալական խուզարկուին անհրաժեշտ երեք հատկություններից ամենաքիչը երկուսին. կարողանում է նկատել և դրա հիման վրա հետևություններ անել: Առայժմ նրան պակասում են գիտելիքները, բայց ժամանակի ընթացքում դա էլ ձեռք կբերի: Հիմա ֆրանսերեն է թարգմանում իմ բրոշյուրները:

— Իսկ մի թե դուք գրում եք:

— Մեղք գործել եմ, — ծիծաղեց Հովմար: — Մի քանի փոքր գործեր եմ գրել: Դրանցից մեկը «Ծխախոտի տեսակի որոշումը ըստ մոխրի» վերնագրով, նկարագրում է հարյուր քառասուն տեսակ սիգարների և ծխամորճի ծխախոտեր: Կցված գունավոր լուսանկարները ցույց են տալիս մոխրի տարբեր տեսակներ: Ծխախոտի մոխիրը ամենահաճախակի հանդիպող հանցանշաններից է: Երբեմն՝ ամենակարևորը: Օրինակ, եթե կարողանաք ճիշտ ասել, որ մարդասպանը ծխում է հնդկական ծխախոտ, ապա որոշման շրջանակը, բնականաբար, նեղանում է: Փորձված աչքի համար սև տրիխինոպոյան ծխախոտի և «թռչնի աչքի» ճերմակ մոխրի միջև տարբերությունը այնքան մեծ է, որքան կարտոֆիլի և կաղամբի:

— Մանրուքները նկատելու զարմանալի հատկություն ունեք, — նկատեցի ես:

— Պարզապես հասկանում եմ դրանց կարևորությունը: Կամ էլ հետքերի մասին աշխատությունը, ուր խոսվում է հետքը պահպանելու համար գիպսի օգտագործման մասին: Մի փոքր հետազոտություն նվիրված է ձեռքի ձևի վրա մասնագիտության թողած ազդեցությանը, որտեղ տվյալներ կան, տանիքագործի, վիմագրողի, նավաստու, կոմպոզիտորի, խցանագործի, ջուլիակի և ալմաստ հղկողի ձեռքերի մասին: Իմ մասնագիտությունը գիտություն համարող խուզարկուի համար այս հետազոտությունը գործնական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Այն հատկապես օգտակար է, երբ հարկ է լինում ճանաչել դիակը կամ որոշել հանցագործի մասնագիտությունը:

Բայց տեսնում եմ, որ չարաշահում եմ ձեր համբերությունը անընդհատ նույն թեմայի մասին խոսելով:

— Ամենևին, — ջերմորեն առարկեցի ես: — Այս ամենը անչափ հետաքրքիր է, մանավանդ, որ իմ աչքերով եմ տեսել ձեր գիտելիքների գործնական կիրառումը: Այ, հիմա հիշատակեցիք դիտելու և հետևություն անելու կարողությունը: Իսկ ինձ թվում էր, թե դրանք համարյա նույն բաներն են:

— Ոչ, տարբեր են, — պատսխանեց Շերլոկ Հոլմսը, հաճույքով ետ ընկնելով բազկաթոռի փափուկ թիկնակին և ծխամորճից ծխի թանձր թխակապույտ օղակներ արձակելով: — Ահա, օրինակ, զննումը ցույց տվեց, որ դուք առավոտյան եղել եք Ուիգմոր-սթրիթի փոստում, իսկ տրամաբանական մտածողության կարողությունը թույլ տվեց եզրակացնել, որ այնտեղ եք մտել հեռագիր ուղարկելու համար:

— Ապշեցուցիչ է, — բացականչեցի ես: — Դուք իրավացի եք: Բայց պետք է խոստովանեմ, չեմ հասկանում, թե ինչպես գուշակեցիք: Փոստ մտա պատահաբար և չեմ հիշում, թե ինչ-որ մեկին ասած լինեմ:

— Պարզից պարզ է, — ժպտաց Հոլմսը զարմանքիս վրա: — Այնքան պարզ, որ բացատրելու հարկ չկա: Չնայած, խնդրեմ, այդ օրինակով կարող եմ ձեզ ցույց տալ դիտողականության և մտահանգման կարողության միջև եղած տարբերությունը: Դիտողականությունն ինձ ցույց տվեց, որ ձեր կաշվե կիսակոշիկները կեղտոտված են կարմիր կավով: Իսկ Ուիգմոր-սթրիթի փոստի մոտ հենց հողային աշխատանքներ են տարվում: Գետինն ամբողջովին քանդված է, և փոստ մտնել, առանց ոտքերը կեղտոտելու, հնարավոր չէ: Կավն այնտեղ առանձնապես կարմիր գույնի է, ինչպիսին մոտերքում ոչ մի տեղ չկա: Ահա ինչ տվեց դիտողականությունը: Մնացածը եզրակացրի տրամաբանական ճանապարհով:

— Իսկ ինչպե՞ս իմացաք, որ ես հեռագիր եմ ուղարկել:

— Դարձյալ շատ հասարակ: Ինձ հայտնի է, որ առավոտյան ոչ մի նամակ չէք գրել, չէ որ ես նստած էի ձեր դիմաց: Իսկ ձեր գրասեղանի բաց դարակում նկատեցի փոստային բացիկների մի հաստ կապոց և մի ամբողջ թերթ դրոշմանիշներ: Այդ դեպքում, ինչի համար են փոստ զնում, եթե ոչ հեռագիր ուղարկելու: Դեն նետեք այն ամենը, ինչ կապ չունի և կմնա միակ փաստը, որն էլ հենց ճշմարտությունն է:

— Իսկապես, ամեն ինչ շատ պարզ է, — ասացի ու լռեցի: — Բայց այս դեպքը, ինչպես նկատեցիք, պարզագույնն է: Ներեցեք պնդերեսությանս համար, բայց ես կցանկանայի ձեր մեթոդը ենթարկել ավելի լուրջ փորձության:

— Շատ ուրախ կլինեմ: Դա ինձ կփրկի կոկաինի ավելորդ չափաբաժնից: Ըստ ձեր հայեցողության, տվեք ինձ ցանկացած խնդիրը:

— Հիշում եմ, դուք ասում էիք, որ երբ երկար են օգտվում իրերից, դրանց վրա մնում են օգտագործող անձի հետքերը: Եվ փորձառու աչքը կարող է այդտեղ շատ բան տեսնել: Ես մի ժամացույց ունեմ, որը վերջերս է ձեռքս անցել: Խնդրեմ, բարի եղեք ասել, ինչպիսին են դրա նախկին տիրոջ սովորություններն ու բնավորությունը: Նրան մեկնեցի ժամացույցը, խոստովանում եմ, ոչ առանց գաղտնի բավականության, քանի որ, իմ կարծիքով, խնդիրն անլուծելի էր, իսկ ես ցանկանում էի մի փոքր կոտրել բարեկամիս պարծենկոտությունը. նրա խրատաբանությունն ու առարկություն չընդունող տոնը ինձ երբեմն զայրացնում էին: Նա վերցրեց ժամացույցը, ասես կշռելով, ուշադիր նայեց

թվացույցին, հետո բացեց կափարիչը և սկսեց զննել մեխանիզմը, սկզբում պարզապես ի միջի այլոց, իսկ հետո զինվելով ուժեղ երկգոգավոր խոշորացույցով: Հազիվ զսպեցի ժպիտս, երբ Հովմար շրխկացրեց կափարիչը և հիասթափված ինձ մեկնեց ժամացույցը:

— Համարյա ոչինչ ասել չի կարելի, ասաց նա: — Ժամացույցը վերջերս է եղել վարպետի մոտ: Մանրակրկիտ մաքրվել է: Այնպես որ, զրկված եմ ինչ-որ բան ստույգ ասելու հնարավորությունից:

— Ճիշտ էք, — պատասխանեցի ես: — Նախքան մոտս հայտնվելը այն իսկապես գտնվել է ժամագործի մոտ:

Մտքումս նախատեցի բարեկամիս, որն իր անհաջողությունը բացատրեց այդպիսի անհամոզիչ փաստարկով: Հետաքրքիր է, ի՞նչ կարելի է իմանալ չմաքրված ժամացույցից:

Չնայած չեմ կարող արդյունքով պարծենալ, բայց, այնուամենայնիվ, այնտեղ ինչ-որ բան տեսա, — ասաց նա, առաստաղին հառելով օտարոտի հայացքը: — Եթե սխալվեմ, խնդրում եմ ուղղեք ինձ, Ուոտսոն: Ուրեմն այսպես, ժամացույցը, ըստ իս, պատկանել է ձեր ավագ եղբորը, իսկ նա դա ժառանգել է հորից:

— Ձեզ, իհարկե, այդ մտքին հանգեցրին կափարիչին փորագրված «Գ. Ու. » տառերը:

— Ճիշտ է: Ձեր ազգանունը սկսվում է «Ու»-ով, այդպես չէ՞: Ժամացույցը պատրաստված է կես դար առաջ, սկզբնատառերը ևս փորագրված են հենց այդ ժամանակ: Դրանից եզրակացրի, որ ժամացույցը պատկանել է ավագ սերնդի մարդու: Որքան ինձ հայտնի է, ընտանեկան թանկարժեք իրերը հորից անցնում են ավագ որդուն: Միանգամայն հնարավոր է, որ ձեր հայրը, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, մահացել է շատ տարիներ առաջ: Հետևաբար, նախքան ձեզ անցնելը, այն պատկանել է ձեր եղբորը:

— Այո, մինչև հիմա ամեն ինչ ճիշտ է, — նկատեցի ես: — Իսկ ուրիշ ի՞նչ տեսաք զննելով այդ ժամացույցը:

— Ձեր եղբայրը շատ անկարգ, թեթեվամիտ և անճշտապահ մարդ էր: Ժառանգել էր պատշաճ կարողություն, ապագան առջևում էր: Բայց ամեն ինչ վատնել և ապրել է կարիքի մեջ, չնայած ճակատագիրը երբեմն ժպտացել է նրան: Վերջ ի վերջո, հարբեցողության է տրվել և մահացել: Ահա այն ամենը, ինչ հաջողվեց դուրս կորզել ժամացույցից:

Այլայլված վեր թռա աթոռից և կաղալով քայլեցի սենյակում:

— Հովմար, դա չափազանց տգեղ է ձեր կողմից: Դուք ինչ-որ կերպ տեղեկացել էք դժբախտ եղբորս ճակատագրի մասին, իսկ այժմ ձևացնում եք, որ դա ինչ-որ հրաշքով միայն հիմա ձեզ հայտնի դարձավ: Երբեք չեմ հավատա, որ այդ բոլորը ձեզ պատմել է ինչ-որ մի հին ժամացույց: Դա դաժանություն է և, եթե բանը հասել է դրան, ապա դառնում է շառլատանություն:

— Իմ թանկագին Ուոտսոն, — մեղմ ասաց Հովմար, — ներեցեք ինձ, ասածու սիրուն: Լուծելով այդ հանելուկը, մոռացա, թե դա որքան մոտ է ձեր սրտին, և չմտածեցի, որ ձեր եղբոր մասին հիշատակելը ծանր կլինի ձեզ համար: Բայց հավատացնում եմ, ոչինչ չգիտեի ձեր եղբոր գոյության մասին, մինչև այն րոպեն, երբ տեսա ժամացույցը:

— Այդ դեպքում բացատրեք, թե ինչպես իմացաք այդ ամենը: Եղբորս մասին ձեր պատմածը լիովին համապատասխանում է իրականությանը:

— Երջանիկ զուգադիպություն: Կարող էի միայն ենթադրել հավանականության այս կամ այն աստիճանով, բայց պարզվեց, որ ամեն ինչ այդպես է եղել:

— Բայց դա պարզապես զուշակություն չէ՞:

— Իհարկե ոչ: Երբեք չեմ զուշակում: Շատ հիմար սովորություն է, սպանիչ ազդեցություն է թողնում, տրամաբանական մտածողության վրա: Դուք ցնցված եք, որովհետև չեք տեսնում մտքերիս ընթացքը, իսկ մանր փաստերը ձեզ համար գոյություն չունեն: Բայց չէ որ որպես օրենք հատկապես դրանց վրա է կառուցվում դատողությունը: Ահա օրինակ, իմ առաջին եզրակացությունը՝ ձեր եղբորը հատուկ էր թափթփվածությունը: Եթե ուշադիր նայեք ժամացույցի հակառակ կողմը, ապա կնկատեք, որ պատյանը ճիւղտված է ոչ միայն երկու կողմից, այլև քերծված է ինչ-որ ամուր բանով, ասենք բանալիով կամ դրամով, որոնք ձեր եղբայրը ժամացույցի հետ կրել է միննույն գրպանում: Պարզ է, հարկ չկա խելքի ծով լինել ենթադրելու համար, որ հիսուն զինեա արժողությամբ ժամացույցին այդպիսի անփութությամբ վերաբերվող մարդը կարգապահությամբ աչքի չէր ընկնում: Դժվար չէ նաև գլխի ըմկնել, որ եթե մարդը այդպիսի թանկագին ժամացույց է ժառանգել, ապա ժառանգությունն ինքն էլ փոքր չի եղել:

Գլխով արեցի, ի նշան, որ ուշադրությամբ լսում եմ:

— Անգլիական լումբարդում, երբ ժամացույց են գրավ վերցնում, անդորագրի համարը սովորաբար ասեղով գրում են կափարիչի ներսի մասում: Ցանկացած պիտակից լավ է: Վտանգ չկա, որ պիտակը կկորչի կամ կփոխեն: Այս ժամացույցի վրա խոշորացույցի օգնությամբ տեսա ամենաքիչը չորս այդպիսի համար: Հետևություն՝ ձեր եղբայրը հաճախ էր նեղն ընկնում: Երկրորդ եզրակացություն՝ ժամանակ առ ժամանակ նրան հաջողվում էր կարգավորել իր գործերը, ապա թե ոչ, նա չէր կարող ետ գնել գրավ դրած ժամացույցը: Վերջապես, նայեք ներքին կափարիչին, որտեղ բանալու ճեղքն է: Նայեք, բավականին քերծվածքներ կան, դրանք բանալու հետքեր են, քանի որ նա, միանգամից չի կարողացել բանալին մտցնել անցքի մեջ: Չիմող մարդու ժամացույցի վրա այդպիսի քերծվածքներ չեն լինում: Հարբեցողների մոտ դրանք մշտապես կան: Ձեր եղբայրը ժամացույցը միշտ լարել է ուշ երեկոյան և ահա, որքան հետքեր է թողել նրա անվստահ ձեռքը: Այս ամենի մեջ ի՞նչ հրաշագործություն և առեղծվածային բան կա:

— Այո, հիմա տեսնում եմ, որ ամեն ինչ շատ պարզ է: Եվ ցավում եմ, որ անարդարացի էի: Պետք է ավելի շատ վստահեի ձեր բացառիկ ընդունակությունների: Կարելի է մի հարց տալ. ձեռքի տակ ինչ-որ հետաքրքիր գործ ունե՞ք:

— Ոչ: Այստեղից էլ կոկաինը: Չեմ կարող ապրել առանց լարված մտավոր աշխատանքի: Կորչում է կյանքի նպատակը: Նայեք պատուհանից դուրս: Ինչ թախծոտ, նողկալի և անհույս է աշխարհը: Նայեք, ինչպես է դեղին մուժը քուլա-քուլա բարձրանում փողոցում՝ պարուրելով կեղտոտ, մոխրագույն սները: Ի՞նչը կարող է ավելի պրոզայիկ և կոպիտ նյութական լինել: Ի՞նչ օգուտ բացառիկ ընդունակություններից, դոկտոր, եթե հնարավորություն չկա կիրառել դրանք: Հանցագործությունը տխուր է, գոյությունը՝ տխուր, աշխարհում ոչինչ չի մնացել բացի ձանձրույթից:

Այն է, բացել էի բերանս, որ առարկեի մենախոսությանը, երբ դուռը ուժգին թակեցին և սենյակ մտավ տանտիրուհին, պղնձե սկուտեղի վրա այցեքարտ մատուցելով:

— Ձեզ մի երիտասարդ աղջիկ է հարցնում, սըր, — ընկերոջս դիմեց տանտիրուհին:

— Միսս Մերի Մորսթեն, — պատասխանեց Հոլմսը — Հըմ, այդ անունն ինձ անձանոթ է: Միսիս Հադսոն, խնդրում եմ, ներս հրավիրեք միսս Մորսթենին: Մի հեռացեք, դուկտոր: Ցանկանում եմ, որ մնաք:

Գլուխ 2 — Ծանոթանում ենք գործին

Միսս Մորսթենը սենյակ մտավ թեթև, վստահ քայլերով, հանգիստ և անկաշկանդ պահվածքով: Շիկահեք, նուրբ, վայելչագեղ, անբասիր ճաշակով հագնված դեռատի աղջիկ էր: Բայց նրա հագուստներում նկատելի էր այն համեստությունը, եթե ոչ պարզությունը, որը վկայում էր նեղ պայմանների մասին: Հագին մուգ մոխրագույն, բրդյա զգեստ էր, առանց որևէ զարդարանքի և նույն մոխրագույն երանգի գլխարկ, որին թեթևակիորեն աշխուժացնում էր եզրի սպիտակ փետուրը: Դեմքը գունատ էր, իսկ դիմագծերը կանոնավորությամբ աչքի չէին ընկնում, փոխարենը՝ դեմքի արտահայտությունը գրավիչ էր և համակրելի, իսկ մեծ, կապույտ աչքերը լուսավորված էին խանդավառությամբ և բարության: Իր ժամանակին հանդիպել եմ երեք մայրցամաքների կանանց, բայց ինձ երբեք չի հաջողվել տեսնել մի դեմք, որն այդպես պարզ վկայեր հոգու վեհանձնության ու բարության մասին: Երբ միսս Մորսթենը նստեց Հոլմսի առաջարկաց աթոռին, նկատեցի, որ նրա ձեռքերն ու շուրթերը դողում են, հավանաբար, ներքին ուժեղ հուզմունքից:

— Ես եկել եմ հատկապես ձեզ մոտ, միստր Հոլմս, — սկսեց մեր հյուրը, — որովհետև դուք օգնել եք տիրուհուս՝ միսիս Մեսիլ Ֆորեսթերին, լուծելու ընտանեկան մի պատմություն: Նա մինչև հիմա չի կարողանում մոռանլ ձեր բարությունն ու խելքը:

— Միսիս Մեսիլ Ֆորեսթե՞րը, — մտածկոտ կրկնեց Հոլմսը: — Հիշում եմ, ինձ իսկապես հաջողվեց մի փոքր օգնել նրան: Դեպքը, սակայն, բավականին հասարակ էր:

— Միսիս Ֆորեսթերը այդ մասին այլ կարծիքի է: Բայց իմ գործի մասին այդ չէի ասի: Դժվարանում եմ ավելի տարօրինակ և անբացատրելի իրավիճակ պատկերացնել, քան այն, որտեղ հայտնվել եմ:

Հոլմսը շփեց ձեռքերը, աչքերը փայլեցին: Նստած տեղից առաջ թեքվեց և նրա խիստ գծագրված բազեի դիմագծերը համակ ուշադրություն արատահայտեցին:

— Շարունակեք ձեր գործը, — ասաց նա չոր, գործնական տոնով:

Ես անհարմար զգացի և աթոռից վեր կենալով ասացի.

— Ձեր թույլտվությամբ կարո՞ղ եմ գնալ:

Ի զարմանս ինձ, միսս Մորսթենը կանգնեցրեց ինձ, բարձրացնելով ձեռնոց հագած ձեռքը:

— Եթե ձեր ընկերը մնա, — ասաց նա, ինձ անգնահատելի ծառայություն կմատուցի:

Ես դարձյալ նստեցի, միսս Մորսթենը շարունակեց:

— Կարճ ասած, գործը հետևյալն է: Հայրս, որպես սպա, ծառայել է Հնդկաստանում՝ մի գորագնդում: Երբ շատ փոքր էի, ինձ ուղարկեց Անգլիա: Մայրս մահացել էր, Անգլիայում բարեկամներ չունեինք և հայրս ինձ տեղավորեց Էդինբուրգի լավագույն մասնավոր գիշերօթիկ դպրոցներից մեկում: Այնտեղ դաստիարակվեցի, մինչև դարձա տասնյոթ տարեկան: 1878 թվականին հայրս, այդ ժամանակ արդեն գնդի ավագ սպա, միամսյա արձակուրդ ստացավ և եկավ Անգլիա: Լոնդոնից ինձ հեռագրեց, որ բարեհաջող հասել, իջևանել է «Լեհեն» հյուրանոցում և անհամբեր ինձ է սպասում: Հեռագրի ամեն մի բառը, ես դա լավ եմ հիշում, շնչում էր հայրական սիրով և մտահոգությամբ: Լոնդոն ժամանելով, կայարանից ուղիղ հյուրանոց մեկնեցի: Այնտեղ ինձ հայտնեցին, որ կապիտան Մորսթենը, իսկապես իջևանել է իրենց մոտ, բայց նախորդ օրը երեկոյան գնացել է ինչ-որ տեղ և մինչև այժմ չի վերադարձել: Ամբողջ օրը նրանից լուրի էի սպասում: Երեկոյան հյուրանոցի կարգադրիչի խորհրդով դիմեցի ոստիկանություն: Հաջորդ օրը բոլոր թերթերում հայտարարություն հայտնվեց հորս անհետացման մասին, բայց ոչ մի պատասխան չստացանք: Այդ օրվանից մինչև հիմա ոչ մի խոսք չեմ լսել դժբախտ հորս մասին: Նա Անգլիա վերադարձավ, հուսալով տեսնել աղջկան, ապրել հանգիստ կյանքով, իսկ փոխարենը . . . — միսս Մորսթենը ձեռքը սեղմեց կոկորդին, և խեղդված հեկեկոցը խոսքը կիսատ թողեց:

— Դա ե՞րբ է պատահել, — հարցրեց Հոլմսը բացելով նոթատետրը:

— Հայրս անհետացավ 1878 թվականի դեկտեմբերի 3-ին, մոտավորապես տասը տարի առաջ:

— իսկ նրա իրե՞րը:

— Դրանք մնացին հյուրանոցում: Այնտեղ ոչ մի բան չկար, որ օգներ բացահայտելու նրա անհետացումը՝ հագուստներ, գրքեր, հազվագյուտ շատ իրեր Անդամանյան կղզիներից: Հայրս որպես սպա ծառայել էր բանտի պահակային զորամասում:

— Լոնդոնում բարեկամներ ունե՞ր:

— Գիտեի մենակ մեկին՝ մայրը Շոլտոյին: Նրանք միասին ծառայել էին Բոմբեյի երեսունչորսերորդ հետևակային գնդում: Մայրը գորացրվել և Անգլիա էր վերադարձել հորս մեկնելուց քիչ առաջ և տեղավորվել էր Ապպեր-Նորվուդում: Մենք, իհարկե, կապվեցինք հետը, բայց պարզվեց, որ նա նույնիսկ չէր էլ լսել ընկերոջ վերադարձի մասին:

— Շատ տարօրինակ գործ է, — նկատեց Հոլմսը:

— Բայց ամենահետաքրքիրը առջևում է: Վեց տարի առաջ, հենց 1882 թվականի մայիսի չորսին, «Թայմսում» հայտարարություն հայտնվեց, որ փնտրվում է միսս Մորսթենը և հանուն նրա շահերի խնդրել էին հասցեն հայտնել «Թայմսին»՝ Այդ ժամանակ նոր էի ընդունվել միսիս Սեսիլ Տորեսթերի մոտ՝ որպես ընկերակցուհի: Նա խորհուրդ տվեց հասցես ուղարկել հայտարարությունների բաժին: Եվ հենց այն օրը, երբ հասցես հայտնվեց թերթում, փոստով ծանրոց ստացա՝ սովորաբար մի ոչ մեծ տուփ: Մեջը կար շատ խոշոր և գեղեցիկ մի մարգարիտ, բայց ծանրոցում ոչ մի, նույնիսկ ամենափոքր բացատրագիր անգամ չկար, թե ումից է նվերը: Եվ մինչև հիմա,

ամեն տարի հենց այդ նույն օրը, փոստով ստանում եմ ճիշտ այդպիսի տուփ, ճիշտ այդպիսի մարգարիտով, առանց նշելու, թե ով է ուղարկողը: Մարգարիտը ցույց եմ տվել ոսկերչին, և նա ասել է, որ դա հազվագյուտ և թանկարժեք տեսակի է: Դուք էլ հիմա կտեսնեք, թե ինչ գեղեցիկ է:

Միսս Մորսթենը բացեց տափակ տուփը. այնտեղ վեց հիանալի մարգարիտ կար, որոնց նմանը չէի տեսել:

— Շատ հետաքրքիր է, — ասաց Շերլոկ Հոլմսը: — Իսկ ձեզ հետ էլ ուրիշ ոչինչ չի՞ եղել:

— Եղել է, և այն էլ այսօր: Դրա համար էլ եկա ձեզ մոտ: Առավոտյան ստացա ահա այս նամակը: Կարդացեք:

— Շնորհակալ եմ, — ասաց Հոլմսը վերցնելով նամակը: — Խնդրեմ, ծրարը ևս: Կնիքի վրա՝ Լոնդոն, Հարավ-Արևմուտք, 7-ը հուլիսի: Հըմ: Անկյունում՝ տղամարդու բթամատի հետք: Հավանաբար՝ փոստատարինը: Թուղթը բարձր որակի է: Ծրարի տրցակը՝ վեց պենս: Ծաշակով մարդ է, համենայն դեպս, այս տեսակետից: Հետադարձ հասցե չկա: «Այս երեկո եղեք «Լիցեում» թատրոնի մուտքից ձախ, երրորդ սյան մոտ: Եթե վախենում եք, հետներդ երկու ընկեր բերեք: Ձեզ հետ անարդարացի են վարվել: Դա պետք է ուղղվի:

Ոստիկանությանը մի հայտնեք: Եթե ոստիկանությունը խառնվի, ամեն ինչ կտապալվի: Ձեր բարի կամեցող:» Այո, իսկապես: Գերագանց, հիանալի հանելուկ է: Ի՞նչ եք պատրաստվում անել, միսս Մորսթեն:

— Հենց դա էլ ցանկանում եմ ձեզ հարցնել:

— Այդ դեպքում, անկասկած, այսօր գնում ենք նամակում մատնանշված տեղը: Դուք, ես և, իհարկե, դոկտոր Ուոտսոնը: Նա ամենահարմար մարդն է: Ձեր բայրացական անձանոթը գրում է, որ դուք հետներդ տանեք ձեր երկու ընկերներին: Իսկ մենք Ուոտսոնի հետ մեկ անգամ չէ, որ աշխատել ենք միասին:

— Իսկ դոկտոր Ուոտսոնը կհամաձայնի՞ գալ, — հարցրեց միսս Մորսթենը, և ես նրա ձայնում համարյա աղերսանք լսեցի:

— Պատիվ կհամարեմ և երջանիկ կլինեմ, եթե կարողանամ ձեզ օգտակար լինել, — ասացի ես ոգևորված:

— Դուք երկուսով այնքան բարի եք իմ հանդեպ, — ասաց միսս Մորսթենը:

— Ես շատ մեկուսացված եմ ապրում, ընկերներ չունեմ, որոնց օգնության վրա կարողանամ հույս դնել: Ուրեմն, կգամ ժամը վեցին մոտ: Դա ուշ չի՞ լինի:

— Միայն չուշանաք, — պատասխանեց Հոլմսը: — Մի հարց էլ ունեմ: Ասացեք, այս նամակն էլ գրված է նույն ձեռագրով, ինչ որ մարգարիտով տուփի վրայի հասցեն:

— Նամակներն ինձ մոտ են, — պատասխանեց միսս Մորսթենը՝ պայուսակից հանելով մի քանի թուղթ:

— Իդեալական այցելու եք: Լավ ինտուիցիա ունեք: Հապա, տեսնենք:

Նա թղթերը փռեց սեղանին և սկսեց մեկը մյուսի հետևից ուշադրուցյամբ զննել:

— Ձեռագիրն ամեն տեղ, բացի նամակից, փոխված է, — շուտով ասաց նա:

— Բայց ոչ մի կասկած չի կարող լինել, բոլոր հասցեները և նամակը գրել է նույն մարդը: Նայեք, «l»-ն ամեն տեղ նույնն է, ուշադրություն դարձրեք նաև, ինչպես է ծոված վերջին «s»-ը: Ե՛վ այստեղ, և՛ այնտեղ երևում է նույն ձեռքը: Ես

չէի ցանկանաւ ձեր մեջ գուր հույսեր արթնացնել, բայց ասացեք, միսս Սորսթեն, նմանություն չկա՞ւ արանց և ձեր հոր ձեռագրի միջև:

— Ոչ մի:

— Այդպէս էլ գիտեի: Ուրեմն, այսպէս, վեցին ձեզ կսպասենք: Թույլ տվեք ինձ մոտ մնան այս թղթերը: Ես դարձյալ կմտածեմ ձեր գործի մասին: Մենք ժամանակ ունենք: Հիմա դեռ երեքն անց կես է: Ցտեսություն:

— Ցտեսություն, — պատասխանեց մեր հյուրը և իրանակալի մեջ թաքցնելով մարգարիտով տուփը, երկուսիս էլ նայելով իր բարի, վճիտ աչքերով, գնաց: Կանգնելով պատուհանի մոտ, նայեցի, թե նա ինչպէս է հեռանում թեթև, սահուն քայլքով, մինչև մոխրագույն գլխարկը և սպիտակ փետուրը կորան գորշ ամբոխի մեջ:

— Ինչ հիասքանչ օրիորդ է, — բացականչեցի ես՝ շրջվելով ընկերոջս կողմը: Հոլմար դարձյալ վառեց իր ծխամորճը և, փակելով աչքերը, ետ ընկավ բազկաթոռի թիկնակին:

— Հիասքանչ, — կրկնեց նա անտարբեր: — Ես չնկատեցի:

— Ոչ, Հոլմա, դուք մարդ չեք, դուք հաշվիչ մեքենա եք, — բացականչեցի ես: — Դուք երբեմն ապշեցնում եք:

Հոլմար մեղմ ժպտաց:

— Ամենագլխավորը՝ թույլ չտալ, որ մարդու առանձնահատկությունները ազդեն ձեր դատողության վրա: Այցելուն ինձ համար որոշակի տվյալ է, խնդրի բաղադրամասերից մեկը: Զգացմունքները թշնամի են հստակ մտածողությանը: Հավատացեք, ամենահիասքանչ կինը, որին ես երբևիցե տեսել եմ, կախաղան է հանվել իր երեք զավակներին սպանելու համար: Ապահովագրական վկայականով դրամ ստանալու համար թունավորել էր նրանց: Իսկ իմ ծանոթների մեջ ամենավանող արտաքին ունեցողը մի բարեգործ է, որը լոնդոնյան չքավորների վրա ծախսել է մոտավորապէս քառորդ միլիոն:

— Բայց այս անգամ . . .

— Երբեք բացառություն չեմ անում: Բացառությունները հերքում են կանոնը: Լսեք, Ուոտսոն, ձեզ երբևէ հարկ եղել է բնավորությունն ուռուտմնասիրել ձեռագրի միջոցով: Ի՞նչ կարող եք ասել սրա մասին:

— Ձեռագիրը ընթեռնելի է և կանոնավոր, — պատասխանեցի ես, — ըստ երևույթին, պատկանում է գործարար և ուժեղ բնավորության տեր մարդու:

Հոլման օրորեց գլուխը:

— Նայեցեք բարձր տառերին, — ասաց նա: — Նրանք հազիվ են հասնում տողերին. «d»-ն կարելի է ընդունել «a»-ի տեղ, իսկ «l»-ն՝ «e»-ի: Ուժեղ բնավորության տեր մարդը կարող է գրել շատ անընթեռնելի, բայց նրա երկար տառերը իսկապէս բարձր են: Մեր թղթակիցը «k»-ն ամենուրեք տարբեր է գրում, իսկ մեծատառերով կարելի է ենթադրել, որ գոռոզամիտ է: Դե լավ, ես գնում եմ: Ինձ հարկավոր է որոշ տեղեկություններ հավաքել: Իմ բացակայության ժամանակ առաջարկում եմ կարդալ այս գիրքը՝ հիանալի ստեղծագործություն է: Ուինվուդ Ռիդի «Մարդու նահատակությունն» է: Կվերադառնամ մեկ ժամից:

Գիրքը ձեռքիս նստել էի պատուհանի մոտ, բայց մտքերս հեռու էին հեղինակի համարձակ դատողություններից: Հիշեցի մեր նոր այցելուին, նրա ժպիտը, գեղեցիկ, կրծքային ձայնը: Անբացատրելի գաղտնիքը մթազնել էր նրա կյանքը: Տասնյոթ տարեկան էր, երբ անհետացավ հայրը, ուրեմն, հիմա

քանյոթ տարեկան է, հիանալի տարիք, եթե պատանեկան երկչուտ ամաչկոտությունն արդեն անցել է, և կյանքը մի փոքր պաղեցրել է գլուխը: Այսպես նստել և մտորում էի, քանի դեռ իմ մտքերը չընդունեցին այնքան վտանգավոր ուղղություն, որ ես շտապեցի գրասեղանի մոտ և կատաղած նետվեցի նոր լույս տեսած ախտաբանության դասագրքի վրա: Վիրավորված ոտքով և դատարկ քսակով զինվորական հասարակ վիրաբույժս ինչպես համարձակվեցի երազել նման բաների մասին: Նա ընդամենը մի որոշակի տվյալ էր, ինդրի բաղադրամասերից մեկը, ոչինչ ավելի: Եթե իմ ապագան մթին է, ապա ավելի լավ է դրա մասին մտածել սառնասրտորեն, ինչպես վայել է սողամարդուն, ոչ թե գունազարդել երևակայության դատարկ խաղով:

Գլուխ 3 — Լուծում ենք փնտրում

Հուլիսը վերադարձավ հինգն անց կեսին: Նա կայտատ էր, ուրախ ու զվարթ՝ այսպես էին սովորաբար վերջանում նրա սև մելամաղձության նուպաները:

— Այս գործում հանելուկային ոչինչ չկա, — ասաց նա, ձեռքիցս վերցնելով իր համար լցրած թեյի բաժակը: — Փաստերն, ըստ երևույթին, բացատրության միայն մի հնարավորություն են տալիս:

— Արդեն գտա՞ք լուծումը:

— Դե, պնդելը բավական վաղ է: Առայժմ գտա մի արտակարգ կարևոր մանրամասն: Դա թույլ է տալիս շատ բան ենթադրել, բայց պարզելու էլ դեռ շատ բան կա: Աչքի անցկացնելով «Թայմսի» համարները, հենց նոր հայտնաբերեցի, որ Բոմբեյի երեսունչորսերորդ հետևակային գնդի Ապպեր-Նորվուդի մայոր Շոլտոն մահացել է 1882թվականի ապրիլի 28-ին:

— Հավանաբար ինձ բթամտի տեղ կդնեք, Հուլիս, բայց ես այդտեղ ոչ մի արտակարգ բան չեմ տեսնում:

— Չե՞ք տեսնում: Դուք ինձ զարմացնում եք, Ուոտսոն: Դե լավ, գործին այլ կերպ նայենք: Եվ այսպես, կապիտան Մորսթենն անհետացավ: Միակ մարդը, որին նա կարող էր այցելել՝ մայոր Շոլտոն էր: Բայց մայոր Շոլտոն ասաց, որ ինքը Մորսթենի՝ Անգլիա ժամանելու մասին ոչինչ չի լսել: Իսկ չորս տարի անց մայորը մահանում է: Մահից մեկ շաբաթ անց կապիտան Մորսթենի աղջիկը թանկարժեք նվեր է ստանում: Մեկ տարի անց՝ ևս մեկը, հետո՝ հաջորդը: Եվ այսպես՝ մի քանի տարի շարունակ, մինչև նամակ ստանալը, որտեղ գրված է, որ միսս Մորսթենի հետ անարդարացի են վարվել: Սա, անտարակույս, ակնարկ է հոր անհետացման մասին: Եթե Շոլտոնի ժառանգորդներն ինչ-որ գաղտնիք չիմանային և չցանկանային վարձահատույց լինել միսս Մորսթենին, ինչու՞ պետք է թանկարժեք նվերներ ուղարկեին նրան: Դուք կարո՞ղ եք այլ կերպ բացատրել այս փաստերը:

— Ինչ տարօրինակ հատուցում է: Եվ ինչ տարօրինակ ձևով է մատուցվում: Ինչու՞ է իր նամակը հիմա ուղարկել և ոչ վեց տարի առաջ: Բացի այդ, նամակում ասվում է, որ անարդարությունը պետք է ուղղել: Ի՞նչ անարդարություն: Չե՞ որ չի կարող պատահել, որ նրա հայրը ողջ լինի: Ուրեմն, նամակագիրն այլ բան նկատի ունի:

— Այո, այս պատմության մեջ դեռ շատ մթին տեղեր կան, — մտածկոտ ասած Հուլիսը: — Բայց մեր այսօրվա ուղևորությունը ամեն բան կբացահայտի:

Ահա և միսս Մորսթենը: Լսու՛մ եք, կառքը մոտեցավ: Պատրա՛ստ եք: Գնանք: Արդեն վեցն անց կես է:

Վերցրի գլխարկս և ամենահաստ ձեռնափայտս: Նկատեցի, որ Հովմար գրասեղանի դարակից վերցեց ատրճանակը և դրեց գրպանը: Պարզ էր. մեր երեկոյան ուղևորությունը համարում էր լուրջ գործ:

Միսս Մորսթենի հագին մուգ թիկնոց կար, սիրունիկ դեմքը գունատ էր, բայց հանգիստ: Նա թույլ սեռի ներկայացուցիչ չէր լինի, եթե մեր տարօրինակ ճանապարհորդությունը մոտը տազնապ չառաջացներ, բայց ինքնատիրապետումն ապշեցուցիչ էր, և պատրաստակամ պատասխանում էր Շերլոկ Հոլմսի հարցերին:

— Մայր Շոլտոն հորս մտերիմ ընկերն էր: Իր նամակներում հայրս միշտ գրում էր մայրի մասին: Որպես սպա նրանք ծառայել էին Անդամանյան կղզիների պահնորդական զորքերում և միասին շատ ժամանակ էին անցկացրել: Ի միջի այլոց, հորս գրասեղանի դարակում գտնվեց մի շատ տարօրինակ փաստաթուղթ: Ոչ ոք չկարողացավ հասկանալ, թե դա ինչ է: Չգիտեմ, դա կապ ունի՞ արդյոք այս գործի հետ, թե ոչ, բայց, համենայն դեպս, հետս վերցրել եմ: Գուցե ձեզ կհետաքրքրի: Ահա:

Հովմար բացեց մի քանի տակ ծալած թուղթը և զգուշորեն հարթեց ծնկի վրա: Ապա սկսեց խոշորացույցի օգնությամբ ուշադիր զննել:

— Թուղթը պատրաստված է Հնդկաստանում, — ասաց նա: — Ինչ-որ ժամանակ ամրակներով ամրացված է եղել տախտակին: Թղթի վրա ուրվագծված է ինչ-որ մի մեծ տան կողամասը՝ մեծաքանակ սենյակներով, միջանցքներով և անցումներով: Մի տեղ կարմիր թանաքով խաչ է արված, նրա վերևը՝ մատիտագիր կիսաջնջված «3, 37 ձախից» Ձախ անկյունում տարօրինակ մի հիերոգլիֆ կա՝ մի շարքով կողք-կողքի արված չորս խաչի նման, որոնք ծայրերով միանում են իրար, դրանց տակ կոպիտ, խոշոր տառերով գրված է. Չորսի նշան՝ Ջոնատան Սմոլ, Մոհամեդ Սինգ, Աբդուլա Խան, Աքբար» Չեմ հասկանում, սա ի՞նչ կապ կարող է ունենալ ձեր պատմության հետ: Սակայն, հավանաբար, սա կարևոր փաստաթուղթ է, այն խնամքով պահել են նոթատետրում, քանի որ երկու կողմերն էլ մաքուր են:

— Հենց նոթատետրում էլ գտել ենք:

— Դա չկորցնեք միսս Մորսթեն: Հնարավոր է, մեզ դեռ պետք կգա: Սկսում եմ կարծել, որ այս գործն ավելի բարդ և խճճված է, քան թվում էր սկզբում: Ես պետք է ամեն ինչ նորից ծանրութթես անեմ:

Կառք նստեցինք: Հովմար թիկնեց նստարանին: Նրա խոժոռված հոնքերից և բացակայող հայացքից հասկացա, որ լարված մտածում է: Ես միսս Մորսթենի հետ կիսաձայն խոսում էի մեր ճանապարհորդության և այն մասին, թե ինչ ավարտ կունենա դա, իսկ մեր ուղեկիցը ամբողջ ճանապարհին քար լռություն էր պահպանում:

Մեպտեմբերյան երեկո էր, մոտավորապես ժամը յոթը: Վաղ առավոտից զարշելի եղանակ էր: Ու հիմա մեծ քաղաքը պատված էր մշուշի քողով, որը մերթ ընդ մերթ փոխակերպվում էր անձրևի: Մռայլ կեղտագույն ամպերը կախվել էին կեղտոտ փողոցների վրա: Ստրենդե փողոցի լապտերներն աղոտանում էին դեղին մշուշապատ բծերով՝ խոնավ մայթերին զցելով անկայծող շրջանակներ: Խանութների լուսավորված ապակիները հետիոտներով լի փողոցի վրա էին զցում լույսի թույլ, երբեմն շողեր, որոնց

մեջ, ինչպես սպիտակ ամպ, քուլա-քուլա բարձրանում էր մշուշը: Լույսի նեղ ցուլքերում առկայծող տխուր ու բերկրալի, անհրապույր և ուրախ դեմքերի անվեջանալի շարանում ինչ-որ սահմակեցուցիչ բան կար. ասես ուրվականների թափոր էր շարժվում: Ինչպես և մարդկային ողջ ցեղը, նրանք էլ ծնվում էին խավարից և դարձյալ սուզվում խավարի մեջ: Ես տպավորվող մարդ չեմ, բայց այս ճնշող թախծոտ երեկոն և մեր այս տարօրինակ ճանապարհորդությունը ազդեցին նյարդերիս վրա, և ես ինձ վատ զգացի: Տեսա, որ միսս Մորսթենն էլ է նույնը զգում: Թվում էր, թե միայն Հոլմսը ոչինչ չի նկատում: Նա ծնկներին էր դրել բացված նոթատետրը և գրպանի լապտերի լույսի ներքո մերթ ընդ մերթ այնտեղ ինչ-որ թվեր էր գրում և նշումներ կատարում:

«Լիցեում» թատրոնի կողամուտքերի մոտ արդեն շատ մարդ էր հավաքվել, գլխավոր մուտքին անվերջանալի հոսքով մոտենում էին երկտեղանոց կառքեր, որտեղից դուրս էին գալիս օսլայած ճերմակ ժանեկակրծկալներով տղամարդիկ և շալերի մեջ փաթաթված ու ադամանդներից շողացող կանայք: Հազիվ հասանք հանդիպման վայրը՝ երրորդ սյանը, երբ նրանցից անջատվեց կառապանի հագուստով կարճահասակ, թուխ, չափազանց աշխույժ մի մարդ և մոտեցավ մեզ:

— Դուք միսս Մորսթենի հե՞տ եք, — հարցրեց նա:

— Ես միսս Մորսթենն եմ, իսկ այս ջենտլմենները իմ ընկերներն են:

Անձանոթը մեզ նայեց սևեռուն, թափանցող հայացքով:

— Ներեցեք ինձ, միսս, բայց խնդրում եմ, ճիշտ ասեք, որ ձեր ընկերներից ոչ մեկը չի ծառայում ռասիկանությունում, — պնդեց նա:

— Ճիշտ եմ ասում, — հանգիստ պատասխանեց միսս Մորսթենը:

Մարդը բարձր սուլեց. մի տղա մեզ մոտեցրեց փողոցի մյուս կողմում կանգնած կառքը և բացեց դուռը: Մեր գրուցակիցը ցատկեց կառապանի կողքին, իսկ մենք ներսում նստեցինք: Կառապանը թափահարեց սանձերը, և կառքը մեծ արագությամբ սլացավ մշուշի միջով:

Իրավիճակը մի փոքր անսովոր էր: Մենք գնում էինք հայտնի չէ՛ ուր, և չգիտես ինչու: Կամ այս պատմությունը միստիֆիկացիա էր, ինչ-որ մեկի կատակը, որը պնդելու ոչ մի հիմք չունեինք, կամ էլ, որն ավելի հավանական էր, մեզ սպասվում էր ինչ-որ շատ կարևոր մի բան իմանալ: Միսս Մորսթենը իրեն սովորականի պես զուսպ ու հանգիստ էր պահում: Փորձում էի նրան զվարթացնել Ադվանստանի իմ արկածներով, բայց, ճիշտն ասած, անձանք ինձ այնպես էր անհանգստացրել այս ճամփորդուցյունը և այնպիսի հետաքրքրասիրություն էր համակել, որ պատմությունս մի փոքր խառնափնթոր էր ստացվում: Միսս Մորսթենը մինչ այսօր էլ պնդում է, որ այն ժամանակ պատմել եմ հետաքրքիր մի դեպք, թե ինչպես մի անգամ, ուշ գիշերին վրանս է խցկվել մի հրացան, և ես զույգ կրակոցով գետնել եմ նրան: Սկզբում դեռ կարողանում էի հետևել, թե ուր ենք գնում, բայց շուտով, շնորհիվ մեր սլացած արագության, մշուշի, ինչպես նաև Լոնդոնը վատ իմանալու պատճառով դադարեցի կողմնորոշվել և կարող եմ միայն ասել, որ բավական երկար գնացինք: Սակյն Շերլոկ Հոլմսը չէր կորցրել ուղղությունը և հաճախ շշուկով ասում էր մեր սլացած հրապարակների ու փողոցների անունները:

— Ռոչեսթեր-րոուդ, ասաց նա: — Ահա և Վինսենթ-սկվերը: Անցնում ենք Վոքսհոլ-բրիջ-րոուդով: Երևի գնում ենք Սուրեյ: Այո, հավանաբար, այնտեղ:

Անցնում ենք կամրջով: Նայեք, ներքևում ջուր է փայլփլում: Եվ իսկապես, ներքևում փայլփլում էր Թեմզայի գորշ ջուրը, որի մեջ արտացոլվում էին վառվող լապտերները, բայց ահա կառքը մյուս ափին է, սլանում է նեղ, ոլորուն, փոքրիկ փողոցների խճճված բավիղներով:

— Ուոնդսուրենթ-րոուդ, — ասում էր Հովմար: — Փրայորի-րոուդ, Լարկհոլ-լեյն, Սթոկհուել-փիլեյս, Ռոբեր-սթրիթ-Քոուլդ-հարբորն-լեյն: Իսկ մեր ճանապարհորդության նպատակակետը, թվում է, քաղաքի ոչ պերճաշուկ մասում է: Մենք իսկապես անցանք Լոնդոնի կասկածելի և ամենամռայլ մասերից մեկով: Աջից և ձախից ձգվում էին աղյուսե տների տխուր շարքերը, որոնց միապաղաղությունը խախտում էին միայն փողոցների անկյուններում գտնվող պայծառ լուսավորված անվայելչատես պանդոկները: Հետո անցանք փոքրիկ պարտեզներով երկհարկանի ամառանոցները, հետո անվերջանալի նոր անճաշակ աղյուսե տների շարքը՝ հրեշավոր շոշափուկներ, որ հսկա քաղաքը քաշքշում էին տարբեր կողմեր: Վերջապես կառքը կանգնեց նոր փողոցի երրորդ տան մոտ: Հարևան շենքերից և ոչ մեկը բնակեցված չէր: Այն, որի մոտ կանգնեցինք, նույնպես խավար էր, ինչպես կողքինները, չհաշված խոհանոցի լուսավոր պատուհանը: Մենք բախեցինք դուռը և այն անմիջապես բացեց դեղին չալմայով, սպիտակ, լայն զգեստով, դեղին լարագոտիով գոտևորված հնդիկ սպասավորը: Արտասովոր էր այդ տարօրինակ պատկերը տեսնել լոնդոնյան երրորդ կարգի մերձքաղաքային տան դռների մեջ:

— Մահիբը սպասում է ձեզ, — ասաց նա, և հենց նույն պահին ներսի սենյակից լսվեց բարակ, ականջ ծակող ձայն .

— Ուղեկցեք նրանց ինձ մոտ: Անհապաղ ուղեկցեք:

Գլուխ 4 — Ճաղատ մարդու պատմությունը

Թույլ լուսավորված և համարյա դատարկ մռայլ միջանցքով հետևեցինք հնդիկին: Աջ կողմի դռան մոտ նա կանգնեց և այն կրկնի վրա բացեց մեր առջև: Աչքներիս խփեց վառ դեղին լույսը: Մենյակի մեջտեղում կանգնած էր ճաղատ, երկարուկ գլխով մի մարդ: Փայփլուն ճաղատը երիզում էին շեկ մազերը, ինչպես լեռան մերկ գագաթը՝ սոճիները: Նա կանգնած շփում էր ձեռքերը, դիմագծերը մշտական շարժման մեջ էին . մեկ ժպտում էր, մեկ՝ խոժոռվում, ոչ մի բոպե հանգիստ չմնալով: Բնությունը նրան պարզել էր կախ ընկած շրթունքով, բացառիկ դեղին և անհավասար ատամներով, որոնք նա ապարդյուն փորձում էր ծածկել , անդադար շոյելով դեմքի ստորին մասը: Չնայած այդքան ցայտուն ճաղատությանը՝ երիտասարդի տպավորություն էր թողնում: Եվ իրականում էլ մոտ երեսուն տարեկան էր:

— Ձեր տրամադրության տակ եմ, միսս Մորսթեն, բարձր, բարակ ձայնով կրկնեց նա: — Ձեր տրամադրության տակ եմ, պարոնայք: Խնդրեմ, մտեք ճգնավորիս մենախուցը: Միսս, ինչպես տեսնում եք, խուցս փոքր է, բայց դրա փոխարեն ամեն ինչ կահավորել եմ իմ ճաշակով: Արվեստի օազիս է՝ հարավային Լոնդոնի գարշելի ամայության մեջ:

Մենք ցնցված էինք այն սենյակի տեսքից, ուր նա մեզ հրավիրեց: Այդ մռայլ տան մեջ սենյակը նմանվում էր պղնձե շրջանակով անբիծ ադամանդի . պատուհաններին կախված էին մետաքսե վարագույրներ, գորելեններ, ծանր

շրջանակներով նկարներ, արևելյան սկահակներ: Սաթե, սև երանգներով հատակի փափուկ և խավոտ գորգը այնքան հաստ էր, որ ոտքերս թաղվում էին մինչև կոճերը, ինչպես մուշտակի մեջ: Գորգի վրա զգված էին վագրի երկու մեծ մորթիներ, որոնք անկյունում դրված խոշոր նարգիլենների հետ սենյակում ստեղծում էին արևելյան շքեղության զգցողություն: Սենյակի կենտրոնում, համարյա երևացող ոսկե լարով կախված էր աղավնաձև արծաթե լամպը: Այն վառվում էր, սենյակը լցնելով նուրբ, թեթև բուրմունքով:

— Իմ անունը միստր Թադեուշ Շոլտո է, — արտաբերեց մարդուկը, առաջվա պես ցնցվելով և ժպտալով: — Դուք, իհարկե, միսս Մորսթենն էք: Իսկ այս ջենտլմենները . . .

— Միստր Շերլոկ Հոլմս և դոկտոր Ուոտսոն:

Օ՛, — բացականչեց մարդուկը բացահայտ ուրախությամբ: — Իսկ բժշկի մոտ լսափողակ կա՞: Ձեզ կարելի՞ է մի բան խնդրել: Դուք այդքան սիրալիր չե՞ք լինի: Պատկերացնո՞ւմ եք, կասկած ունե՞մ, որ սրտիս միտրալ փականը կարգին չէ: Աորտայի վերաբերյալ չեմ անհանգստանում, բայց, այ, միտրալ փականը: Կցանկանայի իմանալ ձեր կարծիքը:

Լսեցի նրա սրտի զարկերը և նորմալից ոչ մի շեղում չգտա, չհաշված որ մարդուկը ինչ-որ բանից մահու չափ վախեցած էր՝ դողացնում էր ոտքից գլուխ:

— Միտրալ փականը կարգին է, — ասացի ես: — Վախենալու առիթ չունեք:

— Պետք է ներքե հուզմունքիս համար, միսս Մորսթեն, բարեկրթորեն ասաց մարդուկը: — Ես մեծ տառապյալ եմ: Եվ արդեն վաղուց եմ կասկածում, որ իմ միտրալ փականը ինչ-որ կարգին չէ: Եվ ուրախ եմ լսելու, որ կասկածներս անհիմն են: Եթե ձեր հայրը, միսս Մորսթեն, խնայեք իր սիրտը, նա դեռ ողջ կլինեք:

Նրա կոպիտ և աննրբանկատ վերաբերմունքը այդքան նուրբ խնդրի նկատմամբ ինձ այնպես զայրացրեց, որ հազիվ չապտակեցի նրան: Միսս Մորսթենը նստեց. նա այնպես գունատվեց, որ նույնիսկ շրթունքները սպիտակեցին:

— Ձգում էի, որ հայրս կենդանի չէ, — խոսեց միսս Մորսթենը:

— Ձեզ ամեն, ամեն ինչ կբացատրեմ, — ասաց մարդուկը: — Ավելին, կուղղեմ ձեզ բաժին հասած անարդարությունը: Դա անպայման կանեմ, ինչ էլ որ ասելու լինի իմ եղբայր Բարթոլոմյուն: Շատ ուրախ եմ տանը տեսնելու ձեր ընկերներին, ոչ միայն որպես թիկնապահներ, այլ որպես այն ամենի վկաներ, ինչ պատրաստվում եմ այսօր ասել ու անել: Մենք երեքով ի վիճակի ենք վճռական դիմադրություն ցույց տալ եղբայր Բարթոլոմյունին: Բայց վկաներ թող չլինեն ոչ ոստիկանները ոչ էլ ընթերակաները: Առանց կողմնակի մարդականց էլ մենք ամեն ինչ կհարթենք: Ոչ մի բան այնպես չի զայրացնում եղբորս՝ Բարթոլոմյունին, ինչպես հրապարակումը, — ասաց մարդուկը և նստեց ցածր բազմոցին՝ հարցական մեզ հանելով իր կարճատես, ջրակալած, կապույտ աչքերը:

— Ինչ վերաբերվում է ինձ, — ասաց Շերլոկ Հոլմսը, — ապա պատրաստ եմ ձեզ հավատացնել, որ ձեր ասած ամեն մի խոսքը կպահեմ իմ մեջ:

Ի նշան համաձայնության ես ևս գլխով արեցի:

— Դե, հիանալի է, հիանալի: Միսս Մորսթեն, թույլ կտա՞ք ձեզ մի բաժակ կյանտի կամ տոկայական առաջարկել: Ուրիշ գինի չեմ պահում: Կհրամայե՞ք բացել շիշը: Ո՞չ: Այդ դեպքում, հուսով եմ, դուք չե՞ք առարկի եթե ծխեմ: Ձեզ չի՞

անհանգստացնի արևելյան բալզամի բույրով ծուխը: Ես մի փոքր նյարդայնանում եմ, իսկ իմ նարգիլեն անզուգական հանգստացնող միջոց է:

Նա մեծ անոթին ամրացրեց ծխամորճը, և ծուխը ուրախ քլթթված վարդագույն ջրում: Մենք նստել էինք կիսաշրճանաձև, կզակներս ավերիս հենած, իսկ փայլող գմփեթածն ճաղատով տարօրինակ մարդը նստել էր կենտրոնում և ջղաձգորեն ծխում էր նարգիլեն:

Որոշելով ձեզ ուղարկել այդ հրավիրատումսը, — ասաց նա վերջապես, — կարող էի, իհարկե, նամակում գրել իմ հասցեն, բայց վախենում էի, որ դուք անուշադրության կմատնեք խնդրանքս և ձեզ հետ կբերեք ոչ այն մարդկանց: Այդ պատճառով, ինձ թույլ տվեցի ձեզ ժամադրել թատրոնի մուտքի մոտ, սպասավորիս՝ Ուիլյամի հետ, որին լիովին վստահում եմ: Նա հրահանգ ուներ որևէ կասկածի դեպքում մենակ տուն գալ: Կներեք ինձ զգուշության համար, բայց ես առանձնության հակված մարդ եմ և, եթե կարելի է այսպես ասել, նրբացած, իսկ ավելի պրոզայիկ բան, քան ոստիկանությունն է, չկա: Բնագրային զգվանք ունեմ կոպիտ մատերիալիզմի ամեն մի դրսևորման հանդեպ: Հազվադեպ եմ շփվում խաժամուժի հետ: Ինչպես տեսնում եք, ապրում եմ ամենանրբին միջավայրում: Ինձ կարող եմ համարել արվեստի հովանավոր: Դա իմ թուլությունն է: Պատին փակցված բնապատկերը իսկական Կորո է, և եթե գիտակը թերևս կարողանա վիճարկել ահա այս Սավվադոր Ռոզի բնօրինակ լինելը, ապա այն Բուգրոյի մասին կասկած չի կարող լինել: Ես ֆրանսիական ժամանակակից դպրոցի երկրպագու եմ:

— ներեցեք միսոր Շոլտո, — ասաց միսս Մորթսենը, — ես այստեղ եմ եկել ձեր խնդրանքով, դուք ուզում էիք ինձ ինչ-որ բան պատմել: Հիմա արդեն ուշ է, և ես կցանկանայի, որ մեր խոսակցությունը որքան հնարավոր է կարճ լիներ:

— Բայց դա, այնուամենայնիվ, որոշ ժամանակ կլիի, — պատասխանեց տանտերը: — Որովհետև մենք, անակասկած, պետք է գնանք Նորվուդ, եղբորս Բարթոլոմյուի մոտ: Կգնանք բոլորս միասին և կփորձենք կոտրել նրա համառությունը: Նա շատ է զայրացած ինձ վրա, քանի որ գործը ես վարեցի այնպես, ինչպես ավելի արդարացի գտա: Երեկ երեկոյան մենք իրար հետ թունդ վիճեցինք: Չեք կարող պատկերացնել, թե ինչ սարսափելի է դառնում եղբայրս, երբ զայրանում է:

— Եթե պետք է Նորվուդ գնանաք, ուրեմն ավելի լավ չէ՞ անմիջապես մեկնել, — համարձակվեցի առաջարկել ես:

Մարդուկն այնպես ծիծաղեց, որ ականջները կարմրեցին:

— Է՛, ոչ, դա դժվար թե ստացվի, — բացականչեց նա: — Չգիտեմ, թե ինչպես կընդունի եղբայրս ձեր ժամանումը: Այդ պատճառով պետք է սկզբում նախապատրաստեմ, բացատրեմ ձեզ, թե ինչ փոխադարձ հարաբերությունների մեջ ենք: Նախ և առաջ պետք է նշեմ, որ այս պատմության մեջ հանգամանքներ կան, որոնք ինձ համար գաղտնիք են մնում: Հետևաբար, կպատմեմ միայն այն, ինչ անձամբ ինձ է հայտնի:

Հայրս, ինչպես արդեն գուշակեցիք, մայրը Շոլտոն, ժամանակին ծառայել է Հնդկաստանում, գաղութի գորամասում: Տասնմեկ տարի առաջ անցել է թոշակի, վերադարձել Անգլիա և բնակություն հաստատել Ապպեր-Նորվուդի Պոնդիշերի-Լոջ կալվածքում: Հարստացել է Հնդկաստանում, տուն է վերադարձել արևելյան եզակի հարուստ հավաքածուով և հնդիկ ծառաների մի ամբողջ անձնակազմով: Այսպիսով, նա կարողացավ իր համար տուն գնել և

ապրել շքեղության մեջ: Ինձնից և երկվորյակ եղբորիցս՝ Բարթոլոմյուից բացի ուրիշ երեխաներ չուներ:

Լավ եմ հիշում, թե ինչ ապրումներ ունեցանք կապիտան Մորսթենի անհետանալուց հետո: Անհետացման մասին իմացանք թերթերից, և քանի որ կապիտան Մորսթենը հորս ընկերն էր, ես և եղբայրս կատարվածը քննարկում էինք նրա ներկայությամբ: Հայրս սովորաբար միանում էր մեզ և գուշակում, թե իրականում ինչ է կատարվել: Մենք բոլորովին չէինք կասկածում, որ կապիտանի անհետացման գաղտնիքը թաղված է նրա հոգում և միայն նրան է հայտնի Արթուր Մորսթենի ճակատագիրը:

Սակայն մենք գիտեինք, որ ինչ-որ գաղտնիք ճնշում է մեր հորը, ինչ-որ հավաստի վտանգ սպառնում է նրան: Շատ էր վախենում տնից մենակ դուրս գալ և որպես դոնապան Պոնդիշերի-Լոջում միշտ պահում էր նախկին պրոֆեսիոնալ բոնցկամարտիկների: Ուիլյամը, որն այստեղ ձեռք բերեց այստեղ, նրանցից մեկն է: Ինչ-որ ժամանակ նա Անգլիայի չեմպիոնն է եղել թեթև քաշայինների մեջ: Մեր հայրը երբեք չէր ասում, թե ինչից էր վախենում: Բայց վարքագծից պարզ էր, որ նա մահու չափ վախենում էր փայտե ոտքով մարդկանցից: Մի անգամ ատրճանակով կրակեց փայտե ոտքով մի մարդու վրա, որը, ինչպես պարզվեց, ընդամենը անվնաս մի վաճառական էր: Որպեսզի գործը կոծկեին, հարկ եղավ, որ հայրս մեծ գումար վճարեր: Եղբորս հետ հակված էինք դա համարել պարզապես մեր հոր քմահաճույքը, բայց հետագա իրադարձությունները ստիպեցին մեզ փոխել մեր կարծիքը: 1882 թվականի սկզբներին հայրս Հնդկաստանից նամակ ստացավ, որը կայծակի պես շանթեց նրան: Առավոտյան նախաճաշի ժամանակ բացեց նամակը և քիչ մնաց կորցնեք գիտակցությունը. այդ օրվանից մինչև մահը այդպես էլ չապաքինվեց: Ինչ կար այն նամակում, մենք այդպես էլ երբեք չիմացանք, բայց երբ նամակը նրա ձեռքում էր, ես հասցրեցի նկատել, որ դա ավելի շուտ մի կերպ խզբզված կարճ գրություն էր: Մեր հայրն արդեն երկար տարիներ տառապում էր խրոնիկ նյարդային հիվանդությամբ: Այժմ նրա վիճակը կտրուկ վատացավ, սկսեց աչքի առաջ նվաղել և ապրիլի վերջին բժիշկները մեզ նախազգուշացրին, որ լավանալու հույս չկա: Մեզ կանչեցին հայրիկի մոտ. նա ցանկանում էր մեզ իր վերջին խոսքը ասել:

Երբ սենյակ մտանք, հայրիկը նստած էր անկողնում, բարձերի մեջ, և ծանր շնչում էր: Նա մեզ խնդրեց դուռը կողպել և երկու կողմից մոտենալ անկողնուն: Բռնելով երկուսիս ձեռքերը, խոսեց սրտաբեկ հուզմունքով, և ես ու եղբայրս լսեցինք շշմեցուցիչ խոստովանությունը, որը կփորձեմ բառացի կրկնել:

«Միայն մի բան կա, — սկսեց նա, — որ այս հանդիսավոր պահին ճնշում է հոգիս: Դա անարդարությունն է, որ թույլ տվեցի խեղճ որբուկի՝ Մորսթենի աղջկա նկատմամբ: Անիծյալ ազահությունը, որն իմ ողջ կյանքում աննահնջ ախտ է եղել, նրան զրկեց հարստությունից, ծայրահեղ դեպքում՝ այն մասից, որն արդարացիորեն պատկանում էր նրան: Բայց ինքս էլ ոչ մի բանի համար չեմ օգտագործել դրանք, այնքան կույր և հիմար է ժլատությունը: Գանձին տիրելու զգացումն այնքան հաճելի էր ինձ, որ չէի կարողանում ոչ մեկի հետ կիսել: Տեսնո՞ւ՞մ եք հինայի սրվակի կողքի մարգարիտների շարանը: Նույնիսկ դրանից չկարողացա բաժանվել, չնայած հատուկ հանել էի նրան ուղարկելու համար: Դուք, իմ որդիները, պետք է նրան տաք Ագրայի գանձերի իրեն պատկանող մասը: Բայց ոչ մի բան չտաք, նույնիսկ այն շարանը, մինչև չփակեք

աչքերս: Չէ որ պատահում է, մարդու մի ոտը գերեզմանում է, բայց, այնուամենայնիվ, ողջ է: Ձեզ կպատմեմ, թե ինչպես մահացավ Մորսթենը, — շարունակեց նա: — Երկար տարիներ նա տառապում էր սրտի հիվանդությունից, բայց դա թաքցնում էր բոլորից, բացի ինձնից: Չարմանալի հանգամանքների գուգադիպության շնորհիվ Հնդկաստանում մենք միասին դարձանք մեծ հարստության տեր, որը, թոշակի անցնելով, հետս բերեցի Անգլիա: Շուտով Անգլիա վերադարձավ նաև Մորսթենը և հենց նույն օրն էլ իր բաժինը ստանալու համար եկավ մոտս: Կայարանից Պոնդիշերի-Լոջ եկավ ոտքով և նրան ներս թողեց իմ հավատարիմ սպասավոր ծերունի Լալ Չովդարը, որն արդեն կենդանի չէ: Գանձը կիսելու համար Մորսթենի հետ վիճեցինք: Կատաղության նոպայի պահին Մորսթենը վեր թռավ աթոռից, նրա դեմքը հանկարծ սևացավ, ձեռքը սեղմեց սրտին, մեջքի վրա ընկավ՝ գլուխը խփելով արկղին, որտեղ պահված էր գանձը: Երբ խոնարհվեցի վրան, ի սարսափ ինձ, նկատեցի, որ նա արդեն մահացած է: Երկար ժամանակ շփոթված մնացի, չիմանալով անելիքս: Իհարկե, առաջին միտքս օգնություն կանչելն էր, բայց հասկացա, որ բոլոր հիմքերը կան սպանության մեջ ինձ կասկածելու համար: Մահ՝ վիճաբանության ժամանակ, գլխի խոր վերք՝ այս բոլորը իմ դեմ էին: Բացի այդ, պաշտոնական հետաքննությունը անխուսափելիորեն կգրադվեր գանձերով, իսկ ես լուրջ պատճառներ ունեի ոչ մեկին իրազեկ չդարցնելու դրանց գաղտնիքը: Մորսթենն ինձ ասաց, որ աշխարհում ոչ ոք չգիտե, թե ուր է մեկնել ինքը: Եվ ես սկսեցի հակվել այն մտքին, թե հարկ չկա, որ այդ մասին թեկուզ մեկն իմանա: Դեռ շփոթության մեջ էի, երբ հանկարծ բարձրացրի գլուխս և դռան մեջ տեսա սպասավորիս՝ Լալ Չովդարին: Նա անլսելի սողոսկել էր սենյակ և հետևից փակել դուռը:

— Մի՛ վախեցեք, սահիբ, — ասաց նա: — Ոչ ոք չի իմանա, որ դուք եք սպանել նրան: Կթաղենք այստեղից հեռու և հետքերը կկորցնենք:

— Բայց ես չեմ սպանել, — բողոքեցի ես:

— Ես ամեն ինչ լսեցի, — ժպտալով գլուխն օրորեց Լալ Չովդարը: — Լսեցի ինչպես վիճեցիք, լսեցի հարվածի ձայնը: Բայց իմ շուրթերին լռության կնիք է դրված: Տանը բոլորը քնած են: Եկեք միասին տանենք նրան:

Եվ ես որոշում ընդունեցի: Եթե սեփական ծառաս չի հավատում ինձ, ինչպես կարելի է հուսալ, որ երդվյալների ատյանում տասներկու հիմար առևտրականներ հավատան քո անմեղությանը: Հենց այդ նույն գիշերն էլ մենք Լալ Չովդարի հետ թաքցրինք դիակը, իսկ մի քանի օր անց լոնդոնյան թերթերը լիքն էին կապիտան Մորսթենի խորհրդավոր անհետացման լուրերով: Պատմածիցս տեսնում եք, որ ըստ էության ոչ մի բանում մեղավոր չեմ: Բայց ես թաքցրի կապիտանի դիակը, իսկ գանձը, որ պատկանում էր երկուսիս, այդ օրվանից սկսեցի համարել իմ անբաժանելի սեփականությունը: Այդ պատճառով կցանկանայի, որպեսզի դուք, իմ որդիներ, վերականգնեք արդարությունը: Խոնարհվեք առաջ, ուշադիր լսեք. . . Գանձը պահված է. . . — Այդ պահին նրա դեմքը սարսափելի ծամաճովեց, աչքերը գրեթե դուրս թռան կապիճներից, ծնոտը կախ ընկավ և բղավեց այնպիսի ձայնով, որ երբեք չեմ մոռանա. «Մի թողեք նրան, հանուն սրբերի, մի թողեք» Երկուսով նայեցինք պատուհանին, ուր հառած էր նրա հայացքը: Մթության միջից մեզ էր նայում մի դեմք: Պարզ երևում էր ապակուն սեղմած սպիտակ քիթը: Դեմքը լի էր չարությամբ, մինչև հոնքերը մորուք էր աճած, աչքերը նայում էին մոռյլ ու

դաժան: Ես ու եղբայրս նետվեցինք դեպի պատուհանը, բայց դեմքն անհետացավ: Երբ մոտեցանք հորս սնարին, գլուխը հակված էր, զարկերակը դադարել էր բաբախելուց:

Այդ նույն գիշերը խուզարկեցինք ամբողջ այգին, բայց գիշերային ներխուժման ոչ մի հետք չհայտնաբերեցինք, բացի պատուհանի տակի ծաղկաթմբի մի ոտքի հետքից: Եթե այդ հետքը չլիներ, կարող էինք կարծել, որ այդ վայրի դաժանությամբ լեցուն դեմքը մեր երևակայության արդյունքն էր: Բայց մենք շուտով հայտնաբերեցինք մեր դեմ գործող գաղտնի ուժերի ավելի զգալի, շոշափելի նշաններ: Մի անգամ առավոտյան հորս ննջարանի պատուհանները լայն բացված էին, պահարաններն ու արկղերը գլխիվայր խառնշտած, իսկ գրասեղանին թղթի մի կտոր կար, վրան խզբզված՝ «չորսի նշան» Այդպես էլ չիմացանք, ով էր մեր գաղտնի այցելուն և ինչ են նշանակում այդ բառերը: Որքան կարողացանք կռահել, մեր հոր իրերից ոչինչ չէր կորել, չնայած ամեն ինչ տակնուվրա էր արված: Միանգամայն բնական է, որ այդ գիշերային այցելությունը ես ու եղբայրս կապում էինք այն սարսափների հետ, որոնք ամբողջ կյանքում հետապնդում էին մեր հորը: Բայց թե ով էր նա, մինչև հիմա էլ հանելուկ է մնում:

Մարդուկը լռեց, ծխեց հանգչող նարգիլեն և մի քանի վարկյան մտախոհ, ծխի քուլաներ էր արձակում: Բոլորս չքուլացող ուշադրությամբ լսեցինք նրա զարմանալի խոստովանությունը: Հոր մահվան մասին կարճ պատմության ժամանակ միսս Մորսթենի դեմքը կավճի նման ճերմակեց, և մի պահ ինձ թվաց, որ նա կարող է նույնիսկ ուշաթափվել: Բայց խմելով ջուրը, որ լցրեցի անկյունի փոքր սեղանի վրա դրված վենետիկյան ապակե ջրամանից, նա հաղթահարեց հուզումը: Շերլոկ Հոլմսը թիկնել էր բազկաթոռին՝ դեմքի բացակայող արտահայտությամբ, կիսախուփ կոպերի տակից երևում էր, ինչպես էին փայլում աչքերը: Նայեցի դեմքին և չէի կարող չհիշել, որ նա հենց այսօր դառնորեն բողոքում էր տաղտկալի և միապաղաղ կյանքից: Հիմա առնվազն մի խնդիր ստացավ, որի լուծումը պահանջում էր նրա զարմանալի ընդունակության ողջ լարումը: Ակնհայտորեն հպարտանալով մեզ վրա թողած իր պատմության տպավորությունից, միստր Թադեուշ Շոլտոն նայում էր մերթ մեկիս , մերթ՝ մյուսիս: Ծուխ արձակելով իր անչափ մեծ ծխամորճից, նա շարունակեց.

— Ինչպես կռահում եք, ես ու եղբայրս չափազանց հուզվել էինք գանձերի մասին մեր հոր պատմածից: Մի քանի ամիս մետր առ մետր փորփրեցինք այգին և ոչինչ չհայտնաբերեցինք: Այն միտքը , որ մեր հայրը մահացավ հենց այն ակնթարթին, երբ նրա շուրթերից պատրաստ էր մի քանի խոսք թռչել, որը մեզ անհաշիվ գանձերի տեր կդարձներ, կարող էր մեզ խելագարության հասցնել: Հարստուցյան չափը դատում էինք ըստ մարգարտյա շարանի: Դրա պատճառով մեր միջև մի փոքր անախորժություն ծագեց: Մարգարիտները ամենայն հավանականությամբ, շատ թանկարժեք էին, և եղբայրս չէր ցանկանում դրանցից բաժանվել, մեր մեջ ասած, մասնակիորեն ժառանգելով հայրական թուլությունը: Բացի այդ ենթադրում էի, որ եթե ինչ-որ մեկն էլ իմանա այդ շարանի մասին, ապա ամեն տեսակի բամբասանք կսկսվի և այդ ժամանակ փորձանքից չենք խուսափի: Ինձ միայն հաջողվեց համոզել նրան փնտրելու միսս Մորսթենի հասցեն և մեկական մարգարիտ ուղարկել որոշակի ժամանակամիջոցում, որպեսզի ծայրահեղ դեպքում նրան ազատենք կարիքից:

— Դուք շատ բարի եք: — Միսս Մորսթենը երախտագիտությամբ նայեց պատմողին: — Դա մեծահոգի արարք էր:

— Բայց չէ որ ձեզ համար խնամակալի պես մի բան էինք դարձել, — ձեռքը եռանդագին թափահարեց մարդուկը: — Ծայրահեղ դեպքում այդպես էի համարում ես: Բայց եղբայրս՝ Բարթոլոմյուն, ոչ մի կերպ չէր համաձայնվում ինձ հետ: Շատ դրամ ունեինք: Ես գոհ էի մեր ունեցածից: Այդպես վարվել դեռատի մի աղջկա նկատմամբ՝ ստորություն կլիներ: *Le mauvais gout mene au crime*: Ֆրանսիացիներն այդպես նրբորեն են արտահայտում նման մտքերը: Մեր տարաձայնություններն այնքան խորացան, որ ես գերադասեցի առանձին բնակվել: Այդպես լքեցի Պոնդիշերի-Լոջը, հետո վերցնելով ծեր հնդիկ սպասավորին և Ուիլյամին: Բայց երեկ իմացա, որ կարևոր նշանակություն ունեցող իրադարձություն է տեղի ունեցել, հայտնաբերվել է գաղտնարանը, ուր պահված էր գանձը: Անմիջապես տեղեկացրի միսս Մորսթենին և այժմ մեզ մնում է ուղևորվել Նորվուդ ու պահանջել ձեր մասը: Երեկ երեկոյան ասացի եղբորս, որ գրել եմ միսս Մորսթենին: Այնպես որ, անկոչ հյուր չենք լինի, չնայած ցանկալի էլ չենք:

Միսսը Շոլտոն լռեց: Նա նստել էր իր շքեղ բազմոցին և ցնցվում էր: Իսկ մենք լուռ մտածում էինք անսպասելի շրջադարձ ստացած այդ խորհրդավոր գործի մասին: Առաջինը տեղից ելավ Շերլոկ Հոլմսը:

— Սկզբից մինչև վերջ դուք ճիշտ եք վարվել, սըր, — ասաց նա: — Կաշխատենք բացել ձեր պատմության մթին քողը և վարձահատույց լինել ձեզ: Բայց, ինչպես հենց նոր ասաց միսս Մորսթենը, արդեն ուշ է և լավ կլինի առանց հապաղելու գործի անցնենք:

Մեր նոր ծանոթը մեծ զգուշությամբ հանեց ծխամորձը նարգիլեից և վարագույրի ետևից վերցրեց կարակույե օձիքով և թեղանիքներով երկար վերարկուն: Վերից վար կոճկեց բոլոր կոճակները, չնայած երեկոն տաք էր, նույնիսկ տոթ, և գլխին քաշեց նապաստակի մորթուց ականջակալներով գլխարկը, այնպես, որ ականջակալները փակեցին ականջները, բաց թողնելով միայն սուր, շարժուն մուրթը:

— Առողջությունս խախուտ է, — բացատրեց նա, ուղղվելով դեպի ելքը, — ստիպված եմ խիստ ռեժիմ պահպանել:

Կառքը մեզ սպասում էր դարպասի մոտ: Ծրագիրն, ըստ երևույթին, կազմված էր նախօրոք. մենք չէինք հասցրել տեղավորվել, երբ ձիերը շարժվեցին և սլացան: Թաղեուշ Շոլտոն անդադար շատախոսում էր, նրա սուր, բարձր ձայնը խլացնում էր անիվների աղմուկը:

— Բարթոլոմյուն իսկոք գլուխ ունի: Ինչ էք կարծում, ինչպե՞ս է գտել գանձերով լի արկղը: Նա եկավ այն եզրակացության, որ եթե արկղը դրսում չէ, ապա պետք է ինչ-որ տեղ տանը լինի: Չափեց բոլոր սենյակները, միջանցքներն ու խորդանոցները, ոչ մի մատնաչափ չթողնելով առանց չափելու: Պարզվեց, որ ամբողջ տան բարձրությունը յոթանասունչորս ֆուտ է, իսկ եթե առանձին վերցնենք մեկը մյուսի վրա դասավորված սենյակների բարձրությունը և գումարենք առաստաղների հաստությունը, որ նա չափել էր անցքեր շաղափելով, ապա ընդհանուր բարձրությունը կստացվի յոթանասուն ֆուտից ոչ ավելի: Ուրեմն, ինչ-որ տեղ անհետացել է ամբողջ չորս ֆուտ: Պարզ էր, որ այն պետք էր փնտրել վերևում: Այդ ժամանակ եղբայրս ծակեց վերին հարկի սենյակի առաստաղը, և այնտեղ, ինչպես կարելի էր սպասել, հայտնվեց մի

պատիլի ձեռնահարկ ևս, որը որմնաշաղված էր և այդ պատճառով էլ ոչ ոք չգիտեր դրա մասին: Ձեռնահարկի մեջտեղում, փայտամածի վրա դրված էր գանձերով լի արկղը: Ծանրության տակ ճկվելով, Բարթոլոմյուն անցքից դուրս բերեց արկղը և բացեց: Պարզվեց, որ այնտեղ ամենաքիչը կես միլիոն ֆունտ ստեռլինգի թանկարժեք իրեր կան:

Այդ թիվը լսելով բոլորս աչքներս չռեցինք: Եթե մեզ հաջողվեր պաշտպանել միսս Մորթսենի իրավունքը, նա խեղճ վարձու ընկերակցուհուց կդառնար Անգլիայի ամենահարուստ հարսնացուներից մեկը: Անկասկած, ամեն մի իսկական ընկեր պետք է որ ուրախանար, լսելով այսպիսի նորություն: Ես կակազելով մի քանի շնորհավորական բառեր մրթմրթացի և մոայլ հայացքս հառեցի հատակին, չլսելով մեր նոր ծանոթի հետագա շատախոսությունը: Նա տիպիկ մելեմադձիկ էր, և ես, ինչպես քնի մեջ, լսում էի նրա հիվանդության ախտանիշների անվերջանալի թվարկումն ու թախանձանքը՝ բացատրելու իրեն բազմաթիվ պառավական դեղերի կազմությունն ու ազդեցությունը, որը կաշվե պայուսակով իր հետ տանում էր ամեն տեղ: Ես ապավինում եմ միայն այն բանին, որ նա չի հիշել իմ խորհուրդները, որոնք այդ գիշեր տվեցի: Հովմար պնդում է, որ ինքը լսել է, թե ինչպես եմ Շոլտոյին նախազգուշացրել ոչ մի դեպքում երկու կաթիլից ավելի հնդկայուղ չընդունել, քանի որ դա շատ վտանգավոր է և համառորեն խորհուրդ եմ տվել որպես հանգստացնող միջոց մեծ չափաքանակով ստրիխնին ընդունել: Ինչ էլ լիներ, ես թեթևություն զգացի, երբ մեր կառքը կտրուկ կանգնեց, և կառապանը թռավ նստոցից ու բացեց դուռը:

— Միսս Մորթսեն, սա հենց Պոնդիշերի-Լոջն է, — ասաց միստր Թադեուշը, ձեռք մեկնելով նրան:

Գլուխ 5 — Ողբերգություն Պոնդիշերի-Լոջում

Մոտավորապես ժամը տասնմեկն էր, երբ հասանք մեր գիշերային ճանապարհորդության վերջին հանգրավանին: Ետևում թողեցինք մեծ քաղաքի խոնավ մշուշը, իսկ այստեղ գյուղում, գիշերը տաք էր և չոր: Արևմուտքից փչում էր տաք քամին, ծանր ամպերը դանդաղ լողում էին երկնքում, որոնց ճեղքերից երբեմն երևում էր նորալուսինը: Բավական լույս էր, բայց Թադեուշ Շոլտոն կառքից հանեց ճանապարհորդական լապտերը և շարժվեց առաջ:

Տունը գտնվում էր պարտեզի խորքում, շրջապատված շատ բարձր քարե պարիսպով, որի վրա ջարդված ապակու կտորտանք էր շաղ տված: Ներս ընկնել կարելի էր միայն պատի մեջ բացված նեղ մետաղակուռ դռնով: Մեր ուղեկիցն ինչ-որ առանձնահատուկ ձևով թակեց, ինչպես երբեմն թակում են փոստատարները:

— Ո՞վ է, — դռան ետևից հարցրեց մի կոպիտ ձայն:

— Այդ ես եմ, Մաք-Մուրդո: Ժամանակն է արդեն ճանաչելու իմ թակոցը:

Փնթփնթոց լավեց, հետո բանալիների զնգոց ու չիկչիկոց, և դուռը ծանր պտտվեց ծղիսնիների վրա: Շեմին կանգնել էր կարճահասակ, հզոր կրծքով մի մարդ, նրա լապտերի դեղին լույսը լուսավորում էր առաջ ձգված դեմքը և անվստահությամբ փայլող աչքերը:

— Այդ դու՞ք եք, միստր Թադեուշ: Իսկ այդ ո՞վ է ձեզ հետ: Ձեր հյուրերի համար տիրոջից ոչ մի կարգադրություն չեմ ստացել:

— Ոչ մի կարգադրություն պետք չէ: Դուք ինձ զարմացնում եք, Մաք-Մուրդո: Չէ որ երեկ երեկոյան ասել եմ եղբորս, որ ընկերներիս հետ եմ գալու:

— Տերն այսօր ամբողջ օրը դուրս չի եկել իր սենյակից: Դուք լավ գիտեք մեր խստությունը: Ձեզ կարող եմ ներս թողնել, բայց ձեր բարեկամները թող դրսում սպասեն:

Դա անսպասելի արգելք էր: Թադեուշ Շուտոն պահակին նայեց անօգնական և շփոթված:

— Լավ չեք վարվում, Մաք-Մուրդո, — թոթովեց նա: — Ես պատասխանատու եմ նրանց համար, այդքանը պետք է ձեզ բավարարի: Բացի այդ, հետներս օրիորդ կա: Անպատշաճ է այսպիսի ժամին նրան թողնել բանուկ փողոցում:

— Շատ եմ ցավում, միստր Թադեուշ, — պատասխանեց անդրդվելի պահակը: — Հյուրերը կարող են ձեր բարեկամները լինել, բայց իմ տիրոջ համար թշնամիներ: Ինձ լավ են վճարում, որ լավ կատարեմ պարտականություններս: Ես լավ եմ կատարում դրանք: Ես չեմ ճանաչում այդ մարդկանց:

— Դե ոչ, Մաք-Մուրդո, — հանկարծ բարեստորեն խոսեց Շերլոկ Հոլմսը: — Չեմ կարծում, որ մոռացած լինեք ինձ: Հիշու՞մ եք սիրող բռնցքամարտիկին, որի հետ չորս տարի առաջ, ձեր բենեֆիսի օրը, երեք ռաունդ անցկացրիք Ալիսոնի ունիոնում:

— Մի՞թե միստր Շերլոկ Հոլմսին եմ տեսնում, — բացականչեց բռնցքամարտիկը: — Տես է՛, ինքն է որ կա: Այդ ինչպես անմիջապես չճանաչեցի ձեզ: Դուք այդպես չպետք է կանգնեիք, այլ ծնոտիս հասցնեիք ձեր հոչակավոր հանդիպակաց հարվածը, և ես անմիջապես կճանաչեի ձեզ: Է, ինչ ասեմ: Դուք այն մարդկանցից եք, ովքեր սպանում են իրենց տաղանդը: Այլապես, եթե ցանկանայիք, հեռու կգնայիք:

— Տեսնու՞մ եք, Ուոտսոն, եթե իմ մասնագիտությունը այլևս ոչ մեկին պետք չգա, հարակից այլ շնորհներ էլ ունեմ, — ծիծաղելով ասաց Հոլմսը: — Հավատացած եմ, որ մեր ընկերը բաց երկնքի տակ մեզ երկար չի պահի:

— Մտեք, սրբ, մտեք, դուք և ձեր ընկերները, — պատասխանեց դոնպանը: — Շատ եմ ցավում կատարվածի համար, միստր Թադեուշ, բայց կարգը մնում է կարգ: Ես պետք է լիովին վստահ լինեի ձեր ընկերների վրա, որ նրանց ներս թողնեի:

Քարե պատի ետևում դատարկ պարտեզի միջով ձգվում էր մանրախճով ծածկված ծառուղին: Տունն ամբողջովին ստվերի մեջ էր, բացի լուսնի լույսով ողողված մեկ պատից, որի վերևում փայլատակում էր պատուհանը: Լռության մեջ թաղված այդ հսկա մռայլ շենքը սարսափ էր առաջացնում: Անգամ սովոր Թադեուշը կորցրեց գլուխը՝ լապտերը դողում էր և թեթևակի ճռռում նրա ձեռքում:

— Ոչինչ չեմ հասկանում, — մրթմրթաց նա: — Այստեղ ինչ-որ սխալ կա: Չէ որ ես պարզ բացատրեցի Բարթոլոմյուին, որ այսօր կգանք իր մոտ: Բայց աշխատասենյակում չգիտես ինչու լույս չկա: Չեմ հասկանում, ինչ կարող է դա նշանակել:

— Նա միշտ այդպես խի՞ստ է պահպանում տունը, — Հարցրեց Շերլոկ Հոլմսը:

— Այո, այդպես է սահմանված դեռ հորս կողմից: Բարթոլոմյուն սիրելին էր և ինձ երբեմն թվում էր, որ հայրս նրան ավելի շատ էր վստահում, քան ինձ: Հրեն, տեսնու՞մ եք, լուսնի լույսով ողողված պատուհանը, դա Բարթոլոմյուի աշխատասենյակն է: Բայց ներսը, իմ կարծիքով, մութ է:

— Այո, մութ է, — ասաց Շերլոկ Հոլմսը: — Բայց մուտքի փոքր պատուհանում կարծես լույս է վառվում:

— Ա՛, դա տնտեսուհու սենյակն է: Միսիս Բերստոնը՝ մեր վաղեմի տնտեսուհին, սովորաբար երեկոներն այնտեղ է անցկացնում: Նա էլ ամեն ինչ կրացատրի: Դուք չե՞ք համաձայնի մի քանի բոպե ինձ այստեղ սպասել: Եթե բոլորս միասին մտնենք, ապա միսիս Բերստոնը կվախենա, չէ որ նա չի սպասում մեր ներխուժմանը: Սը՛ս, կամաց: Սա ի՞նչ է:

Դողացող ձեռքով նա բարձրացրեց լապտերը, և լույսի շողը խաղաց ու թռչկոտեց մեր շուրջը: Միսս Մորսթենը բռնեց ձեռքս. մենք երեքով սրտատրոփ քարացանք և լարեցինք մեր լսողությունը: Գիշերային լռության մեջ մութ, մռայլ հսկա շենքից լսվում էին թախծալի, սրտաճմլիկ ձայներ՝ ինչ-որ բանից վախեցած կնոջ հեծկլտոց:

— Դա միսիս Բերստոնն է, — ասաց Շոլտոն: — Տանը միայն մի կին կա: Սպասեք այստեղ: Ես անմիջապես կվերադառնամ:

Նա մոտեցավ դռանը և թակեց իրեն հատուկ թակոցով: Նրան ներս թողեց բարձրահասակ տարեց մի կին, Շոլտոյի տեսքից ուրախացած ծափ տալով:

— Օ՛, միստր Թադեուշ, այնքան ուրախ եմ, որ դուք եկաք: Այնքան ուրախ եմ, այնքան ուրախ, — լսեցինք նրա ձայնը, հետո դուռը փակվեց, և ձայնը մարեց տան խորքում:

Թադեուշ Շոլտոն լապտերը մեզ թողեց: Հոլմսը լապտերով դանդաղ լուսավորեց շրջակայքը, հետո լարված նայեց շենքին և բակում լցված մեծ հողակույտերին: Ես և միսս Մորսթենը շատ մոտ էինք կանգնած իրար և նրա ձեռքն իմ ավուստ էր: Չարմանալի, անհասկանալի բան է սերը, ահա մենք կանգնած ենք երկուսով, մինչ այս երբեք չենք հանդիպել, երբեք ոչ մի փաղաքշական խոսք չենք ասել, գուրգուրանքով իրար չենք նայել և ահա այս վտանգավոր պահին մեր ձեռքերը բնագոյաբար ձգվեցին իրար: Հետո հաճախ եմ մտածել այդ Չարմանալի ակնթարթի մասին, բայց այն ժամանակ ամեն ինչ շատ բնական թվաց, և հետո միսս Մորսթենը ինձ հաճախ էր ասում, որ անմիջապես ձգվել է դեպի ինձ, հավատացած, որ ինձնից սփոփանք և պաշտպանություն կգտնի: Այդպես մենք կանգնել էինք երկուսով, այդ տարօրինակ մռայլ տան առաջ՝ երեխաների պես իրար ձեռք բռնած, և մեր սրտերին հանկարծ հանգստություն տիրեց:

— Ինչ տարօրինակ վայր է, — ասաց միսս Մորսթենը շուրջը նայելով:

— Կարծես այս այգում են բանել Անգլիայի բոլոր խլուրդները: Ինձ հաջողվել է նմանատիպ ինչ-որ բան տեսնել Բալարետի մոտ: Բայց այնտեղ ամբողջ բլուրը փորված, տակնուվրա էր արված ոսկեխույզների կողմից:

— Այստեղ էլ են ոսկեխույզներ աշխատել, — նկատեց Հոլմսը: — Ավելի ճիշտ՝ գանձ են փնտրել: Մի մոռացեք, որ այս տան տերերը վեց տարի գանձ են փնտրել: Չարմանալու բան չկա, որ պարտեզը նման է ոսկու հանքի:

Այդ պահին շքամուտքի դուռը լայն բացվեց, և առաջ պարզաձև ձեռքերով, սարսափահար աչքերով տնից դուրս վազեց Թադեոս Շուտոն:

— Բարթոլոմյուին ինչ որ բան է պատահել, — բացականչեց նա: Այնպես եմ վախենում: Նյարդերս չեն դիմանում:

— Նա իրոք քիչ էր մնում խեղդվեր արցունքներից, կարակուլե օձիքից դուրս ցցված ցնցվող, գունաթափ դեմքը մահու չափ վախեցած երեխայի անօգնական, աղաչական տեսքն ուներ:

— Տուն գնանք, — վճռական ասաց Հովմար:

— Այո, գնանք, — աղաչական թոթովեց Թադեոս Շուտոն: — Իսկապես, արդեն ոչինչ չեմ հասկանում, հիմա ինչ ենք անելու:

Նրա ետևից գնացինք տնտեսուհու սենյակը, որ գտնվում էր մուտքի ձախ կողմում:

Սենյակում ետ ու առաջ էր նետվում վախեցած կինը՝ ջղաձգորեն տրորելով մատները, բայց միսս Մորսթենի հայտնվելը հանգստացնող ազդեցություն թողեց:

— Թող աստված օգնի ձեզ, — բացականչեց նա, խեղդելով հեկեկոցը: — Ինչ հեզաբարո և լավ դեմք ունեք: Նայում եմ ձեզ և թեթևանում եմ: Ինչի ասես չեմ դիմացել այսօր:

Միսս Մորսթենը մի հայացք նետեց նիհար, աշխատանքից կոպտացած տնտեսուհու ձեռքերին, զուտ կանացի կարեկցանքով մի քանի փաղաքշական, մխիթարիչ բառեր ասաց և մեծահասակ կնոջ գունաթափ, անարյուն այտերը թեթևակի շառագունեցին:

— Պարոնը փակվել է սենյակում և չի պատասխանում ոչ մի թակոցի, — բացատրեց նա: — Ամբողջ օրը սպասել եմ նրա կանչին: Բայց, ընդհանրապես, նա սիրում է մենակ մնալ: Մեկ ժամ առաջ սկսեցի անհանգստանալ, արդո՞ք բան չի պատահել, բարձրացա վերև և նայեցի բանալու անցքից: Դուք պետք է այնտեղ բարձրանաք և նայեք, միստր Թադեոս: Տասը տարի ապրում եմ այս տանը, տեսել եմ միստր Բարթոլոմյուին և՛ ուրախության, և՛ վշտի ժամին, բայց նման դեմքով երբեք չեմ տեսել:

Շերլոկ Հովմար վերցրեց լապտերը և առաջինը վերև բարձրացավ, քանի որ Թադեոսը սարսափից դողում էր: Նրա ծնկները ծալվում էին, և ես բռնեցի թևը, որպեսզի կարողանա աստիճաններով բարձրանալ: Մինչև վերև բարձրանալը, Հովմար երկու անգամ գրպանից հանեց խոշորացույցը և ուշադիր զննեց կոկոսի թելից հյուսված խսիրի վրայի ինչ-որ մուգ հետքերը, որոնք ինձ սովորական փոշի թվացին: Հովմար դանդաղ էր շարժվում, լապտերը տանում էր ցածր պահած և աջ ու ձախ զննող հայացք նետում: Միսս Մորսթենը մնաց ներքևում, վախեցած տնտեսուհու հետ:

Մանդրավանդակի երրորդ հարթակը մեզ տարավ մի երկար, ուղիղ միջանցք, որի աջ կողմում, պատին, կախված էր ձեռագործ հնդկական մի գորգ: Ձախից բացվում էր երեք դուռ: Հովմար դանդաղ շարժվեց առաջ, քայլելիս զննելով ամեն ինչ, մենք հետևում էինք նրան, իսկ մեր ետևից միջանցքի երկարությամբ քայլում էին մեր երկար ստվերները: Մեզ հարկավոր էր երրորդ դուռը: Հովմար թակեց և ոչ մի պատասխան չստանալով սեղմեց բռնակը, փորձելով պտտել այն: Պարզվեց, որ դուռը փակ էր ներսից: Հովմար լապտերը մոտեցրեց փականին, և մենք տեսանք, որ փականի լեզվակը լայն է և շատ

ամուր: Բայց բանալին պտտված էր և անցքի մեջ ճեղք էր մնացել: Շերլոկ Հոլմսը խոնարհվեց դեպի այն և անմիջապես կտրուկ ետ ցատկեց:

— Այստեղ սատանայական ինչ-որ բան կա, Ուոտսոն, — շնչաց նա: Նրան նախկինում երբեք այդքան անհանգստացած չէի տեսել: — Դուք ի՞նչ եք մտածում այս մասին:

Խոնարհվեցի փականի վրա և սարսափից ցնցվեցի: Պատուհանից թափանցում էր լուսնի լույսը՝ սենյակը լցնելով թույլ, երերուն փայլով: Օդից կախվածի նման ուղիղ ինձ էր նայում մեր ուղեկից Թադեուշի դեմքը, քանի որ նրանից ներքև ամեն ինչ սուվերի մեջ էր: Նույն բարձր, փայլուն ճաղատը, նույն դեղին ծոպավոր շրջանով անարյուն դեմքը: Միայն թե դիմագծերը սառել էին սարսափելի ժպիտով՝ լարված և անբնական, որ այս խաղաղ լուսնի լույսով լեցուն սենյակում թողնում էր առավել սարսափելի տպավորություն, քան ցավի կամ վախի դիմաճռությունը: Դեմքն այնքան նման էր մեր փոքրամարմին բարեկամին, որ ետ շրջվեցի՝ համոզվելու, որ նա այստեղ է, իմ կողքին: «Նրանք երկվորյակներ են», — հիշեցի ես:

— Սոսկալի է: Հիմա ինչ անենք, — ասացի ես Շերլոկ Հոլմսին:

— Հարկավոր է դուռը տեղահան անել, — պատասխանեց նա և ամբողջ մարմնով խփելով դռանը, փորձեց կոտրել փականը: Դուռը ճրթճրթաց, ճռճռաց, բայց տեղի չտվեց: Այդ ժամանակ երկուսով ուժեղ խփեցինք, փականը շրխկաց, դուռը թափով բացվեց, և մենք հայտնվեցինք Բարթոլոմյու Շոլտոյի աշխատասենյակում:

Աշխատասենյակը սարքավորված էր քիմիայի լաբորատորիայի նման: Դռան դիմացի պատին ամրացված դարակում դրված էին երկու շաք շէր և ապակե անոթներ, սեղանին շարված էին բունզենովյան այրիչներ, սրվակներ և փորձանոթներ: Հատակին, անկյունի զամբյուղի մեջ, դրված էին թթվուտի շէր: Դրանցից մեկը հավանաբար ճաքել էր կամ կոտրվել, քանի որ տակից հոսում էր հեղուկի մուգ մի շիթ և սենյակը լցնում կուպրի ծանր, քաղցրահամ հոտով: Մենյակի մի անկյունում ձեռնասանդուղք էր դրված, որի ներքևի մասի մոտ, հատակին, ծեփ էր թափված, իսկ վերին մասը հենված էր առաստաղին, բավականին լայն բացված անցքի կողքին, որտեղով կարող էր մարդը հանգիստ անցնել: Հատակին, սանդուղքի կողքին, նետված էր պարանի հաստ կապուկ:

Սեղանի կողքի փայտյա աթոռին խոնարհված նստել էր տանտերը՝ գլուխը թեքած ձախ ուսին, սարսափելի, անհասկանալի ժպիտով: Նրա մարմինը սառն էր և արդեն փայտացած: Մահացել էր, հավանաբար, մի քանի ժամ առաջ: Ես ուշադրություն դարձրի, որ ոչ միայն նրա դեմքն էր սարսափելի ծամաճոճված, այլև ոտքերն ու ձեռքերը շրջված և շղաձգված էին ամենաանհավանական ձևով: Սեղանին, նրա ձեռքի կողքին, ընկած էր տարօրինակ մի գործիք՝ շագանակագույն նուրբ մի ձեռնափայտ՝ մուրճանման քարե գլխիկով, որը կոպիտ ձևով կապված էր պարանով: Դրա կողքին ընկած էր նոթատետրից պոկած մի թուղթ, որի վրա խզմզված էր մի քանի բառ: Հոլմսը նայեց և թուղթը մեկնեց ինձ:

— Տեսնու՞մ եք, — բազմանշանակ բարձրացնելով հոնքերը ասաց նա:

Լամպի լույսի տակ կարդացի սարսափից ցնցվելով. «Չորսի նշան» :

— Հանուն բոլոր սրբերի, ի՞նչ է նշանակում այս ամենը:

— Սա նշանակում է, որ այստեղ սպանություն է կատարվել, — ասաց Հոլմսը՝ խոնարհվելով դժբախտ Բարթոլոմյու Շոլտոյի փայտացած դիակի վրա:

— Այդպես էլ սպասում էի: Նայեք: — Եվ ցույց տվեց աչ ականջի տակ խրված բարակ, երկար սև փուշը:

Ինչ-որ բույսի փշի նման է, — ասացի ես:

— Հենց փուշ է, որ կա: Կարող եք հանել: Միայն զգույշ, թունավորված է:

Զգուշորեն, երկու մատով դուրս քաշեցի փուշը: Հեշտությամբ տեղի տվեց, մաշկի վրա համարյա ոչ մի հետք չթողնելով: Ծակված տեղում նշմարվում էր միայն չորացած արյան մի փոքրիկ հետք:

— Այս ամենն ինձ համար անհասկանալի գաղտնիք է, — խոստովանեցի ես, — և որքան գնում, այնքան հանելուկային է դառնում:

— Ինձ համար՝ ընդհակառակը, — պատասխանեց Հովմար, — բույս առ բույս գործը պարզվում է: Միայն մի քանի օղակ է պակասում, որպեսզի գործի ընթացքը վերականգնվի:

Մենյակ մտնելուց հետո համարյա մոռացել էինք մեր ուղեկցի գոյության մասին: Նա դեռ կանգնած էր դռան մոտ, մերթ ընդ մերթ խեղդված հեծկլտանքով կոտրատելով մատները: Կերպարանքը հուսահատության մարմնացում էր: Հանկարծ նրա կրծքից պոկվեց խելահեղ, հուսահատ մի ճիչ:

— Գանձերն անհետացել են, — ճչած նա: — Նրան թալանել են: Տեսնում եք, այ, այդ անցքը: Այնտեղից ենք հանել արկղը: Ես օգնեցի նրան: Նրան կենդանի տեսնողներից ես վերջինն եմ: Այստեղից գնացի երեկ երեկոյան և աստիճաններից իջնելիս, լսեցի, թե ինչպես դուռը փակեց ետևիցս:

— Դա ե՞րբ կատարվեց:

— Ժամը տասին: Եվ ահա նա մեռած է: Այստեղ ոստիկաններ կկանչեն: Ինձ կկասկածեն: Այո, ես հավատացած եմ, որ այդպես կլինի: Բայց դուք, պարոնայք, ինձ մեղավոր ճանաչում եք: Դուք, իհարկե, չեք կարող մտածել, որ դա ես եմ արել: Մի թե ես ձեզ այստեղ կբերեի, եթե դա ես արած լինեի: Օ՛, տեր աստված, տեր աստված: Ես կխելագարվեմ:

Նա կոտրատում էր մատները, ոտքերով դոփում, դողացնում էր, ասես տենդի մեջ լիներ:

— Դուք վախենալու բան չունեք, միստր Շոլտո, — ասաց Հովմար թփթփացնելով նրա ուսին: — Լսեք ինձ և գնացեք ոստիկանական տեղամաս: Հարկավոր է հայտնել կատարվածի մասին: Խոստացեք նրանց համակողմանի օգնություն ցույց տալ: Իսկ մենք ձեզ այստեղ կսպասենք:

Մարդուկը հնազանդվեց, դեռ ամբողջովին խելքի չեկած: Եվ մենք լսեցինք, թե ինչպես նա, մթության մեջ գայթելով, իջնում էր աստիճաններով:

Գլուխ 6 — Շերլոկ Հովմար ցուցադրում է իր մեթոդը

— Եվ այսպես, — ասաց Շերլոկ Հովմար, շփելով ձեռքերը, — մեր տրամադրության տակ կես ժամ կա: Եկեք որքան հնարավոր է լավ օգտագործենք այդ ժամանակը: Ինչպես ձեզ արդեն ասել եմ, գործն ինձ համար միանգամայն պարզ է: Բայց, այնուամենայնիվ, մենք կարող ենք սխալվել, հավատալով բավականին ակնառու փաստերին: Սկզբում դեպքը որքան էլ պարզ թվա, միշտ էլ կարող է ավելի բարդ ընթացք ստանալ:

— Պա՛րզ, — զարմացած բացականչեցի ես:

— Իհարկե պարզ, — պատասխանեց Հովմար պրոֆեսորի տեսքով, ասես ուսանողներին էր ցուցադրում հետաքրքիր մի հիվանդի: — Խնդրում եմ նստեք այն անկյունում, որպեսզի ձեր հետքերը չբարդացնեն գործը, իսկ այժմ՝ ի գործ: Առաջին, ինչպե՞ս են այդ կտրիճներն այստեղ թափանցել և ինչպե՞ս են դուրս եկել: Դուրը երեկվանից չի բացվել: Իսկ պատուհանը: — Նա պատուհանին մոտեցրեց լապտերը, բարձրաձայն ասելով իր նկատառումները, բայց ավելի շուտ դիմելով ինքն իրեն, քան ինձ: Պատուհանը փակված է ներսից: Շրջանակները շատ ամուր են: Եկեք բացենք այն: Կողքին ոչ մի ջրհորդան չկա: Տանիքն անհասանելի է: Եվ, այնուամենայնիվ, մարդը սենյակ է թափանցել պատուհանից: Անցյալ երեկո մի քիչ անձրև եկավ: Տեսնում եք, պատուհանի գոգին հող կա, կիսակոշիկի հետք, մի տարօրինակ կլոր հետք ևս: Ահա դարձյալ այդ հետքը: Այս անգամ՝ հատակին: Ահա այն արդեն սեղանին է: Նայեք, Ուոտսոն, պատկերը միանգամայն պարզ է:

— Սա ոտքի հետք չէ, — ասացի ես:

— Այդ պատճառով էլ դա շատ կարևոր է: Սա փայտե պրոթեզի հետք է: Տեսնում եք, այստեղ՝ պատուհանի գոգին, լայն մետաղյա պայտով ծանր, կոպիտ կոշիկի հետքը: Իսկ կողքին՝ հենակի կլորավուն հետքը:

— Փայտե ոտքով մարդ:

— Հենց այդ է որ կա: Նա այստեղ մենակ չի եղել: Ունեցել է շատ ընդունակ և ճարպիկ օգնական: Դուք կկարողանաի՞ք, դոկտոր, մազլցել այս պատը:

Նայեցի պատուհանին: Լուսինը դեռ պայծառ լուսավորում էր տան այդ մասը: Գետնից մոտ վաթսուն ֆուտ բարձր էինք, և որքան կարողացա տեսնել, աղյուսե շարվածքի վրա ոչ ճեղք կար, ոչ ցցվածք, որտեղ կարելի լիներ ոտք դնել:

— Դա բացարձակապես անհնար է, — պատասխանեցի ես:

— Այո, միայնակ անհնար է: Բայց, ենթադրենք, սենյակում գտնվում է ձեր մեղսակիցը, որը ձեզ է նետել հուսալի պարան, ահա այն, որ ընկած է անկյունում, մի ծայրը կապելով պատից կախված կեռից: Այն ժամանակ, եթե դուք ճարպիկ մարդ եք, թեկուզ և փայտե ոտքով, հավանաբար կկարողանաք մազլցել այս պատով: Հետո կիջնեք ներքև, ձեր ընկերը վեր կքաշի պարանը, կքանդի կեռից, մղլակով կփակի պատուհանը, իսկ ինքը կգնա այս սենյակից նույն ճանապարհով, որով եկել էր: Նվազ կարևոր մանրամասն, — շարունակեց Հովմար, ցույց տալով պարանը, — չնայած պարզվեց, որ փայտե ոտքով մեր ընկերը գերազանց մազլցող է, բայց մասնագիտությամբ ծովային չէ: Ձեռքերը չեն կոշտացել պարանով մազլցելուց: Խոշորացույցս մի քանի տեղ արյան հետքեր հայտնաբերեց, որ հատկապես նկատելի էր պարանի վերջում: Ուրեմն այնպես արագ էր իջել, որ մի քանի տեղ պլոկել է ձեռքի մաշկը:

— Շատ լավ, — ասացի ես, — բայց գործը դրանից մազաչափ անգամ հասկանալի չդարձավ: Ո՞վ է խորհրդավոր օգնականը: Ինչպե՞ս է թափանցել այս սենյակը:

— Այո, օգնականը, — մտախոհ կրկրնեց Հովմար: — Այդ օգնականը ուշագրավ անձ է: Նրա շնորհիվ գործը ստանում է միանգամայն բացառիկ բնույթ: Կարծում եմ, որ նա մի նոր էջ կգրի Անգլիայի հանցագործությունների պատմության մեջ: Նմանատիպ դեպքեր առաջ կատարվում էին միայն Հնդկաստանում և եթե հիշողությունս չի դավաճանում, նաև Սենեգամբիայում:

— Բայց, այնուամենայնիվ, ինչպե՞ս է սենյակ թափանցել, — կրկնեցի ես: — Դուռը փակ էր, պատուհանը դրսից անհասանելի: Գուցե խողովակի միջո՞վ:

— Բուխարու անցքը բավականին փոքր է, — պատասխանեց Հովմար, — ես արդեն ստուգել եմ այդ հնարավորությունը:

— Այդ դեպքում ինչպե՞ս:

— Դուք պարզապես չեք ցանկանում կիրառել իմ մեթոդը, — ասաց նա օրորելով գլուխը: — Քանի անգամ եմ ձեզ ասել, դեն նետեք անհնարին ամեն ինչ, իսկ մնացածը, որքան էլ անհավանական թվա, կլինի պատասխանը: Մեզ հայտնի է, որ նա չէր կարող սենյակ ընկնել ոչ դռնով, ոչ պատուհանից, ոչ էլ ծխնելույզի միջով: Գիտենք նաև, որ նա չէր կարող թաքնվել սենյակում, քանի որ թաքնվելու տեղ չկա: Այդ դեպքում ինչպե՞ս է այստեղ սողոսկել:

— Տանիքից, — բացականչեցի ես:

— Անկասկած: Սենյակ կարող էր թափանցել, միայն տանիքից: Եթե բարի լինեք լուսավորել ինձ, մենք մեր որոնումները կշարունակենք գաղտնարանում, որտեղ պահված էր գանձերով արկղը:

Հովմար ձեղնասանդուղքով բարձրացավ դեպի առաստաղը, երկու ձեռքով կառչելով հեծանից սողոսկեց անցքի մեջ: Հետո գլուխը դուրս հանելով, հավանաբար այնտեղ պառկել էր, երկարեց ձեռքը, ինձնից վերցրեց լապտերը և այն պահեց, մինչև կբարձրանայի ետևից:

Ձեղնահարկը, որտեղ մենք հայտնվեցինք տասը ֆուտ երկարություն և վեց ֆուտ լայնություն ունեք: Որպես հատակ ծառայում էին առաստաղի հեծանները և բարակ շերտով ծեփը, այնպես որ հարկավոր էր հեծանից հեծան անցնել մեծ զգուշությամբ: Տանիքը երկթեք էր: Ամենայն հավանականությամբ, ձեղնահարկի առաստաղ էր ծառայում տանիքի ներքին կողմը: Հատակը ծածկում էր երկար տարիներ կուտակված փոշու հաստ շերտը: Բացի փոշուց ձեղնահարկում ուրիշ բան չկար:

— Ահա, խնդրեմ, — ասաց Հովմար՝ ձեռքը հենելով թեք պատին: — Այս ձեղնապատուհանը դեպի դուրս է տանում: Բացեք և կհայտնվեք ուղիղ տանիքին, իսկ այն բարեբախտաբար թեք է: Հատկապես այդ ճանապարհով է համար Առաջինը սենյակ սողոսկել: Եկեք նայենք, որևէ հետք չի՞ թողել արդյոք:

Հովմար հատակին դրեց լապտերը, և ես այսօր երկրորդ անգամ նրա դեմքին զարմանք ու տարակուսանք տեսա: Հետևելով նրա հայացքին զգացի, թե ինչպես է երակներին մեջ արյունը սառչում. հատակին բոքիկ ոտքերի լավ նկատելի շատ հետքեր կային, դրանք համարյա կիսով չափ փոքր էին հասուն մարդու ոտնահետքերից:

— Հովմա, — շշնջացի ես, — պարզվում է, որ այս սարսափելի գործն անողը երեխա է եղել:

Հովման արդեն լիովին տիրապետում էր իրեն:

— Պետք է խոստովանել, ես արդեն փակուղու մեջ էի: Հիշողությունս դավաճանեց: Բայց չէ որ գործը հասարակ է: Հենց սկզբից պետք է գուշակեի, թե ինչպիսի հետքեր պետք է լինեին: Դե ինչ, այստեղ այլևս անելիք չունենք: Գնանք ներքև:

— Բայց ի՞նչ հետքեր են դրանք, — հետաքրքրությունից այրվելով հարցրեցի ես:

— Թանկագին Ուոտսոն, վերլուծեք փաստերը, — ասաց նա թեթևակի զայրույթով: — Դուք գիտեք իմ մեթոդը: Օգտագործեք այն, հետաքրքիր կլինի արդյունքները համեմատել:

— Ոչ, ես ոչինչ չեմ հասկանում, — պատասխանեցի ես:

— Շուտով ամեն ինչ կհասկանաք, — մտացրիվ նետեց Հոլմսը: — Կարծում եմ, այստեղ այլևս ուրիշ հետաքրքիր բան չկա: Եվ, այնուամենայնիվ, ես մեկ անգամ ևս կատուգեմ:

Նա արագ շարժումով գրպանից հանեց խոշորացույցն ու մետրը և իր սուր, նուրբ քիթը ընդհուպ մոտեցնելով տախտակապատվածքին, սկսեց ուշադրությամբ զննել ամեն մի միլիմետրը: Նրա փայլուն, խորն ընկած աչքերն ինձ հիշեցրին գիշատիչ թռչունի աչքեր: Հետքը որսացող իսկական խուզարկու շան նման այնքան արագ, անաղմուկ ու զգույշ էին նրա շարժումները, որ ես հանկարծ մտածեցի, թե ինչ սարսափելի հանցագործ կարող էր նա լինել, եթե իր տաղանդն ու եռանդը ուղղեր ոչ թե օրենքի պաշտպանությանը, այլ նրա դեմ:

Զննելով ձեղնահարկը, ամբողջ ժամանակ Հոլմսը քթի տակ ինչ-որ բան էր շնչում և հանկարծ ուրախ բացականչեց:

— Ահա, արդեն կարելի է ասել, բախտներս բերեց, — ասաց նա: — Շատ ժամանակ և աշխատանք կլինայենք: Համար Առաջինն անզգուշաբար ոտքը դրել է կրեոզոտի վրա: Տեսնու՞մ եք, այս մածուցիկ, գարշահոտ լճակի աջ կողմում դրոշմվել է փոքր ոտքի ծայրը: Հավանաբար, կրեոզոտի շիշը ճաքել է, և հեղուկը դուրս է հոսել:

— Հետո՞ ինչ:

— Այն, որ այժմ նրան հեշտությամբ կբռնենք: Շուն կա, որ կրեոզոտի հոտի հետքով կգնա մինչև աշխարհի ծայրը: Եթե սովորական խուզարկու շունը հետքով կարող է գնալ մինչև կոմսության սահմանները, ի՞նչ եք կարծում, ուր կարող է հասնել հատուկ վարժեցրած շունը: Սովորական համեմատական կախվածություն, որի անհայտ անդամը հավասար է . . . Կանգնիր: Լսում եմ, տեղ են հասել օրենքի լիազորված ներկայացուցիչները:

Ներքևում լավեցին ծանր քայլեր, բարձրաձայն խոսակցություն և ուժգին շրխկաց ջրամուտքի դուռը:

— Քանի դեռ նրանք չեն եկել, — ասաց Հոլմսը, — շոշոփեք այդ խեղճի ոտքերն ու ձեռքերը: Ի՞նչ եք զգում:

— Մկանները քարի պես կարծրացել են, — պատասխանեցի ես:

— Հենց այդ է, որ կա: Դրանք ուժեղ ջղաձգության նշաններ են: Սա սովորական դիակի փայտացում չէ: Ձեզ ի՞նչ հետևության է հանգեցնում այս հիպոկրատական, կամ, ինչպես սիրում էին գրել հին գրողները, այս քարացածությունն ու սարդոնիկ ժպիտը:

— Մահը վրա է հասել բուսական ծագում ունեցող ինչ-որ ուժեղ ալկոլոիդի հետևանքով, — պատասխանեցի ես, — ստրիխնինի նման, որը փայտացնում է:

— Դա առաջին բանն էր, որ մտածեցի, երբ տեսա այս ջղաձգված դեմքը: Մենյակ մտնելով անմիջապես սկսեցի փնտրել, թե ինչով է ներարկվել թույնը: Եվ, ինչպես հիշում եք, հայտնաբերեցի փուշը, որը հազիվ էր ծակել մաշկը: Ուշադրություն դարձրեք, փուշը կաթվածահար է արել գլխի հենց այն մասը, որն ուղղված է առաստաղի բացվածքին, եթե ուղիղ նստեք այս աթոռին: Իսկ այժմ եկեք զննենք հենց փուշը:

Զգուշորեն վերցրի փուշը և մոտեցրի լամպին: Դա երկար, սուր և սև փուշ էր, ծայրին փայլում էր ինչ-որ չորացած թանձր հեղուկ: Բուր կողմը ձվաձև էր և դանակի հետքեր կային վրան:

— Սա Անգլիայում աճող ծառերի՞ց է:

— Իհարկե, ոչ: Ահա թե ինչ, Ուոտսոն, տրամադրության տակ ունենալով այսքան փաստեր, դուք պետք է ճիշտ եզրակացության հանգեք: Ահա և կանոնավոր բանակի ներկայացուցիչները. օժանդակ ուժերը պետք է զիջեն իրենց տեղը:

Քայլերը լավեցին ավելի ուժգին, վերջապես նրանք հնչեցին դռան ետևում, և ծանր քայլերով սենյակ մտավ հաստամարմին, մոխրագույն հագուստով մի մեծ տղամարդ՝ կարմիր, գեր դեմքով, որի թեթևակի ուռած կոպերի տակից խորամանկորեն մեզ էին նայում մանր, փայլուն աչքերը: Նրա ետևից ներս մտավ ոստիկանական համազգեստով տեսուչը, այնուհետև՝ տակավին դողդողացող Թադեուշ Շոլտոն:

— Այ՛քեզ գործ, — խուլ, խռպոտ ձայնով բացականչեց ներս մտնողը: Ո՞վ կա այստեղ: Ինչու՞ են այսքան մարդ այստեղ հավաքվել, ինչպես ճագարները՝ բանջարանոցում:

— Դուք երևի ինձ կհիշեք, միստր Էթելնի Ջոնս, — հանգիստ ասաց Հոլմսը:

— Պարզ է, հիշում եմ, — խռպոտ ձայնով պատասխանեց նա: — Դուք միստր Հոլմսն եք, տեսաբան Շերլոկ Հոլմսը: Երբեք չեմ մոռանա, թե ինչպես դուք մեզ դաս տվեցիք, բացատրելով, թե ուր էին անհետացել բիշոպգեյթյան աղամանդները: Արդարությունը պահանջում է նշել, որ մեզ ճիշտ ուղի ցույց տվիք: Բայց հիմա կարող եք խոստովանել, որ այն ժամանակ պարզապես երջանիկ պատահականությունը ձեզ օգնեց:

— Այն ժամանակ ինձ օգնեց հասարակ տրամաբանությունը:

— Դե լավ, լավ: Երբեք մի ամաչեք ճմարտությունից: Դե, ի՞նչ է այստեղ կատարվել: Կեղտոտ գործ: Կեղտոտ: Փաստերը, բարեբախտաբար, առկա են, այնպես որ ոչ մի տեսություն այստեղ պետք չէ: Բարեբախտաբար, ես Նորվուդ էի եկել ուրիշ գործով: Եվ հանկարծ այս մահը Պոնդիշերի-Լոջում: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է եղել:

— Տեսությունն այստեղ պետք չէ, — չոր պատասխանեց Հոլմսը:

— Իհարկե, իհարկե: Բայց չէ որ մենք չենք բացառում, որ դուք երբեմն զարմանալիորեն նշանակակետին եք խփում: Ողորմած աստված: Որքան հասկանում եմ, դուռը կողպած էր: Հըմ, հըմ. . . Կորել են կես միլիոնի արժողությամբ թանկարժեք իրեր: Իսկ պատուհանը:

— Նույնպես փակ է, բայց պատուհանի զոզին հետքեր կան:

— Գերազանց է, գերազանց, բայց եթե փակ է, ապա հետքերը ոչ մի կապ չունեն գործի հետ: Դա հուշում է առողջ դատողությունը: Մարդը կարող է մահանալ կաթվածից: Բայց չէ որ կորել են թանկարժեք իրեր: Ահա: Ես վարկած ունեմ: Երբեմն իմ միտքն էլ է պայծառանում: Խնդրում եմ, մի կողմ քաշվեք, սերժանտ, և դուք, միստր Շոլտո: Ձեր ընկերը կարող է մնալ իր տեղում: Դուք ի՞նչ եք մտածում այս մասին, Հոլմս: Շոլտոն, ինչպես ինքն անձամբ խոստովանեց, երեկ ամբողջ երեկոյան եղել է եղբոր մոտ: Եղբայրը կաթվածահար է եղել, որից հետո Շոլտոն գնացել է և հետը տարել ամբողջ թանկարժեք իրերը: Դե, ի՞նչ կասեք:

— Որից հետո մահացած տանտերը շրջահայացորեն վեր է կացել տեղից և ներսից փակել դուռը:

— Հըմ, հըմ: Դրանում է իմ վարկածի թույլ տեղը: Օգնության կանչենք առողջ դատողությունը: Այս Թադեուշ Շոլտոն եկել է եղբոր մոտ: Վեճ է առաջացել: Դա մեզ հայտնի է: Եղբայրը սպանված է, թանկարժեք իրերը՝ անհետացած. դա էլ է հայտնի: Թադեուշի գնալուց հետո եղբորը ոչ ոք չի տեսել: Անկողնուն ձեռք չի տրված: Թադեուշը բացահայտորեն ընկնում է խուճապի մեջ: Ինչպես տեսնում եք, ես Թադեուշի շուրջը ցանց եմ հյուսում: Եվ ցանցը ձգվում է:

— Բայց մեզ դեռ հայտնի չեն բոլոր փաստերը, — նկատեց Հոլմսը: — Տեսնում եք այս փուշը, ես բոլոր հիմքերն ունեմ ենթադրելու, որ այն թունավորված է: Դա գտել են սպանվածի գլխի մեջ խրված: Այնտեղ հետք է մնացել: Սեղանին ընկած էր ահա այս գրությունը, կարդացեք: Կողքին այս տարօրինակ զենքն էր՝ քարե վերջույթով: Ձեր վարկածն ինչպես է բացատրում այս փաստերը:

— Շատ լավ է բացատրում, — ճոռումաբար պատասխանեց ճարպակալած խուզարկուն: — Տունը լիքն է հնդկական հազվագյուտ իրերով: Եվ Թադեուշն այստեղ է բերել այդ իրը: Իսկ եթե փուշը թունավորված է, ապա այն միանգամայն հեշտ էր օգտագործել որպես սպանելու զենք: Այս երկտողը ճարպիկ արարք է, ուշադրությունը շեղելու համար: Միայն մի բան է անհասկանալի, ի՞նչ ճանապարհով է Թադեուշը դուրս եկել այստեղից: Ահա, առաստաղին անցք կա: Իհարկե այնտեղից, սրա միջով:

Գիրության համեմատ անսպասելի ճարպկությամբ նա վեր բարձրացավ աստիճաններով և չքացավ անցքի մեջ: Այդ ընթացքին մենք լսեցինք նրա հանդիսավոր ձայնը: Նա բղավում էր, թե ձեռնահարկից կտուր է տանում ձեռնապատուհանը:

Նա, հավանաբար, այնտեղ ևս ինչ-որ բան կգտնի, — ուսերը թոթվելով խոսեց Հոլմսը: — Երբեմն նրա մոտ կարծես նկատվում են մտքի պայծառացումներ: Il n'y a pas des sotsi incommodes gue ceux qui ont de lesprit :

— Ահա, տեսնում եք, — ասաց Էթելնի Ջոնսը իջնելով աստիճաններից: — Փաստերը հուսալի են ամեն տեսակի տեսությունից: Իմ վարկածը հաստատվում է ամբողջապես: Ձեռնահարկում տանիք տանող պատուհան կա: Եվ դա նույնիսկ կիսաբաց է:

— Ես եմ բացել:

— Իսկապե՞ս: Ուրեմն դուք է՞լ եք տեսել:

Ջոնսը ակնհայտորեն վստահությունը կորցրեց, լսելով Հոլմսի խոսքերը:

— Կարևոր չէ, թե ով է առաջինը դա նկատել, — ասաց նա հաշտվողաբար: Կարևորն այն է, որ այժմ պարզ է, թե նա ինչպես է ե դուրս եկել այստեղից: Տեսու՛՛չ:

— Այո սըր, — ձայնը միջանցքից էր:

— Այստեղ հրավիրի միստր Շոլտոյին: Միստր Շոլտո, իմ պարտքն է նախազգուշացնել, որ ձեր բոլոր խոսքերը կարող են ձեր դեմ շրջվել: Թագուհու անունից ձերբակալում եմ ձեզ որպես մի անձի, որ մեղսակից է իր եղբոր սպանությանը:

— Ահա: Ես ձեզ ասացի, — բացականչեց մարդուկը արտասովալից ձայնով՝ ձեռքերը մեկնելով մեր կողմը:

— Մի հուսահատվեք, միստր Շոլտո, — ասաց Հոլմսը: — Կարծում եմ, որ կկարողանամ հանել այդ մեղադրանքը:

— Շատ բան մի խոստացեք, միստր տեսաբան, մի խոստացեք, —
բացականչեց խուզարկուն: — Սա կարող է այնքան էլ հասարակ գործ չլինել:

— Ես ոչ միայն միստր Շոլտոյի վրայից կհանեմ մեղադրանքը, միստր Ջոնս,
այլ ձեզ կնվիրեմ անցյալ երեկո այս սենյակում գտնվող երկու մարդկանցից
մեկի անունն ու նշանները: Ես բոլոր հիմքերն ունեմ պնդելու, որ նրա անունը
Ջոնսթան Սմոլ է: Նա համարյա անգրագետ է, միջահասակ, արագաշարժ, աջ
ոտք չունի, քայլում է դեպի ներս ծոված փայտե ոտքով: Չախ ոտքին կոպիտ,
երկաթե պայտով, քառակուսի քթով կոշիկ է: Նախկին տաժանակիր է, տարիքը
քառասունի մոտ, ուժեղ արևահարված: Ահա մի քանի նշան, որոնք կարող են
ձեզ օգնել. ավելին, այս պարանի վրա արյուն կա՝ երեկ երեկոյան նա այստեղ
մաշկել է իր ափը: Մյուսը . . .

— Ա՛խ, ուրիշն էլ կա, — ծաղրանքով խոսեց Էթելնի Ջոնսը, բայց նկատելի էր,
որ հանցագործին նկարագրող Հոլմսի վստահ տոնը ազդեց նրա վրա:

— Սա բավականին հետաքրքիր անձնավորություն է, — ասաց Հոլմսը կրնկի
վրա շրջվելով: — Հուսով եմ, որ շատ շուտով ձեր ձեռքը կտամ այդ գույզին:
Ուռտսոն, պետք է ձեզ մի քանի բառ ասեմ:

Նա ինձ սանդղահարթակ տարավ:

— Իրադրության անսպասելի շրջադարձը ստիպեց մեզ մոռանալ մեր
ճանապարհորդության սկզբնական նպատակը, — ասաց նա:

— Ես էլ հենց դրա մասին էի մտածում, — պատասխանեցի ես: — Չի կարելի,
որ միսս Մորսթենն ավելի երկար մնա այս չարաբաստիկ տանը:

— Չի կարելի: Դուք պետք է նրան տուն ուղղեկցեք: Նա ապրում է Լոուեր-
Քամբերուելում՝ միսիս Մեսիլ Ֆորեսթերի մոտ: Դա այնքան էլ հեռու չի
այստեղից: Եթե դուք որոշեք վերադառնալ, ես ձեզ այստեղ կսպասեմ: Բայց
գուցե շա՛տ եք հոգնել:

— Բնավ: Չեմ կարողանա քնել, քանի դեռ այս ֆանտաստիկ պատմությունն
ինձ համար որոշ չափով չպարզվի: Եվ մեկ անգամ չէ, որ գտնվել եմ
արտակարգ բարդ և սուր իրավիճակներում, բայց պետք է խոստովանեմ,
այսօրվա կատարվածը, այդ իսկապես անհավանական իրադարձությունները,
ինձ հանեցին հավասարակշռությունից: Եվ քանի որ հայտնվեցի
իրադարձությունների հորձանուտում, ձեզ հետ կմնամ մինչև վերջ:

— Ձեր ներկայությունն ինձ շատ անհրաժեշտ կլինի, — ասաց Հոլմսը: —
Մենք այս գործն ինքնուրույն կվարենք: Եվ թող Ջոնսը միսիթարվի իր
երևակայությամբ: Երբ տանեք միսս Մորսթենին, խնդրում եմ անցեք Լամբեթ,
Պինչին- լեյն փողոց, 3՝ Դա հենց գետեզրին է: Աջ կողմի երրորդ տանը
բնակվում է իրավիլակ պատրաստող Շերմանը, նա թոչունի իրավիլակ է
պատրաստում: Նրա պատուհանին նապաստակի ձագ բռնած կղաքիս
կտեսնեք: Արթնացրեք Շերմանին, բարևներս հաղորդեք և ասեք, որ ինձ
անհապաղ թոբին է հարկավոր: Վերցրեք թոբիին և բերեք այստեղ:

— Շու՞ն է:

— Այո, զվարճալի շուն է, ոչ գտարյուն, բայց շշմեցնող հոտառությամբ:
Գերադասում եմ օգտվել թոբիից, քան Լոնդոնի ողջ խուզարկու ուժերից:

— Կբերեմ, — պատասխանեցի ես: Կվերադառնամ երեքին մոտ, եթե ուրիշ
ձի գտնեմ:

— Իսկ ես, — ասաց Հոլմսը, — կփորձեմ ինչ-որ բան իմանալ միսիս
Բերստոնից և հնդիկ սպասավորից, որն, ինչպես միստր Թադեուշն ասաց,

քնում է խորդանոցի ձեռնահարկում: Հետո կգրադվեմ մեծն միստր Ջոնսի մեթոդներն ուսումնասիրելով և կլսեմ նրա ծաղրական ու ոչ նրբանկատ դիտողությունները: "Wir sind gewohnt, dass die Menschen verhonen was sie nicht verstehen". Գյոթեն, ինչպես միշտ, խորիմաստ է ու հակիրճ:

Գլուխ 7 — Տակառի միջադեպը

Ոստիկաններն եկել էին երկու կառքով, մեկից ես օգտվեցի, որպեսզի միսս Մորսթենին տուն տանեմ: Ունենալով կարեկցանքի բարձր զգացում, միսս Մորսթենը այս ամբողջ սարսափելի երեկոյի ընթացքում իրեն տոկուն էր պահում, քանի դեռ կողքին օգնության կարիք ունեցող մարդ կար: Երբ ներքև իջա, նա սիրալիր և հանգիստ խոսում էր վախեցած տնտեսուհու հետ: Իսկ երբ միսս Մորսթենի հետ երկուսով հայտնվեցինք կառքում, նա հանկարծ ամբողջովին ուժասպառվեց, իսկ հետո անմխիթար հեկեկաց՝ այնպես ուժեղ էին վրան ազդել այդ երեկոյի իրադարձությունները: Հետագայում ինձ ասաց, որ կառքով այդ ճանապարհորդության ընթացքում ես նրան սառն ու խորթ եմ թվացել: Չէր էլ կասկածել, թե իմ մեջ ինչ պայքար էր գնացել և ուժերի ինչպիսի լարումով էի զսպել ինձ: Նույն կարեկցանքով և քնքշությամբ էի լեցուն նրա հանդեպ, ինչպես այնտեղ՝ այգում, երբ իրար ձեռք էինք բռնել: Ես հասկացա, որ այդ անհավանական մեկ օրվա ընթացքում ավելի լավ իմացա նրա քաջ և բարի սրտի մասին, քան կիմանայի իմ անխոռով շատ տարիների ընթացքում: Բայց երկու հասկացություն խանգարում էին ինձ ինչ-որ բան ասել: Նա անպաշտպան էր և թույլ, նրա նյարդերը խիստ խանգարված էին: Այժմ հայտնել իմ սիրո մասին, կնշանակեր օգտվել նրա անօգնական վիճակից: Բայց ամենավատն այն էր, որ նա շատ հարուստ էր: Եթե Հոլմսի որոնումները հաջողությամբ ավարտվեին, նա կդառնար գտնված գանձերի, ծայրահեղ դեպքում դրանց կեսի ժառանգորդը: Արդարացի կլինե՞ր, ազնիվ կլինե՞ր, եթե կես աշխատավարձով պաշտոնաթող վիրաբույժը օգտվեր պատահականության կողմից իրեն ընձեռնված բոլորական մոտիկությունից: Նա արդո՞ք ինձ չէր ընդունի որպես սովորական հարուստ հարսնացու որոնողի: Ես չէի կարող թույլ տալ, որ նա այդպես մտածեր իմ մասին: Ագրայի այդ գանձերն անհաղթահարելի արգելքի նման ընկած էին մեր միջև:

Ժամը երկուսին մոտ էր, երբ հասանք միսիս Մեսիլ Ֆորեսթերի տանը: Մպասավորները վաղուց արդեն քնել էին, բայց միսիս Ֆորեսթերը տակավին չէր պառկել և սպասում էր միսս Մորսթենին՝ նրան այնքան հետաքրքրել էր իր ընկերուհու ստացած տարօրինակ նամակը: Ինքն անձամբ բացեց դուռը: Միջին տարիքի շատ հաճելի կին էր նա: Ուրախությամբ նկատեցի, ինչպիսի փայփայանքով գրկեց միսս Մորսթենին և ձայնն էլ մայրաբար հնչեց: Հասկանալի էր, որ միսս Մորսթենը ոչ միայն ծառայող էր, այլև ընկեր: Միսս Մորսթենն ինձ ներկայացրեց միսիս Ֆորեսթերին և, չնայած ուշ ժամին, վերջինս առաջարկեց տուն մտնել և պատմել մեր արկածների մասին: Բայց ես բացատրեցի Հոլմսի հանձնարարության կարևորությունը և խոստացա մոտ ժամանակներս նրանց այցելել և պատմել գործի ընթացքի մասին: Երբ կառքը մի քիչ հեռացավ, ես ետ նայեցի և մինչև հիմա աչքիս առաջ է այդ պատկերը. իրար գրկած երկու նրբազեղ կանացի կերպարանք՝ սանդղահարթակի վրա,

բացված շքամուտքի դուռ, ներքին դռան անթափանց ապակու միջով լուսավորված նախասենյակ, պատին՝ բարոմետր, շլացուցիչ մաքրությամբ սանդուղքի երկաթյա բազրիքներ: Ինչ հանգստացնող ազդեցություն թողեց ինձ վրա անգլիական տան հանգիստ հարմարակեցությունը: Մի րոպե նույնիսկ մոռացա այդ հանելուկային, սարսափելի գործը:

Եվ ինչքան շատ էի մտածում դրա մասին, այնքան ավելի հանելուկային և սարսափելի էր դա ինձ թվում: Քանի դեռ կառքը դղրդալով անցնում էր խաղաղ, գազալապտերներով լուսավորված գիշերային փողոցներով, հիշեցի անցյալ ցերեկվա և երեկոյան անհավանական իրադարձությունների շղթան: Մկզբնական խնդիրը լրիվ պարզվեց: Կապիտան Մորսթենի մահը, ստացած մարգարիտները, թերթի հայտարարությունը, նամակը, այս բոլորն արդեն գաղտնիք չէին, բայց փոխարենը մեր առջև առավել հանելուկային և ողբերգական գաղտնիք էր ծառայել: Կապիտան Մորսթենի իրերի մեջ հայտնաբերված անհասկանալի հատակագիծը, հնդկական գանձը, մայրո Շոլտոյին մահվան հասցնող տարօրինակ իրադարձությունները, գաղտնարանի հայտնաբերումը, հայտնաբերողի սպանությունը, սպանության յուրահատուկ հանգամանքները, տարօրինակ հետքերը, տարօրինակ գենքը, թղթի կտորի վրա խզրզված նույն բառերը, որոնք կային նաև Մորսթենի հատակագծի վրա. իսկական լաբիրինթոս էր, որտեղ մարդը, եթե օժտված չլիներ ընկերոջս՝ Շերլոկ Հոլմսի բացառիկ ունակություններով, անպայման կմոլորվեր՝ կորցնելով երբևիցե էլք գտնելու ամեն մի հույս:

Պինչին-Լեյնը Լամբետի ներքևի մասի երկհարկանի հին աղյուսաշեն տների շարքում էր գտնվում: Երկար թակեցի համար 3 տան դուռը: Վերջապես, պատուհանի երկփեղկի ետևից փայլեց մոմի լույսը, և երկրորդ հարկի պատուհանում մի դեմք հայտնվեց:

— Անմիջապես այստեղից չքվիր, հարբած անասուն, — հնչեց վերևից: — Եթե դու չդադարես դուռը կոտրել, կբացեմ դռները և վրադ բաց կթողնեմ քառասուներեք շուն:

— Ինձ հարկավոր է դրանցից մեկը, դրա ետևից էլ եկել եմ:

— Չքվի՛ր, — գոռաց ձայնը: — Զամբյուղիս մեջ օձ կա: Եթե չգնաս, գլխիդ կզցեմ:

— Ինձ շուն է հարկավոր, ոչ թե օձ, — ի պարասխան բղավեցի ես:

— Չանձրացա քեզ հետ վիճելուց: Հաշվում եմ մինչև երեքը: Եթե չգնաս՝ օձը կզցեմ:

— Միստր Շերլոկ Հոլմսը, — սկսեցի ես:

Շերլոկ Հոլմսի անունը կախարդական ներգործություն ունեցավ, քանի որ փեղկն անմիջապես փակվեց, իսկ մեկ րոպե անց բանալիները զնգացին, և դուռը բացվեց: Պարզվեց, որ միստր Շերմանը երկարահասակ, նիհար, կորացած ուսերով և կապույտ ակնոցով ծերունի էր:

— Շերլոկ Հոլմսի ընկերը միշտ ցանկալի հյուր է այս տանը, — ասաց նա: Մտեք սրբ: Փորսուղից հեռու մնացեք, նա կծում է: Թու, ինչ ամոթ է: Դու ուզում ես կծել այս պարոնին: — Այս բառերն ուղղված էին կղաքիսին, որն իր կարմիր աչքերով գիշատիչ մոուրթը խցկում էր վանդակի երկաթե ճաղերի արանքը: — Ուղիղություն մի դարձրեք սրան: Մա ընդամենը օձաձև մողես է: Թունավոր չէ, և ես թույլ եմ տալիս նրան սենյակում վազվզել: Նա ոչնչացնում է բզեզներին: Մի գայրացեք վրաս, որ սկզբում մի քիչ կոպիտ էի: Փրկություն չկա

երեխաներից: Միքում են քաշ գալ պատուհանիս տակ: Ինչո՞վ կարող եմ
օգտակար լինել միստր Շերլոկ Հոլմսին, սրբ:

— Նրան հարկավոր է ձեր շունը:

— Ա՛, նրան Թոբին է հարկավոր:

— Այո, հենց Թոբին:

— Թոբին ապրում է այստեղ, ձախ կողմի համար յոթում:

Նա մոմը ձեռքին դանդաղ քայլեց այս զարմանալի կենդանաբանական
քաղաքով: Մոմի աղոտ լույսի ներքո, ամեն մի անկյունում, ամեն մի ճեղքում ես
նկատում էի մեզ հետևող պսպղուն, թարթուն աչքեր: Մեր գլխավերևում,
առաստաղի գերաններին թառել էին անհամար թռչուններ, որոնք մի ոտքից
մյուսին էին հենվում, երբ մեր ձայներն անհանգստացնում էին նրանց:

Պարզվեց, որ Թոբին մի փոքրիկ, երկարամազ և երկարականջ
շոտլանդական և իսպանական խուզարկուի խառնածին էր: Նա
սպիտակադարչնագույն էր և ուներ ծիծաղելի օրորվող քայլվածք: Մի փոքր
տատանվելուց հետո շունն ինձնից վերցրեց ծերունու տված շաքարի կտորը և
այդ ձևով դաշինք կնքելով, առանց հորդորանքի հետս կառք մտավ: Երբ այդ
գիշեր երկրորդ անգամ հայտնվեցի Պոնդիշերի-Լոջի դարպասների մոտ,
Լամբետի եպիսկոպոսի պալատի վրա խփեց ժամը երեքը: Ինչպես իմացա,
նախկին պրոֆեսիոնալ բնցքամարտիկ Մաք-Մուրդոն ձերբակալվել էր
սպանության մեղսակցի կասկածանքով և միստր Շոլտայի հետ ուղարկվել
ուստիկանատուն: Նեղ շքամուտքի դռանը հերթապահում էին երկու
ուստիկաններ, բայց ինձ շան հետ անմիջապես ներս թողեցին, հենց որ սվեցի
հայտնի խուզարկուի անունը:

Հոլմսը կանգնել էր շեմին, ձեռքերը գրպանում, և ծխում էր ծխամորճը:

— Ա՛, բերեք դրան, — ասաց Հոլմսը ինձ տեսնելով: — Լավ շուն է: Էթելնի
Ջոնսը գնաց: Մինչ ձեր գալը մենք վկա եղանք նրա անսանձելի եռանդին: Նա
ձերբակալեց ոչ միայն մեր ընկերոջը՝ Թադեուշ Շոլտոյին, այլև տնային
տնտեսուհուն և հնդիկ ծառային: Այնպես որ, մենք այստեղ մենակ ենք,
չհաշված վերևի աշխատասենյակում գտնվող սերժանտին: Շանն այստեղ
թողեք, գնանք ինձ հետ:

Թոբին կապեցինք նախասրահի սեղանին և աստիճաններով բարձրացանք:
Մենյակը նույն վիճակում էր, ինչպես թողել էի, միայն սենյակի մեջտեղի դիակը
ծածկված էր սավանով: Անկյունում կուչ էր եկել սերժանտը:

— Տվեք ինձ ձեր լապտերը, սերժանտ, — ասաց Հոլմսը: — Իսկ հիմա ետևից
կապեք այս բարակ թոկը, որպեսզի լապտերը կրծքիս կախված մնա:

Կոշիկներս և կիսագուլպաներս կհանեմ: Դրանք ներքև տարեք, Ուոտսոն:
Ցանկանում եմ փորձել վերնաշխատողի մասնագիտությունը: Խնդրում եմ,
թաշկինակս մտցրեք կրեոզոտի մեջ: Այդպես, լավ: Իսկ այժմ, որոշ ժամանակով
բարձրանանք վերև:

Մենք նորից բարձրացանք ձեղնասանդուղքով և առաստաղի անցքի միջով
սողոսկեցինք ձեղնահարկ: Հոլմսը լապտերի լույսը ուղղեց փոշու միջի
տարօրինակ հետքին:

— Մրանք շատ հետաքրքիր հետքեր են, — ասաց նա: — Ինչ-որ տարօրինակ
բան չէ՞ք նկատել:

— Մրանք երեխայի հետքեր են, — պատասխանեցի ես, — կամ նրբագեղ
կնոջ:

— Եթե դատենք դրանց չափից: Իսկ ուրիշ ի՞նչն է դրանցում զարմացնում:
— Իմ կարծիքով, դրանք այլևս ոչնչով չեն տարբերվում մյուս հետքերից:
— Տարբերվում են, այն էլ ինչպես: Նայեք: Փոշու միջի աջ ոտնաթաթի հետքին: Կողքին դնում եմ իմ ոտնաթաթը: Ո՞րն է տարբերությունը:
— Ձեր մատները կպածեն մեկմեկու: Փոքրիկ հետքի բոլոր մատները չոված են:

— Միանգամայն ճիշտ է: Շատ կարևոր է դա հիշել: Իսկ այժմ մոտեցեք ձեռնապատուհանին և հոտոտեք լուսամուտագոգը: Ես թաշկինակով կմնամ այստեղ:

Այդպես էլ արեցի և զգացի կուպրի ուժեղ հոտը:

— Ահա թե ուր է դրել ոտքը, երբ հեռացել է այստեղից: Եթե դուք գտաք նրա հետքը, Թոբին նույնպես կգտնի: Իսկ այժմ իջեք ներքև, արձակեք շանը և հետապնդեք համար Առաջինին:

Երբ բակ դուրս եկա, Շերլոկ Հոլմսը արդեն տանիքին էր, որի վրայով դանդաղ սողում էր, ինչպես հսկա լուսատիկ: Նա մեկ կորում էր խողովակների ետևում, բայց շուտով նորից հայտնվում ու դարձյալ անհետանում. հավանաբար, սկսել էր իջնել կտուրի հակառակ կողմի թեքությամբ: Շրջանցեցի տունը և տեսա, որ նա արդեն նստած է քիվի վրա՝ անկյունի ջրհորդանի կողքին:

— Ուոտսոն, այդ դու ք եք, — բղավեց նա վերևից:

— Ես եմ, — պատասխանեցի:

— Ահա թե նա որտեղից է բարձրացել: Ի՞նչ կա այդտեղ, ներքևում:

— Տակառ:

— Վրան կափարիչ կա՞:

— Կա:

— Իսկ մոտակայքում սանդուխք չի՞ երևում:

— Ոչ:

— Այ քեզ սատանա: Այստեղ փորձանքի էլ կգաս: Բայց նրա անցած ճանապարհը ես պիտի անցնեմ: Ջրհորդանը բավականաչափ ամուր է: Դե, իջնում եմ: Լավեց բոբիկ ոտքերի քստքստոց, և լապտերի լույսը ներքև սահեց: Հետո Հոլմսը թեթևորեն թռավ տակառի կափարիչին, այնտեղից էլ՝ գետնին:

— Դժվար չէր նրա հետքով գնալը, — ասաց նա՝ հագնելով կիսագուլպաներն ու կոշիկները: — Կղմինդրները, որոնց վրա նա ոտք էր դրել, թուլացել են, և շտապելուց ահա թե նա ինչ է կորցրել: Մա հաստատում է իմ ախտորոշումը, ինչպես սիրում եք ասել դուք՝ բժիշկներդ:

Նա ինձ մեկնեց գունավոր ծղոտից հյուսված և էժանագին ուլունքներով զարդարված քսակի պես ինչ-որ բան: Ձևով ու տեսքով դա հիշեցնում էր ծխախոտատուփ: Մեջը կես դյուժին երկար, մուգ փշեր կային, մի ծայրը սուր, մյուսը՝ կլորավուն, ճիշտ այնպիսին, որով խոցել էին Բարթոլոմյու Շոլտոյին:

— Մատանայական ասեղներ են, — խոսեց Հոլմսը: — Ջգույշ, չծակեք ձեզ: Շատ ուրախ եմ, որ դրանք գտա: Դժվար թե նա էլի ունենա: Այժմ կարելի է չվախենալ, որ այդպիսի փուշը կարող է ծակել ձեր կամ իմ մաշկը: Ես ավելի շուտ կգերադասեի գնդակ ստանալ մարտական գնեքից: Դե ինչ, Ուոտսոն, վեց միլանոց վագրի համար դուք ձեզ առույգ զգու՞մ եք:

— Իհարկե, — պատասխանեցի ես:

— Ոտքդ կղիմանա՞:

— Կոնիմանա:

— Այստեղ արի, Թոբի: Այստեղ արի, լավ շնիկ: Հոտոտիր, Թոբի: Հոտոտիր:

Հովմար շան դնչին մոտեցրեց կրեոզոտի մեջ թաթախված թաշկինակը: Իր փոշոտ թաթերը չռելով և ծիծաղելիորեն մի ականջը վեր գցելով, Թոբին հոտոտեց թաշկինակը՝ հին գինու համ ու հոտից հաճույք ստացող համտեսի պես: Հովմար թաշկինակը նետեց հեռու, հաստ թուր կապեց շան վզնոցին և նրան մոտեցրեց տակառին: Շունն անմիջապես սկսեց քիթը գետնին քսելով սուր, գրգռված հաչել և պոչը գցելով, հետքով այնքան արագ սուրաց, որ վզափուկը ձգվեց, և մենք ամբողջ ուժով սլացանք նրա ետևից:

Արևելքը մի փոքր շառագունեց, և արդեն առավոտյան աղջամուղջում կարող էինք տարբերել շրջակայքի առարկաները: Մեծ, արկղի նման տունը սև, խարխուլ պատուհաններով և բարձր, մերկ պատերով, տխուր ու լուռ խոյանում էր մեր ետևում: Մեր ճանապարհն ընկած էր պարտեզի, այն բոլոր ուղղություններով հատող փոսերի ու առվակների միջով: Վաղուց այգեպանի մկրատ չտեսած թփերով, ծառերով, հողի ու աղբի կույտերով լի այս վայրը, մռայլ, լքված տեսք ուներ և լիովին ներդաշնակ էր այստեղ կատարված ողբերգությանը:

Թոբին հասնելով քարե պարսպին, բողոքող և անհամբեր վնգստոցով վազեց նրա երկայնքով և վերջապես կանգ առավ անկյունում, ամբողջ պարտեզից առանձնացված մատղաշ, բարձր հաճարենու մոտ: Այնտեղ, ուր պատերը միանում էին իրար, մի քանի աղյուսներ տեղաշարժված էին՝ կարծես աստիճաններ կազմելով, որոնց մաշված և կլորացած անկյուններն ասում էին, որ դրանցից հաճախակի են օգտվել: Հովմար բարձրացավ դրանց վրայով և ձեռքիցս վերցնելով Թոբիին, նստեց գետնին:

— Այստեղ փայտե ոտքով մարդու ձեռնահետքեր կան, — ասաց Հովմար, երբ բարձրացա նրա մոտ: — Տեսնու՞մ էք արյան բիծը ձերմակ ներկի վրա: Ինչ հաջողություն է, որ երեկվանից անձրև չի եկել: Հոտը մնացել է ճանապարհին, չնայած այստեղով անցել են քսանութ ժամ առաջ:

Խոստովանում եմ, այդ հարցում մի քանի կասկածներ ունեի, երբ մտածում էի, թե ինչ աշխույժ երթևեկություն է լինում լոնդոնյան փողոցներում: Բայց շուտով կասկածներս փարատվեցին: Թոբին, ոչ մի բույր չտատանվելով, առաջ վազեց, ընթացքում ծիծաղելիորեն օրորվելով: Կրեոզոտի սուր հոտը ծանապարհին հաղթեց մնացած բոլոր հոտերին:

— Խնդրում եմ չմտածեք, — ասաց Հովմար, — թե միայն այս պատահականության շնորհիվ հանցագործները շուտով կհայտնվեն մեր ձեռքում: Այժմ այնքան շատ բան գիտեմ, որ դրանց բռնելու մի քանի միջոց եմ տեսնում, բայց սա, իհարկե ամենահեշտն ու արագն է: Հիմարություն կլինեք դրանից չոգտվել, քանի որ ճակատագիրն այդքան բարյացակամ է մեր հանդեպ: Բայց այս երջանիկ դիպվածը ինձ վատ ծառայություն մատուցեց՝ լուծումը դադարեց գուտ տրամաբանական լինելուց, որպիսին սկզբում նախատեսել էի: Այդ դեպքում գործն իսկապես ինձ դափնիներ կպարգևեր:

— Էլ ինչ դափնիներ են ձեզ պետք, Հովմար: Ես հիացած եմ ձեր դեղուկտիվ մեթոդով: Այսպիսի փայլուն հաջողություն: Այն սովեր գցեց անգամ Հոուպ Ջեֆերսոնի գործին: Ինձ թվում է, Նորվուդյան գործն ավելի բարդ ու հանելուկային է: Բացատրեք ինձ, օրինակ, որտեղից է ձեզ այդքան ստույգ հայտնի փայտե ոտքով մարդու արտաքինը:

— Այս, իմ թանկագին Ուոտսոն: Չ՞ է որ դա շատ պարզ է: Եվ դա ձեզ ասում եմ ոչ կեղծ համեստությունից: Բանտային պահակության երկու սպաներ դառնում են կարևոր գաղտնիքի տեր: Ջոնաթան Սմոլ անունով անգլիացին գծել և նրանց է տվել գանձի տեղը ցույց տվող պլանը: Դուք հիշում եք, կապիտան Մորսթենի նոթատետրում գտնված գծագրի վրա հենց այդ անունն էր: Որոշակի հավակնությամբ նա նկարել էր «չորսի նշանը» և ստորագրել իր ընկերների անունից: Օգտվելով գծագրից և, ինչպես կարելի է գուշակել, խախտելով համաձայնությունը, որի օգնությամբ տիրեցին գանձին, սպաները, հնարավոր է նաև նրանցից մեկը, գանձը տեղափոխեցին Անգլիա: Կարելի է հարցնել. ինչու՞ Ջոնատան Սմոլն անձամբ չտիրեց գանձին: Դա էլ է պարզ: Եթե հիշում եք, գծագրի վրա գրված է այն թվականը, երբ Մորսթենը մշտապես շփվում էր բանտարկյալների հետ: Այստեղից հետևում է, որ Ջոնաթան Սմոլն իր ընկերների հետ այդ ժամանակ գտնվել է բանտում, և, հետևաբար, ինքը չէր կարող տիրել գանձերին:

— Դա զուտ ենթադրություն է, — ասացի ես:

— Ավելին, քան ենթադրություն: Մա տեսակետ է, որն առանց բացատրելու փաստերը, բացատրում է ամեն ինչ: Եկեք ստուգենք: Մայրո Շոլտոն ապրում է հանգիստ, բավականություն ստանալով գանձերից, որոնք անվեհապահորեն գտնվում էին նրա տիրապետության տակ: Հետո հանկարծ Հնդկաստանից նամակ է ստանում, որը վախեցնում է նրան մահու չափ: Ի՞նչ կարող էր հայտնել նամակը:

— Այն, որ այն մարդը, որի հետ անարդարացի են վարվել, ազատ է արձակված: Կամ փախել է: Որն ավելի հավանական է, քանի որ մայրո Շոլտոն անկասկած գիտեր Ջոնատան Սմոլի և նրա ընկերների բանտարկության ժամկետը: Եվ եթե ժամկետը լրացած լիներ, նրա հայտնվելն այդ աստիճան չէր վախեցնի: Նա ի՞նչ է անում: Խելացնորության աստիճանի վախենալով փայտե ոտքով մարդուց, ի միջիայլոց, սպիտակ, նա զինվում է և դաստակերտի դարպասներին հուսալի պահակախումբ է կարգում: Հիշում էք, շփոթվելով կրակել է կաղ առևտրականի վրա: Այնուհետև, գծագրի վրա միայն մեկ անգլիացու անուն կա: Մնացածները հնդկական են կամ մահմեդական: Այդ պատճառով մենք հավատացած կարող ենք ասել, որ փայտե ոտքով մարդը հենց Ջոնատան Սմոլն է: Առայժմ ձեզ չի՞ թվում, որ իմ դատողությունները մեղանչում են տրամաբանության դեմ:

— Ոչ, ամեն ինչ պարզ է և համոզիչ:

— Լավ: Այդ դեպքում մեզ դնենք Ջոնաթան Սմոլի տեղը: Գործին նայենք նրա տեսանկյունից: Նա վերադառնում է Անգլիա՝ մտադրություն ունենալով վերցնել այն, ինչն իրավացիորեն համարում է իրենը, ինչպես նաև վրեժխնդիր լինել համաձայնագիրը դրժողից: Իմանում է, թե որտեղ է ապրում Շոլտոն և ամենայն հավանականությամբ կապի մեջ է մտնում ծառաներից մեկի հետ: Այնտեղ Լալ Ռաո անունով մի ծառայապետ կա, որին դեռ չենք տեսել: Միսիս Բերստոնը նրա մասին տհաճությամբ խոսեց: Սակայն Սմոլին չհաջողվեց գտնել թաքցրած գանձերի գաղտնարանը, որովհետև մայրից և հավատարիմ ծառայից բացի, որն արդեն մահացել է, ոչ ոք չգիտեր թաքստոցի տեղը: Անսպասելիորեն Սմոլն իմանում է, որ մայրը մահամերձ է: Հուսահատված, որ գաղտնիքն էլ հետը կտանի, Ջոնաթանը, ինչ-որ ձևով խաբելով դոնապանի զգոնությունը, թափանցում է պարտեզ և նայում մահացողի ննջարանի

պատուհանից ներս: Միայն մայրի անկողնու մոտ գտնվող երկու որդիների ներկայությունն է խանգարում նրան ներս մտնել: Կատաղությունից խելագարվելով՝ հենց նույն գիշեր նա սողոսկում է համգուցյալի սենյակը և ցանկանալով փնտրել գտնել արկղը, տակնուվրա է անում ամեն ինչ և որպես իր այցելության վկայություն թողնում է արդեն մեզ հայտնի «չորսի նշանը» : Անկասկած, նա նախօրոք որոշել էր սպանել մայրին և դիակի կողքին թողնել այդ գրությունը ի նշան այն բանի, որ դա ոչ թե սովորական սպանություն էր, այլ վրեժխնդրություն: Այսպիսի էժանագին էֆեկտի կրքերի օրինակի կարելի է հանդիպել հանցագործությունների տարեգրքում, իսկ դրանք սովորաբար անփոխարինելի բանալի են հանցագործի անձը պարզելու համար: Առայժմ ամեն ինչ պարզ է:

— Բացարձակապես ամեն ինչ:

— Լավ: Ի՞նչ է մնում անելու Ջոնաթան Սմոլին: Մնում է միայն գաղտնի հետևել տանը, որտեղ սկսել են փնտրել գանձը: Հնարավոր է, որ նա ապրել է Անգլիայի սահմաններից դուրս և միայն ժամանակ առ ժամանակ է այստեղ եկել: Հետո գտնվել է գաղտնարանը, և Սմոլին անմիջապես հայտնել են դրա մասին: Այստեղ դարձյալ հառնում է ներսի մեղսակից ունենալու խնդիրը: Ջոնաթան Սմոլն իր փայտե ոտքով չէր կարող հասնել այդպիսի բարձրության վրա գտնվող Բարթոլոմյու Շոլտոյի աշխատասենյակը: Այդ ժամանակ նա իր համար գտնում է տարօրինակ մի օգնական, որը ջրհորդանով հեշտությամբ մագլցում և հասնում է տանիքին, բայց բոբիկ ոտքով ընկնում է կրեոզոտի մեջ, որի հետևանքով գործի մեջ է մտնում Թոբին, և վիրավորված ոտքով պաշտոնաթող վիրաբույժը կատարում է վեց մղոնանոց մի շրջագայություն:

— Այսպես, ուրեմն, ոչ թե նա, այլ օգնականն է սպանել մայրին:

— Այո: Եվ դատելով սենյակում գտնվող Սմոլի հետքերից, նա դրանից դժգոհ է եղել: Սմոլն ասելություն չէր տաձում Բարթոլոմյու Շոլտոյի հանդեպ և գտնում էր, որ պետք էր միայն նրան կապկպել և բերանը փակել: Սմոլը բոլորովին չէր ցանկանում գլուխն օղակի մեջ մտցնել: Բայց կատարվածն, ինչպես ասում են, ետ չես բերի: Նրա հանցակցի մոտ արթնացել են վայրի զգացմունքները, և թույնն արել է իր գործը: Այսպիսին է գործի ընթացքն իմ պատկերացմամբ: Ինչ վերաբերում է արտաքինին, ապա նա, իհարկե, պետք է լինի միջին տարիքի և թուխ՝ Անդամանյան կղզիներում այդքան տարվա տաժանակիր աշխատանքից հետո: Քայլի երկարությունից հեշտ է հասակը որոշի, իսկ որ նա մորուք ունի, մենք գիտենք Թադեուշ Շոլտոյի պատմածից, որին առանձնապես շշմեցրել էր հոր մահվան օրը պատուհանում հայտնված դեմքի առատ մազածածկույթը: Ահա, ըստ էության, ամենը:

— Իսկ օգնականը:

— Ախ, հա՛, օգնականը, նրա մասին էլ ամեն ինչ պարզ է: Դուք շուտով ամեն ինչ կիմանաք: Ինչ լավ է շնչել առավոտյան մաքուր օդը: Տեսնու՞մ եք այն փոքրիկ ամպը: Լողում է ինչպես հսկա վարդաթևիկի վարդագույն փետուրը: Արևի կարմիր սկավառակը հազիվ է վեր բարձրանում լոնդոնյան մառախուղի միջով: Նա լուսավորում է շատ բարի մարդկանց, ովքեր սիրում են վեր կենալ լուսաբացին, բայց դժվար թե նրանց մեջ լինի մեկը, որը շտապի ավելի արտասովոր գործով, քան մենք: Այս տարերքների առկայությամբ ինչպիսի ոչնչություն է թվում մարդն իր խեղճ ինքնասիրությամբ և երազանքներով: Ինչպե՞ս է ձեր ժան Պոլը:

— Հիանալի: Նրան գտա Կարլեյլի միջոցով:

— Դա նույնն է, թե ամվակի հունով գնաս հասնես լճին՝ նրա ակունքին: Պուլը մի տարիմաստ, բայց խորը միտք է արտահայտել. ճշմարիտ մեծությունը սկսվում է սեփական ոչնչությունը հասկանալուց: Նա ենթադրում է, որ համեմատելով գնահատելու կարողությունը արդեն ինքնին խոսում է հոգու վեհության մասին: Ռիխտերը մտածելու համար շատ նյութ է տալիս: Ատրճանակ վերցրե՞լ եք:

— Ոչ, միայն ձեռնափայտ:

— Գուցե մեզ զենք պետք լինի, երբ խցկվենք նրանց որջը: Ջոնաթանին կվերցնեք ձեզ վրա: Եթե այն մյուսը սկսի դիմադրել, նրան պարզապես կգնդակահարեմ:

Հուլմսը հանեց իր ատրճանակը և երկու փամփուշտով լիցքավորելով նորից խցկեց պիջակի գրպանը:

Այդ ամբողջ ընթացքում հետքը մեկ սայլուղով, մեկ ասֆալտապատ ճանապարհով մեզ տանում էր դեպի Լոնդոն, և մենք շուտով հայտնվեցինք բանվորներով և նավահանգստի բեռնակիրներով լեցուն փողոցների լաբիրինթոսում: Փնթի տեսքով կանայք բացում էին փեղկերը և ավլում մուտքի աստիճանները: Փողոցներից մեկի անկյունի գինետանը կյանքն արդեն ետում էր, այնտեղից անընդհատ հայտնվում էին մորուքավոր տղամարդիկ, որոնք առավոտյան գինարբուքից հետո թևերով բերաններն էին սրբում: Թափառող շները մեզ ուղեկցում էին հետաքրքրասեր հայացքով, բայց մեր անզուգական թոբին առանց աջ ու ձախ նայելու առաջ էր վազում՝ դնելով համարյա քսվելով հողին և ժամանակ առ ժամանակ անհամբեր կաղկանձում էր, զգալով թարմ հետքը:

Այդպես ետևում թողեցինք Սթրիթերը, Բրիքսոնը, Քամբերուելը և հայտնվեցինք Քենինգթոն-լեյն շրջանում, շրջանցիկ ճանապարհով դուրս գալով Քենինգթոնյան մարզադաշտի արևելյան մասում: Հավանաբար Ջոնաթան Սմոլն ու իր սարսափելի օգնականը հատուկ ընտրել էին այդ բարդ երթուղին, որպեսզի հետքից շեղեն հետապնդողներին: Նրանք ոչ մի անգամ չեն անցել գլխավոր փողոցով, եթե հնարաոր է եղել ցանկալի ուղղությամբ շարժվել կողմնային փոքր փողոցներով: Քենինգթոն-լեյնի սկզբից թեքվել էին ձախ և գնացել Բոնդ-սթրիթով և Մայլ-սթրիթով: Այնտեղ, ուր վերջին փողոցը միանում էր Նայդ-փիլեյսին, թոբին կանգ առավ և ետ ուռառաջ վազելով, մի ականջը ցցեց, մյուսը՝ կախեց, իր ամբողջ տեսքով լիակատար տարակուսանք արտահայտելով: Հետո սկսեց տեղում պտտվել, մերթ ընդ մերթ մեզ նայելով, տառացիորեն կարեկցանք փնտրելով:

— Ի՞նչ է կատարվում շան հետ, — բռնկվեց Հուլմսը: — Չէ՞ որ նրանք այստեղից կառք չեն նստել և օդապարիկով չեն թռչել:

— Հնարավոր է, նրանք այստեղ մի փոքր կանգ են առել, — ենթադրեցի ես:

— Ամենայն հավանականությամբ, այո: Թոբին դարձյալ գտավ հետքը, — ասաց նա հանգստացած:

Այս անգամ թոբին տառացիորեն նետի պես սուրաց: Իր սուր դնչով հոտոտելով ողջ շրջակայքը, նա հանկարծ կրկին վստահություն ձեռք բերեց և առաջ նետվեց այնպիսի արագությամբ, որպիսին դեռ չէր ցուցաբերել: Հետքը, հավանաբար, բոլորովին թարմ էր, քանի որ թոբին ոչ միայն դնչով խրվեց հողի մեջ, այլև ձգեց վզափոկը, որն այժմ խանգարում էր նրան ավելի արագացնելու

վագրը: Հովմսի աչքերի փայլից տեսնում էի, որ մեր ճանապարհորդությունը, իր կարծիքով, մոտենում էր ավարտին:

Այժմ վագում էինք Նայն-Էլմսով, ետևում թողնելով «Բրողերիկ-Նելսոն» ֆիրմայի փայտի պահեստը: Նրան կից «Սպիտակ արծիվ» պանդոկի մոտ Թոբին գրգռված անհետացավ դռնակի ետևում, և մենք հայտնվեցինք պահեստի բակում, որտեղ սղոցարարներն արդեն սկսել էին իրենց ցերեկային աշխատանքը: Թոբին, ուշադրություն չդարձնելով նրանց վրա, ուղղակի տաշեղների և թեփերի վրայով դուրս եկավ ճանապարհ՝ շրջանցելով ցախանոցը, սուրաց երկշարք վառելիքայտի միջանցքով և վերջապես հրճվանքով նետվեց մեծ տակառի վրա, որ դեռ դրված էր այստեղ բերված ձեռնասայլակին: Կախ ընկած լեզվով և փայլող հայացքով Թոբին կանգնել էր տակառի վրա և գովեստի սպասելով հաղթական հայացքով նայում էր մեզ: Ամբողջ տակառն ու սայլակի անիվներն աղտոտված էին գորշ, թանձր հեղուկով, շրջակայքից կուպրի ուժեղ հոտ էր գալիս:

Շերլոկ Հովմսն ու ես իրար նայեցինք և միաժամանակ բռնկվեցինք անզուսպ քրքիջով:

Գլուխ 8 — Բեյքր-սթրիթի ոստիկանության անկանոն գործասերը

— Հիմա ի՞նչ անենք, — բացականչեցի ես: — Թոբին կորցրեց իր անսխալական հեղինակությունը:

— Նա գործեց իր ընդունակության չափով, — պատասխանեց Հովմսը, Թոբին վերցնելով տակառի վրայից և դուրս տանելով պահեստից: — Պատկերացրեք, Լոնդոնում օրվա ընթացքում որքան կուպր են օգտագործում, այնպես որ զարմանալի չէ, որ մեր հետքը խաչաձևակեց: Մոդայիկ է դարձել փայտերը կուպրով ներծծել: Ո՛չ, իսեղճ Թոբին մեղավոր չէ:

— Ուրեմն պետք է վերադառնանք սկզբնահետքի՞ն:

— Այո, բարեբախտաբար հեռու չէ: Հիմա եմ հասկանում, թե ինչու Թոբին այդպես մոլորվեց Նայթ-փիլեյսի անկյունում: Այդտեղից տարբեր կողմեր են ձգվում երկու միանման հետքեր: Մենք ընկանք կեղծ հետքի վրա: Մնում է վերադառնալ և գտնել ճիշտ հետքը:

Դա դժվար չէր: Թոբին տարանք այնտեղ, որտեղ սխալվեց: Այնտեղ նա մի շրջան էլ գործեց և նետվեց միանգամայն այլ ուղղությամբ:

— Միայն թե մեզ չտանի այնտեղ, որտեղից տակառն են բերել, — նկատեցի ես:

— Մի վախեցեք: Տեսնում եք, Թոբին հիմա վագում է մայթով, իսկ չէ որ սայլը անցել է փողոցով: Ոչ, այս անգամ մենք ճիշտ ուղու վրա ենք: — Հետքը թեքվեց դեպի գետափ, ետևում մնացին Բելմոնթ-փիլեյսն ու Փրինսիպ-սթրիթը: Բրող-սթրիթի վերջում հետքը մոտեցավ ուղիղ ջրին, դեպի ոչ մեծ փայտյա նավակառանին: Թոբին մեզ տարավ մինչև նավակայանի ծայրը և կանգնեց, կատաղած կաղկանձելով և նայելով ներքևի մուգ, արագահոս ջրին:

— Բախտներս չբերեց, — ասաց Հովմսը: — Այստեղ նրանք նավակ են նստել:

Նավակառանին կապված էին մի քանի գետանավակներ և մակույկներ: Թորիին մոտեցրինք դրանցից հյուրաքանչյուրին, բայց ինչքան էլ հոտոտեց, կրեոզոտի հոտը չքացել էր:

Այս հասարակ նավակառանից ոչ հեռու աղյուսե մի փոքրիկ տնակ կար: Երկրորդ պատուհանին կախված էր «Մորդեկայ Սմիթ» բառերով փայտե մեծ ցուցանակ, ներքևում գրված էր՝ «Մեկ ժամով կամ ամբողջ օրով վարձով տրվող մակույկներ» Դռան վրայի գրությունը տեղեկացնում էր, որ տերն ունի փոքր շոգենավ, որի մասին պերճախոս վկայում էր գետակի մոտի կոքսի կույտը: Շերլոկ Հոլմսը նայեց շուրջը և դեմքը մռայլվեց:

— Գործերը վատ են, — ասաց նա: — Այդ սրիկաներն ավելի խելոք դուրս եկան, քան ենթադրում էի: Ոնց որ կարողացել են հետքերը թաքցնել: Վախենում եմ, որ նահանջը նախորոք է պատրաստված եղել:

Նա մոտեցավ տնակին: Դուռը հանկարծ թափով բացվեց, և դուրս վազեց փոքրիկ, մոտ վեց տարեկան գանգրահեր մի տղա, իսկ նրա հետևից գեր, կարմրաթուշ մի կին՝ ձեռքին սպունգ:

— Ձեկ, հենց հիմա տուն արի ու լվացվի, — բղավեց կինը: — Ինչ կեղտոտ տղա ես: Եթե հայրդ քեզ այդպես տեսնի, գիտես մեզ ինչ կանի:

— Հիանալի փոքրիկ է, հարձակումն սկսեց Հոլմսը: — Ինչ կարմրաթուշն է չարաձճին: Լսիր, Ձեկ, ամենից շատ ինչ ես ուզում:

— Շիլինգ, — պատասխանեց նա մտածելով:

— Իսկ կարող է պատահել էլի՞ ինչ-որ բան:

— Երկու շիլինգ, — պատասխանեց փոքրիկը մի քիչ էլ մտածելով:

— Այդ դեպքում բռնիր: Ինչ հիանալի փոքրիկ ունեք միսիս Սմիթ:

— Աստված օրհնի ձեզ, սրբ: Այնպես խելամիտ է մեծանում, որ աստված մի արասցե: Հոգիս հանում է, հատկապես երբ հայրը տանը չէ: Ահա, ինչպես հիմա:

— Տանը չէ՞, — հարցրեց Հոլմսը հուսախաբված: — Շատ ափսոս: Ես նրա մոտ գործով եմ եկել:

— Գնաց դեռ երեկ առավոտյան, սրբ: Եվ ես սկսում եմ արդեն անհանգստանալ: Բայց եթե ձեզ մակույկ է հարկավոր, սրբ, ապա ես կարող եմ մեկն արձակել:

— Կցանկանայի շոգենավակ վարձել:

— Շոգենավակ: Ինչ ցավալի բան: Հենց դրանով էլ մեկնեց: Այդ պատճառով էլ անհանգստանում եմ: Ածուխն այնքան էր, որ կհասցներ Վուլիջ և ետ: Եթե զբոսանավով լինեք, չէի անհանգստանա: Չէ որ նա երբեմն նաև Գրեյվ-սենդ է մեկնում: Նույնիսկ գիշերում է այնտեղ, եթե շատ գործ է պատահում: Բայց չէ որ բարկասով շատ հեռու չես գնա:

— Ածուխ կարելի է գնել ցանկացած նավահանգստում:

— Կարելին կարելի է: Միայն թե նա այդ չի սիրում: Ասում է, ածուխի համար շատ են կորզում. . . Մեկ էլ ինձ դուր չի գալիս փայտե ոտքով մարդը, այնպիսի սարսափելի դեմք ունի և մեր լեզվով էլ չի խոսում: Շարունակ թափառում է այս կողմերում:

— Փայտե ոտքով մա՞րդ, — զարմացած հարցրեց Հոլմսը:

— Դե այո, սրբ: Այնպես արևահարված, ոնց որ կապիկ լինի: Այդ նա երեկ երեկոյան եկավ ամուսնուս ետևից: Իսկ ամուսինս, ինչպես երևում է, սպասում էր, որովհետև շոգենավակն արդեն պատրաստ էր: Ճիշտն ասեմ, սրբ, այս ամենն ինձ դուր չի գալիս:

— Իմ թանկագին միսիս Սմիթ, — ասաց Հոլման ուսերը թոթովելով, — դուք իզուր եք անհանգստանում: Որտեղի՞ց կարող էիք իմանալ, որ ոչ թե ուրիշ, այլ հենց փայտե ոտքով մարդն է եկել: Չեմ հասկանում, որտեղից է այդ վստահությունը:

— Իսկ ձա՞յնը, սրբ: Ես լավ եմ հիշում նրա ձայնը՝ խոպոտ, կոպիտ: Նա ծեծեց պատուհանը, ժամը երեքը կլիներ: «Ապա, արթնացիր, բարեկամս, — խոխոսացեց նա, — հերթափոխի ժամն է» Ծերուկն արթնացրեց Ջիմին, նա մեր առաջնեկն է, և ոչ մի բառ չասելով, երկուսով գնացին: Գիշերով լավ լավում էր, թե ինչպես էր գետաքարերի վրա տկտկում փայտե ոտքը:

— Իսկ ինչ է, այդ փայտե ոտքովը մենա՞կ էր:

— Չեմ կարող ասել, սրբ: Այլևս ոչինչ չլսեցի:

— Խնդրում եմ ներեք անհանգստացնելու համար, միսիս Սմիթ, բայց ինձ շատ է հարկավոր շոգենավը: Դրա մասին ինձ շատ են ասել: Իսկ ինչպե՞ս է այն կոչվում:

— «Ավրորա», սրբ:

— Դե, իհարկե: Հին տաշտակ է՝ կանաչ ու դեղին շերտերով և շատ լայն նավախելով:

— Ոչ, դա չէ: Մերը փոքր է, կոկիկ: Հենց նոր են սև ներկել՝ երկու կարմիր շերտով:

— Շնորհակալ եմ: Վստահ եմ, որ միսոսր Սմիթը շուտով կվերադառնա: Ցանկանում եմ գետով ներքև լողալ և եթե տեսնեմ «Ավրորան», ձեր ամուսնուն ձայն կտամ, որ անհանգստանում եք: Ասացիք՝ սև՞ խողովակով:

— Խողովակը սև է՝ ճերմակ եզրաշերտով, սրբ:

— Ախ, այո, իհարկե: Կողերն են սև: Ցտեսություն, միսիս Սմիթ:

Մակույկավար եմ տեսնում, Ուոտսոն: Հիմա այն ավիը կանցնենք:

— Ամենագլխավորը, — ասաց Հոլմսը, երբ տեղավորվեցինք գետանավակի մեջ, — գործ ունենալով հասարակ մարդկանց հետ, նրանց չպետք է թույլ տալ հասկանալու, որ իրենցից ինչ-որ բան են ցանկանում իմանալ: Բավական է այդ իմանան, անմիջապես շրխկոցով փակում են փեղկերը, ինչպես ոստրեները: Եթե նրանց լսես ցրված տեսքով և հարցնես անպատեհորեն, ցանկացածը կիմանաս:

— Հիմա գործողության ծրագիրը պարզ է, — ասացի ես: — Շոգենավակ վարձել և գտնել «Ավրորան» :

— Բարեկամս, դա աներևակայելի դժվար խնդիր կլինի: «Ավրորան» կարող է կանգ առնել գետի այս կամ այն ավիի ցանկացած նավահանգստում, ընդհուպ մինչև Գրինվիչ: Կամրջից հետո մեկը մյուսին հաջորդում են անվերջանալի նավահանգիստներ: Նավահանգիստների մի ամբողջ լաբիրինթոս: Եթե մենակ հետապնդենք, քթներիցս բռնած ման կտան:

— Այդ դեպքում օգնության կանչեք ոստիկանությանը:

— Ոչ: Ծայրահեղ դեպքում Էթելնի Ջոնսին կկանչեմ վերջին բուպեին: Նա էությանը վատ մարդ չէ, և չէի ցանկանա փչացնել նրա կարիերան: Բայց հիմա, երբ այդքան շատ բան է արված, ցանկանում եմ անձամբ գործը մինչև վերջ հասցնել:

— Երևի հայտարարություն տանք թերթում, որպեսզի նավահանգստի տերերը մեզ հայտնեն, եթե տեսնեն «Ավրորան» :

— Ոչ, դա ավելի վատ է: Մեր բարեկամները կիմանան, որ հետապնդում ենք իրենց և մեկ էլ տեսար ճողոպրեցին Անգլիայից: Կարծում եմ, Անգլիան լքելն առանց այդ էլ մտնում է նրանց ծրագրերի մեջ: Բայց քանի վտանգ չկա, չեն շտապի: Ջոնսի աշխուժությունը մեզ միայն օգուտ է: Չեմ կասկածում, որ նրա վարկածն արդեն տպվել է բոլոր թերթերում, և փախստականները լիովին հավատացած են, որ ոստիկանությունը գնում է սխալ հետքով:

— Այդ դեպքում ի՞նչ պետք է անել, — հարցրեցի, երբ կառանվեցինք միլբակյան ուղղիչ տան մոտ:

— Վարձենք այս կառքը, գնանք տուն, նախաճաշենք և մի ժամ քնենք: Միանգամայն հնարավոր է, որ այս գիշեր էլ ոտքի վրա կլինենք: Կառապան, կանգ առեք փոստի մոտ: Թոբիին առայժմ մոտներս պահենք: Դեռ պետք կգա:

Իջանք Գրեյթ-Պիտեր-սթրիթի փոստի մոտ, որտեղից Հոլմսը հեռագիր ուղարկեց:

— Ի՞նչ էք կարծում, ու՞մ ուղարկեցի, — Հարցրեց Հոլմսը, երբ նորից կառք նստեցինք:

— Գաղափար չունեմ:

— Հիշու՞մ էք Բեյքր-սթրիթի խուզարկու ոստիկանական ջոկատը, որն ինձ օգնեց հետաքննելու Ջեֆերսոն Հոուպի գործը:

— Հիշում եմ, — ծիծաղեցի ես:

— Ահա, հիմա դարձյալ նրանց օգնությունն է պետք: Եթե նրանք անհաջողություն կրեն, ես էլի օգնականներ ունեմ: Բայց սկզբում, այնուամենայնիվ, նրանց կփորձեմ: Հեռագիրը իմ փնթի օգնական Ուիգհինսին ուղարկեցի: Հավատացած եմ, մենք նախաճաշը չվերջացրած, իր խմբով նա այստեղ կլինի:

Մոտավորապես ութնանց կեսը կլիներ և զգացի, որ այդքան փոթորկոտ իրադարձություններով լի գիշերից հետո թուլացա: Ոտքս ուժեղ կաղում էր, մարմինս կոտրատվում հոգնածությունից, գլխիս մեջ մշուշ էր: Ես չունեի այն պրոֆեսիոնալ ոգևորիչությունը, որով այրվում էր ընկերս: Նաև չէի կարողանում այս աննախադեպ գործին վերաբերվել որպես զուտ տրամաբանական մի խնդրի:

Ինչ վերաբերվում է երեկ գիշեր սպանված Բարթոլոմյու Շոլտոյին, ապա նրա մասին լավ բան քիչ էի լսել և չէի կարող մեծ թշնամանք զգալ մարդասպանի հանդեպ: Գանձերի գործն այլ էր: Այդ գանձերը, կամ հավանաբար դրանց մի մասը, օրենքով պատկանում էր միսս Մորսթենին: Քանի որ հույս կար գանձերը գտնելու, ապա պատրաստ էի դրան նվիրել ողջ կյանքս: Ճիշտ է, եթե գտնեի, միսս Մորսթենը, ամենայն հավանականությամբ, ինձ համար ընդմիջտ կորած կլիներ: Բայց եթե ես ղեկավարվեյի միայն այդպիսի մտքերով, որքան մանր ու եսասիրական կլիներ սերս: Եթե Հոլմսը իրեն չէր ինսայում հանցագործներ բռնելու համար, ապա այն պատճառը, որը դրդում էր ինձ զբաղվելու գանձերի որոնումով, հարյուր անգամ ուժեղ էր:

Լոզանքը Բեյքր-սթրիթում և մաքուր ներքնագգեստը հիանալիորեն թարմացրին ինձ: Երբ ներքև իջա, նախաճաշն արդեն սեղանին էր, իսկ Հոլմսը մատուցեց սուրճը:

— Նայեք, — ասաց ինձ քմծիծաղով և մեկնեց թերթը, — անսանձելի Ջոնսն ու ամենահաս թղթակիցը բարի գործ են արել: Բայց դուք, երևի, մինչև կոկորդը կուշտ էք նորվուդյան գործից: Ավելի լավ է զբաղվել խոզապուխտի ձվածեղով:

Նրանից վերցրեցի թերթը և կարդացի «Հանելուկային իրադարձություն Ապպեր-Նորվուդում» վերնագրով ոչ մեծ հոդվածը:

«Անցյալ գիշեր՝ մոտ ժամը տասներկուսին, — գրել էր «Ստանդարտը», — Ապպեր-Նորվուդի՝ Պոնդիշերի-Լոջում բնակվող միստր Թարթոլմյու Շոլտոն սպանված է գտնվել իր ննջարանում, այնպիսի հանգամանքներում, որոնք ստիպում են կասկածելու ինչ-որ հանցագործ ուժի մասնակցությունը: Միստր Շոլտոյի մարմնի վրա բռնության ոչ մի հետք չի հայտնաբերվել: Սակայն անհետացել է հնդկական հարուստ թանկարժեք իրերի հավաքածուն, որը հանգուցյալը ժառանգել էր հորից: Հանցագործությունն առաջինը հայտնաբերել են Շերլոկ Հոլմսն ու դոկտոր Ուոտսոնը, որոնք Պոնդիշերի-Լոջ էին եկել հանգուցյալի եղբոր հետ: Բացառիկ երջանիկ պատահականությամբ, քաջ հայտնի ոստիկանական տեսուչ միստր Էթելնի Ջոնսը այդ ժամանակ գտնվում էր Նորվուդի ոստիկանական բաժանմունքում և հանցագործության վայրը ժամանեց տագնապը հնչելուց կես ժամ անց: Միստր Էթելնի Ջոնսն իրեն հատուկ պրոֆեսիոնալ վարպետությամբ անմիջապես ստանձնեց գործը, և արդյունքները չհապաղեցին: Ձերբակալվել է հանգուցյալի եղբայրը՝ Թադեուշ Շոլտոն, ինչպես նաև տնտեսուհի միսիս Բերստոնը, ազգությամբ հնդիկ, ծառայապետ Լալ Ռան և դռնապան Մաք-Մուրդոն: Կասկած չկա, որ գողը կամ գողերը լավ ծանոթ էին տան դասավորությանը, քանի որ իր բացառիկ դիտողականությամբ և հանցագործ աշխարհի իմացությամբ հայտնի միստր Ջոնսի կողմից անսխալ որոշվել է, որ սրիկաները սենյակ չէին կարող թափանցել ոչ դռնով, ոչ պատուհանով, այլ միայն տանիքով, ձեղնահարկի պատուհանի միջով, ձեղնահարկ, որը հաղորդակից է միստր Շոլտոյի աշխատասենյակին, ուր հայտնաբերվել է դիակը: Այդ փաստը, որը վերականգնված է ամենայն մանրամասնությամբ, անկասկած վկայում է, որ գործ ունենք ոչ պատահական կողոպտիչների հետ: Օրենքի ներկայացուցիչների արագ և արդյունավետ գործողությունները մի անգամ ևս ցուցադրեցին, թե ինչ օգտակար է նման հանցագործությունների վայրում եռանդուն և խորաթափանց մարդու ներկայությունը: Գտնում ենք, որ այս դեպքը հաստատում է այն մարդկանց կարծիքը, թե ոստիկանությունը պետք է ապակենտրոնացված լինի: Այն ժամանակ գործն ավելի արագ և մանրակրկիտ կհետաքննվի» :

— Հիանալի է չէ՞, ժպտաց Հոլմսը մի ումպ սուրճ խմելով: — Դուք ինչ կասեք այս մասին:

— Կասեմ, որ մենք, որպես հանցագործության մասնակիցներ, հազիվ խուսափեցինք ձերբակալությունից:

— Ես էլ եմ այդպես կարծում: Եթե նրան մի անգամ էլ բռնի անգուսպ գործունեության տենդը, մենք չենք խուսափի Թադեուշ Շոլտոյի ճակատագրից:

Այդ պահին նախասենյակից լավեց զանգի բարձր զնգոց, որին հետևեց ինչ-որ մեկին համոզող մեր տանտիրուհու վախեցած ձայնը:

— Աստված իմ, Հոլմս, — ասացի ես վեր կենալով, — կարծես իսկապես նրանք են:

— Ոչ, գործը դեռ դրան չի հասել: Սա Բեյքր-սթրիթի իմ անկանոն ոստիկանական զորամասն է:

Մինչ նա խոսում էր, աստիճանների վրա լավեցին բոբիկ ոտքերի արագ թփթփոց, տղայական բարձր ձայներ, և սենյակ ներխուժեց կեղտոտ,

պատահողոված շորերով փողոցային տղաների մի խումբ: Չնայած աղմկոտ ներխուժմանը, այնուամենայնիվ նկատելի էր, որ այս ջոկատը կարգուկանոնի ենթարկվող է, քանի որ տղաներն անմիջապես շարք կանգնեցին և աչքերն անհամբերությամբ մեզ հառեցին: Նրանցից ամենամեծն ու բարձրահասակը առաջ եկավ գերազանցության հավակնոտ տեսքով: Հնարավոր չէր առանց փոթկալու նայել բոլորովին վստահություն չներշնչող այդ խրտվիլակին:

— Ստացա ձեր հեռագիրը, սրբ, — ասաց նա: — Եվ բերեցի բոլորին: Երեք շիլինգ և վեց պենս՝ տոմսերի համար:

— Խնդրեմ, — ասաց Հովմար դրամը մեկնելով: — Ուիզինս, հետագայում նրանք քեզ պետք է զեկուցեն, իսկ դու՝ ինձ: Չեմ կարող տունս հաճախ այսպիսի ներխուժման ենթարկել: Բայց հիմա նույնիսկ լավ է, որ բոլորն են եկել: Լսեք հրահանգս: Հարկավոր է գտնել «Ավրորա» շոգենավակի գտնվելու վայրը, որի տերն է Մորդեկայ Սմիթը: Շոգենավը սև է, երկու կարմիր շերտով: Խողովակը ևս սև է՝ սպիտակ երիզով: Կորել է գետում, ինչ-որ տեղ: Կցանկանայի, որ ձեզնից մեկը հերթապահեր միլբանկյան ուղղիչ տան դիմաց գտնվող Սմիթի նավակառանում՝ եթե շոգենավը վերադառնա: Իրար մեջ բաժանեք պարտականություններն ու խուզարկեք երկու ամիսը: Եթե ինչ-որ բան իմանաք, անմիջապես հայտեք ինձ: Պա՞րզ է:

— Այո, հրամանատար, — պատասխանեց Ուիզինսը:

— Պայմանը նույն է, շոգենավը գտնողին՝ զինեյա: Իսկ սա՝ նախօրոք: Դե, իսկ այժմ գործի անցնենք: — Հովմար յուրաքանչյուրին մեկ շիլինգ հանձնեց, տղաները բոբիկ ոտներով թփթփացրին աստիճանները և փողոց թափվեցին:

— Սրանք գետնի տակից էլ կգտնեն «Ավրորան», — ասաց Շերլոկ Հովմար՝ վեր կենալով սեղանի մոտից և վառելով ծխամորձը: — Ամենուրեք կխցկվեն, ամեն ինչ կտեսնեն, ամեն ինչ կլսեն: Հավատացած եմ, որ արդեն երեկոյան կիմանանք, թե որտեղ է «Ավրորան»՝ Իսկ այժմ սպասելուց բացի ոչինչ չունենք անելու: Հետքը կորավ և այն չենք գտնի, քանի դեռ չենք գտել «Ավրորան» կամ գոնե նրա տիրոջը:

— Այս մնացորդը Թոբին կուտի: Կպառկե՞ք հանգստանալու, Հովմա:

— Ոչ, ես չեմ հոգնել: Տարօրինակ օրգանիզմ ունեմ: Չեմ հիշում այնպիսի մի դեպք, որ աշխատանքը հոգնեցնի: Ընդհակառակն՝ անգործությունն է ուժասպառ անում ինձ: Կծխեմ և կմտածեմ այս արտասովոր գործի մասին, որի համար պարտական ենք մեր խարտյաջ այցելուին: Ավարտն արտակարգ թեթև է թվում: Փայտե ոտքով մարդիկ այնքան էլ շատ չեն, իսկ համար Առաջինը պարզապես եզակի նմուշ է:

— Դարձյալ այդ խորհրդավոր համար Առաջինը:

— Բնավ չեմ ցանկանում դա գաղտնի պահել, առավել ևս՝ ձեզնից: Բայց շնորհ արեք, Ուոտսոն, նրա մասին դուք արդեն պետք է որոշակի կարծիք ստեղծեիք: Եկեք մի անգամ էլ հիշենք նրա բոլոր նշանները: Փոքր ոտք, երբեք կոշիկ չտեսած թաթեր, ոտաբոբիկ է ման գալիս, փոքրահասակ, շատ ճարպիկ, քարե գլխիկով փայտե ձեռնափայտ, թունավոր փշեր: Ի՞նչ հետևություն եք անում դրանից:

— Վայրենի է, — բացականչեցի ես: — Հավանաբար, Ջոնաթան Սմոլի խմբի հնդիկներից մեկը:

— Դժվար թե, — առարկեց Հովմար: — Երբ առաջին անգամ տեսա նրա հետքերը, ես էլ նույնը մտածեցի, բայց հետո կարծիքս փոխվեց: Հնդկաստան

թերակղզու բնակիչների թվում կան կարճահասակ ցեղեր, բայց այսպիսի փոքրիկ ոտքեր այնտեղ չեք գտնի: Բուն հնդիկների ոտնաթաթերը նեղ են ու երկար: Մահմեդականները սանդալներ են կրում և նրանց բթամատը, որպես օրենք, հեռու է մյուս մատներից, որովհետև բաժանված է կապով: Այս փոքրիկ նետերը կարող են արձակվել միայն մեկ ճանապարհով: Խողովակից փչելով: Դե, ձեր կարծիքով, որտեղի՞ց է մեր վայրենին:

— Հարավային Ամերիկայից, — բախտապալեն ասացի ես:

Հովսեփ մեկնեց ձեռքը և դարակից հանեց հաստափոր մի գիրք:

— Սա ներկայումս հրատարակվող աշխարհագրական տեղեկագրքի առաջին հատորն է: Կարելի է համարել, աշխարհագրական գիտության վերջին խոսքը: Տեսնենք, թե այստեղ մեզ հետաքրքրող ինչ կա: Անդամանյան կղզիներ: Գտնվում է Բենգալյան ծովածոցում, Մումատրայից երեք հարյուր քառասուն մղոն հյուսիս: Հըմ, հըմ. . . Դե, իսկ հետո՞: Խոնավ եղանակ, մարջանի խութեր, գայլաձկներ, Պորտ-Բլեր, տաժանակիր բանտ, Ռատլենդ կղզի. . . Ահա, գտա. «Անդամանյան կղզիների բնիկները հավանաբար կարող են հավակնել, որ իրենք ամենակարճահասակ ցեղն են երկրի վրա, չնայած մի քանի մարդաբաններ առաջնության դափնին տալիս են աֆրիկյան բուշմեններին, ամերիկյան «դիգգեր» ցեղի հնդկացիներին և Հրո Երկրի բնիկներին: Մեծահասակի միջին բարձրությունը մոտավորապես չորս ֆուտ է, չնայած հանդիպում են նաև առանձին, ավելի ցածրահասակ նմուշներ: Այդ չար, մռայլ տեսքով մարդիկ քաղաքակրթության համարյա չեն ենթարկվում, փոխարենը՝ ունակ են նվիրված բարեկամության» Հատուկ ուշադրություն դարձրեք դրան, Ուոտսոն: Լսեք շարունակությունը. «Նրանք շատ տգեղ են: Ունեն մեծ, ոչ ճիշտ գլխի ձև, մանր, չար աչքեր և վանող դիմագծեր: Ձեռքերն ու ոտքերը սքանչելիորեն փոքր են: Այնքան չար են ու վայրենի, որ անգլիական իշխանությունների թափած ջանքերը նրանց ընտելացնելու համար միշտ ավարտվում են անհաջողությամբ: Նրանք միշտ էլ եղել են նավաբեկյալների պատուհասը: Գերիներին սովորաբար սպանում են քարե վերջույթ ունեցող մահակներով կամ թունավորված նետերով: Կոտորածը, որպես օրենք, վերջանում է վայրի խնջույքով» Ինչքան սիրելի, իրենց հանդեպ տրամադրող մարդիկ են չէ՞, Ուոտսոն: Եթե այդ սիրունիկը հնարավորություն ունենար գործելու իր հայեցողությամբ, գործը կարող էր էլ ավելի սարսափելի շրջադարձ ունենալ: Կարծում եմ, Ջոնաթան Սմոլն այնքան էլ հաճույքով չի դիմել նրա օգնությանը:

— Բայց նրան որտեղից այդ տարօրինակ գործընկերը:

— Չեմ կարող ասել: Բայց քանի որ մեզ հայտնի է, որ Ջոնաթան Սմոլն Անգլիա է ժամանել ոչ թե ինչ-որ տեղից, այլ Անդամանյան կղզիներից, ապա առանձնապես զարմանալու հարկ չկա, որ նրա ծանոթների շարքում այդպիսի մեկը կա: Անկասկած, ժամանակի ընթացքում ամեն ինչ ավելի մանրամասն կիմանանք: Լսեք, Ուոտսոն, դուք անտանելի վատ տեսք ունեք: Ապա, պառկեք այս բազմոցին և տեսնենք, թե որքան արագ կարող եմ ձեզ քնեցնել:

Նա անկյունից վերցրեց իր ջութակը: Մեկնվեցի բազմոցին և նա նվագեց ցածր, դանդաղ, քուն հարուցող եղանակ, անկասկած իր սեփականը: Հովսեփ ուներ հանպատրաստի ստեղծագործողի աննկարագրելի տաղանդ: Աղոտ կերպով հիշում եմ նրա նուրբ, բարակ ձեռքերը, լուրջ դեմքը և աղեղի տարուբերելը: Հետո ինձ սկսեց թվալ, որ հնչյունների ծովում խաղաղ լողում եմ

ինչ-որ տեղ և արդեն երագների աշխարհում եմ և վրաս խոնարհվել է Մերի Մորսթենի դեմքը:

Գլուխ 9 — Կտրվածք շղթայում

Երբ արթնացա, արդեն մթնշաղ էր: Ինձ զգում էի կազդուրված և եռանդով լի: Քունը վերադարձրեց ուժերս: Շերլոկ Հոլմսը տակավին նստած էր նույն տեղում, միայն ջութակը ձեռքին չէր: Լսելով, որ շարժվում եմ, նա նայեց իմ կողմը. դեմքը մթնած էր և տագնապ էր արտահայտում:

— Այնքան խորն էիք քնել, — ասաց նա, — իսկ ես վախենում էի, թե մեր խոսակցությամբ կարթնացնենք ձեզ:

— Ոչ, ոչինչ չեմ լսել, — պատասխանեցի ես: — Նորություն կա՞:

Դժբախտաբար, ոչ: Եվ պետք է խոստովանեմ, որ զարմացած եմ և հիասթափված: Հույս ունեի այս ընթացքում արդեն որոշակի բան իմանալ: Հենց նոր ժամանեց Ուիզլինսը: Ասաց, որ ոչ մի տեղ շոգենավակի ոչ մի հետք չկա: Ցավալի հապաղում, երբ թանկ է ամեն բոլորը:

— Չե՞մ կարող արդյոք ինչ-որ բանով օգնել: Ինձ ամբողջովին հանգստացած եմ զգում և պատրաստ եմ մի գիշեր էլ անցկացնել ոտքի վրա:

— Ոչ, հիմա անելու բան չկա: Սպասել, ահա այն ամենը, ինչ մնում է մեզ: Եթե գնանք, մեր բացակայության ընթացքում կարող է ստացվել, երկար ակնկալված տեղեկությունը և դարձյալ գործը կձգձգվի: Զբաղվեք ինչով կուզեք, իսկ ես կմնամ այստեղ, պահակակետում:

— Այդ դեպքում կգնամ Քամբերուել, կայցելեմ միսիս Սեսիլ Ֆորեսթերին: Երեկ ինձ խնդրեց այցելել:

— Միսիս Սեսիլ Ֆորեսթե՞րը, — հարցրեց Հոլմսը, և աչքերում փայլեցին ծիծաղի կայծեր:

— Միսս Մորսթենը ևս, ինքնին հասկանալի է: Շատ էին ցանկանում, որ գնայի և պատմեի, թե ինչ պատահեց հետո:

— Ես նրանց ամեն ինչ չեի պատմի: Կանանց երբեք չի կարելի լիովին վստահել, անգամ նրանցից լավագույններին:

Զվիճարկեցի այդ աղաղակող հայտարարությունը, այլ միայն հայտնեցի, որ կվերադառնամ երկու ժամից:

— Հիանալի է: Բարի ճանապարհ: Հա, ահա թե ինչ, քանի որ անցնելու եք գետը, հետներդ վերցրեք Թոբիին: Կարծում եմ, հիմա մեզ պետք չի գա:

Արեցի, ինչպես ասված էր, և Թոբիին կես սովերենի հետ սովեցի Պինչին-լեյնի ծեր բնախույզին: Այդտեղից ուղիղ գնացի Քամբերուել: Միսս Մորսթենը դեռ ուշքի չէր եկել անցյալ գիշերվա ապրումներից, բայց լի էր

հետաքրքրասիրությամբ: Միսիս Ֆորեսթերն էլ ծարավի էր իմանալու իրադարձությունների ընթացքը: Նրանց պատմեցի այն ամենը, ինչ եղել էր, բաց թողնելով միայն ամենասարսափելի մանրամասները: Պատմելով միսս Ծոլտոյի սպանությունը, լռեցի սպանության մանրամասների մասին: Բայց, չնայած կրճատումներիս, պատմությունս, այնուամենայնիվ, խորապես ցնցեց, և հուզեց նրանց:

— Ինչպես վեպերում, — բացականչեց միսիս Ֆորեսթերը: —

Արքայադուստրն՝ անարդարության զոհ, թանկարժեք գանձ, սևամորթ

վայրենի, փայտե ոտքով ավազակ: Սա՝ ավանդական վիշապի կամ ինչ-որ նենգ կոմսի փոխարեն:

— Եվ երկու թափառական փրկիչ ասպետներ, — ավելացրեց միսս Մորսթենը և ջինջ աչքերով նայեց վրաս:

— Լսեցեք, Մերի, չէ որ որոնումների ելքից է կախված ձեր ճակատագիրը: Ինձ թվում է, որ դուք չեք մտածել այդ մասին և այդ պատճառով եք այդքան անտարբեր: Միայն պատկերացրեք, ինչ է նշանակում հարուստ լինել և ամբողջ աշխարհն ունենալ ոտքի տակ:

Միրոս ուրախությամբ բաբախեց, երբ տեսա, որ միսս Մորսթենը ոչ մի խանդավառություն չցուցաբերեց իր արջն բացվող փայլուն հնարավորությունների հանդեպ: Ընդհակառակը, անփութորեն շարժեց հպարտ գլուխը, կարծես այդ գանձերն իր հետ ոչ մի կապ չունեին:

— Ինձ շատ է անհանգստացնում միսսոր Շոլտոյի ճակատագիրը, — ասաց նա: — Մնացածը կարևոր չէ: Նա այնքան բարի և ազնիվ մարդ է: Մեր պարտքն է այնպես անել, որ նրա վրայից հանեն այդ սարսափելի, անարդարացի մեղադրանքը:

Երբ հեռացա միսիս Ֆորեսթերի տնից, արդեն մութն ընկել էր: Բեյքր-սթրիթ վերադարձա, երբ արդեն բոլորովին մութ էր: Ընկերոջս գիրքն ու ծխամորձն ընկած էին բազկաթոռին, ինքը չկար: Երկտող փնտրեցի, բայց չգտա:

— Ի՞նչ է, միսսոր Հոլմսը տե՞ղ է գնացել, — հարցրեցի տանտիրուհուն, երբ վերջինս սենյակ մտավ վարագույրներն իջեցնելու:

— Ոչ, գնաց իր սենյակը: Գիտե՞ք, միսսոր Ուոտսոն, — այստեղ նա անցավ բազմանշանակ շնչոցի, — վախենում եմ, որ նա առողջ չէ:

— Ինչու՞ եք այդպես կարծում:

— Այսօր նա շատ տարօրինակ էր: Հենց որ գնացիք, սկսեց սենյակով մեկ այս ու այն կողմ քայլել, և ես այդ անվերջ քայլերը լսելուց անգամ հոգնեցի: Հետո սկսեց ինքն իրեն խոսել, ինչ-որ բան փնթփնթալ: Եվ ամեն անգամ հենց զանգը զնգում էր, հարթակ էր դուրս գալիս և հարցնում. «Ի՞նչ է պատահել, միսիս Հադսոն» Իսկ հետո գնաց իր սենյակը և շրխկացրեց դուռը, բայց այնտեղից էլ ամբողջ ժամանակ լսելի էր, թե ինչպես է քայլում: Հանկարծ չհիվանդանա: Հանգստացնող դեղեր առաջարկեցի, բայց այնպես նայեց ինձ, որ չզգացի, թե ինչպես դուրս եկա սենյակից:

— Կարծում եմ, միսիս Հադսոն, անհանգստանալու առանձնապես պատճառ չկա, — ասացի ես: — Մեկ անգամ չէ, որ նրան տեսել եմ այդ վիճակում: Հիմա մի փոքր խնդիր է լուծում և, իհարկե, հուզվում է:

Մեր տանտիրուհու հետ խոսեցի ամենահանգիստ տոնով, բայց պետք է խոստովանեմ, ինքս էլ սկսեցի անհանգստանալ ընկերոջս վիճակով, երբ գիշերը, մի քանի անգամ արթնանալով, պատի ետևից լսում էի նրա քայլերի խուլ ձայնը: Հասկացա, թե ինչպիսի վնաս կարող է հասցնել նրա գործնական ուղեղին այդ հարկադրական անգործությունը:

Նախաճաշի ժամանակ Հոլմսը նիհար ու հոգնած երևաց: Այտերին տենդորեն վառվում էին երկու բիծ:

— Դուք ձեզ չեք խղճում, Հոլմս, — նկատեցի ես: — Լսեցի, չէ, որ ամբողջ գիշեր մի ժամ անգամ չպառկեցիք:

— Չէի կարողանում քնել, — պատասխանեց նա: — Այս անիծյալ գործն ինձ տանջամահ է անում: Տեղում դոփել ինչ-որ փուչ բանի համար, երբ այսքան

շատ քան է արված, դա արդեն չափազանց է: Ես գիտեմ հանցագործներին, գիտեմ նրանց շոգենավակը, ամեն ինչ գիտեմ: Եվ տեղից ոչ մի քայլ: Գործի եմ դրել իմ ողջ կարողությունը: Ամբողջ Թեմզան, երկու ամիսը խուզարկված են լայնքով և երկայնքով, ու անիծյալ «Ավրորայի» ոչ մի հետք: Ոչ նրա, ոչ էլ տիրոջ: Կարելի է կարծել, որ նրանք խորտակել են նավակը: Չնայած հակառակն ասող փաստեր կան:

— Կարող է միսիս Սմիթը մեզ կեղծ հետք ունենալ է ուղարկել:

— Ոչ, դա բացառվում է: Տեղեկություններ հավաքել եմ: Այդպիսի նշաններով շոգենավակ կա:

— Հնարավոր է, որ հոսանքն ի վեր գնացած լինի:

— Դա էլ եմ հաշվի առել: Հիմա որոնում են մինչև Ռիչմոնդ: Եթե այսօր նորություններ չլինեն, վաղը ես ինքս դուրս կգամ: Եվ կորոնեմ ոչ թե նավակը, այլ մարդկանց: Բայց, համենայն դեպս, հավատացած եմ, լիովին հավատացած, որ լուրեր կստացվեն:

Սակայն լուրեր չստացվեցին ոչ Ուիգինսից, ոչ էլ նրա աղբյուրներից: Թերթերը շարունակում էին լուրեր տպագրել նորվուդյան ողբերգության մասին: Բոլորն էլ թշնամաբար էին տրամադրված խեղճ Թադեուշ Շոլտոյի նկատմամբ: Չնայած հետաքննությունը նշանակված էր հաջորդ օրը, սակայն ոչ մի թերթում ոչ մի նորություն չէր հաղորդվում:

Երեկոյան դարձյալ եղա Քամբերուելում և պատմեցի մեր անհաջողության մասին: Վերադառնալով, Հոլմսին գտա ամենամոռայլ տրամադրության մեջ: Հազիվ պատասխանեց հարցերիս և ամբողջ գիշեր քիմիական բարդ փորձեր կատարեց: Տաքացրեց թորանոթները, թորեց ջուրը և վերջում այնպիսի հոտ տարածեց, որ քիչ մնաց տնից փախչելի: Մինչև լույս լսում էի, թե ինչպես զբաղվելով իր հոտավետ փորձերով, զրնգացնում էր փորձանոթներն ու սրվակները:

Արթնացա առավոտ կանուխ, կարծես ինչ-որ մեկը հրեց ինձ: Գլխավերև կանգնած էր Հոլմսը, ի գարմանք ինձ, կոպիտ ծովային հագուստով: Հազին բուշլատ կար և վզին փաթաթված էր կոպիտ կարմիր շարֆ:

— Մեկնում եմ որոնումների, գետով ներքև, Ուոտսոն, — ասաց նա ինձ: — Շատ եմ մտածել ծրագրիս վրա և կարծում եմ արժե փորձել:

— Կգամ ձեզ հետ:

— Ոչ, դուք ինձ ավելի շատ կօգնեք, եթե այստեղ մնաք: Դժկամորեն եմ գնում . ցանկացած բոլորին կարող են ցանկալի լուրեր ստացվել, չնայած Ուիգինսը, ինչպես երեկ երեկո նկատեցի, հոգեպես բոլորովին ընկճվել է. խնդրում եմ բացել ինձ հասցեագրված հեռագրերն ու նամակները: Եվ եթե ինչ-որ կարևոր բան կարդաք, գործեք ըստ ձեր հայեցողության: Կարող եմ հույս դնել ձեզ վրա:

— Լիովին:

— Վախենում եմ չկարողանամ հեռագիր ուղարկել, որովհետև ինքս էլ դեռ չգիտեմ, թե որ ժամին որտեղ կլինեմ: Բայց եթե ինձ հաջողվի, շուտով կվերադառնամ: Եվ, իհարկե, ոչ դատարկ ձեռքով:

Ամբողջ առավոտ և նախաճաշի ժամանակ Հոլմսից ոչ մի լուր չկար: Բացելով «Ստանդարտը», այնուամենայնիվ, գտա նախկինից տարբերվող հաղորդում: Թերթը գրում էր. «Ինչ վերաբերվում է Ապպեր-Նորվուդում կատարված ողբերգությանը, ապա գործը կարող է ավելի բարդ և հանելուկային լինել, քան թվում էր սկզբում: Հենց նոր պարզվեց, որ միսսը Թադեուշ Շոլտոն մեղսակից

չէ եղբոր սպանությանը: Նա և տան տնտեսուհին՝ միսիս Բերսթոնը, երեկոյան ազատ են արձակվել: Ինչպէս հաղորդում են, ոստիկանությունն իր տրամադրության տակ ունի իսկական հանցագործների անձը հաստատող տեղեկություններ: Գործի հետաքննությունը գտնվում է Սկոտլանդ-Յարդի ոստիկանության տեսուչ, իր եռանդով ու խորաթափանցությամբ բոլորին հայտնի միստր Էթելնի Ջոնսի հուսալի ձեռքերում: Հանցագործներն ամեն վարկյան կարող են ձերբակալվել» :

«Դե փառք ասածո, — մտածեցի ես: — Ծայրահեղ դեպքում մեր բարեկամ Շոլտոն ազատության մեջ է: Հետաքրքիր է, այդ ինչ «տեղեկություններ» են: Ի միջի այլոց, միշտ այդպէս են գրում, երբ ոստիկանությունը խրվում է» :

Թերթը նետեցի սեղանին և հանկարծ աչքս ընկավ պատահարների այունակների հայտարարությանը: Այնտեղ ասվում էր.

«Փնտրվում են անհետացածներ Մորդեկայ Սմիթն ու նրա որդի Ջոնը, որոնք երեքշաբթի, մոտավորապէս գիշերվա ժամը երեքին «Ավրորա» շոգենավակով հեռացել են Սմիթի կառանատեղից: Շոգենավակը սև է, երկու կարմիր շերտերով, խողովակը սև՝ ձերմակ երիզով: Պարզատրությունը հինգ ֆունտ, ով կհայտնի վերոհիշյալ Սմիթի և «Ավրորա» շոգենավակի տեղը նրա կնոջը՝ միսիս Սմիթին, Սմիթի կառանատեղ կամ Բեյքր-սթրիթ, 221—բ» :

Հասցեն ասում էր, որ հայտարարությունը տվել է Հոլմսը: «Խորամանկ է մտածված, — մտածեցի ես: — Փախստականները դրա մեջ կտեսնեն միայն ամուսնուն փնտրող կնոջ բնական անհանգստությունը» :

Օրը շատ երկար էր ձգվում: Ամեն անգամ, երբ դուռը ծեծում էին կամ դրսից լսվում էր ինչ-որ մեկի ոտնաձայնը, լարում էի ուշադրությունս, սպասելով՝ որ դա կամ Հոլմսն է վերադառնում, կամ եկել էին հայտարարության պատասխանով: Փորձում էի կարդալ, բայց մտքերս անընդհատ պտտվում էին այդ տարօրինակ մասնակիցների շուրջը, որոնց հետապնդում էինք: Իսկ եթե հանկարծ ընկերոջս դատողություններում սողոսկել է ճակատագրական սխալը և նա դարձել է ինքնախաբեության հրեշավոր գո՞հ: Հանկարծ նրա ճշգրիտ տրամաբանական միտքը այդ ֆանտաստիկ վարկածը կառուցել է սխալ նախադրություններով: Չէի հիշում մի դեպք, որ Շերլոկ Հոլմսը սխալվեր, բայց չէ որ նույնիսկ ամենաուժեղ ուղեղն անգամ կարող էր մեկ անգամ սխալվել: Նրան մոլորության մեջ կարող էր գցել հենց բավականին ճկուն տրամաբանությունը: Նա գերադասում էր արտասովոր, խորամանկ բացատրությունները, դեն նետելով ձեռքի տակ գտնվող ավելի պարզ ու բնականը: Բայց մյուս կողմից ինքս ներկա էի կատարվածին ու լսել էի Հոլմսի փաստարկները: Որերորդ անգամ հենց սկզբից հետազոտելով արտասովոր իրադարձությունների երկար շղթան, որոնցից շատերն ինքնին կարող էին մանրուք թվալ, պետք է խոստովանեմ, որ եթե Հոլմսը սխալվում էլ էր, ապա ճշմարտությունն ամեն դեպքում ընկած էր զարմանալիի և անհավանականի ոլորտում:

Կեսօրին, ժամը երեքին մոտ, զանգը կտրուկ գնդնգաց, նախասրահից լսվեց ինչ-որ մեկի տիրական ձայնը և, ի զարմանս ինձ, սենյակ մտավ ոչ այլ ոք, քան ինքը՝ միստր Էթելնի Ջոնսը: Բայց այսօր բոլորովին նման չէր այն առողջ դատողությամբ մեծամիտ ու աննրբանկատ ջատագովին, որն այնպէս անառարկելի ինքնավստահությամբ գործամուխ եղավ նորվուդյան ողբերգության հետաքննությանը: Դեմքը վիստ էր, կարծես ամբողջովին

թառամած, իսկ կեցվածքում հայտնվել էր նույնիսկ ինչ-որ խնդրողականություն:

— Բարի օր, սըր, բարի օր, — ասաց նա: — Ինչպես տեսնում եմ, միստր Հոլմսը տանը չէ՞:

— Ոչ: Եվ չգիտեմ, թե նա երբ կգա: Բայց, գուցե, սպասե՞ք: Նստեք այս բազկաթոռին: Ահա ձեզ սիգարներ:

— Շնորհակալ եմ: Ես, թերևս, կսպասեմ, — ասաց նա դեմքը սրբելով կարմիր վանդակավոր թաշկինակով:

— Սողայով վիսկի կցանկանայի՞ք:

— Է՛, կես բաժակ: Սեպտեմբերի համար բավականին շոգ եղանակ է: Տագնապներին էլ վերջ չկա: Չէ որ գիտեք իմ նորվուդյան վարկածը:

— Հիշում եմ, դուք գրել էիք:

— Դե ահա, ստիպված էի վերանայել: Այնպես ճարպկորեն ցանց հյուսեցի միստր Շոլտոյի շուրջը, այնպես ուժգին ձգեցի և հանկարծ՝ հոպ, ցանցը պատռվեց, և նա դուրս պրծավ: Անվիճելի այլուրեքություն ունի: Այն բուպեին, երբ ետևից փակվել է եղբոր սենյակի դուռը, նրան տեսել են մեկ այստեղ, մեկ այնտեղ, մի խոսքով, Շոլտոն ոչ մի վարկյան մենակ չի մնացել: Այդ պատճառով, ոչ կարող էր տանիք մազլցել, ոչ էլ ձեղնահարկի պատուհանից ներս թափանցել: Սա շատ մութ գործ է, և իմ մասնագիտական հեղինակությունը խաղաքարտի վրա է դրված: Դեմ չէի լինի մի փոքր օգնություն ստանալ:

— Մենք բոլորս էլ երբեմն օգնության կարիք ենք զգում, — նկատեցի ես:

— Ձեր ընկեր միստր Շերլոկ Հոլմսը բացառիկ անձնավորություն է, սըր, — խոպոտ ձայնով մտերմաբար ասաց նա: Նա մի մարդ է, որ չգիտե ինչ է պարտությունը:

Ինձ հո հայտնի է, թե քանի գործի է մասնակցել նա և նրան միշտ էլ հաջողվել է բացահայտել ճշմարտությունը: Իր մեթոդներում մի փոքր անհետևողական է և շատ է շտապում հետևություններ անել, բայց, ընդհանրապես, կարծում եմ, կարող է Սկոտլանդ-Յարդում դառնալ ամենանշանավոր խուզարկուն և պատրաստ եմ դա հայտարարել ում ուզես: Այսօր առավոտյան նրանից հեռագիր ստացա. պարզվում է, այդ գործով թարմ փաստեր ունի: Ահա հեռագիրը:

Նա գրպանից հանեց թուղթն ու մեկնեց ինձ: Հեռագիրն ուղարկված էր Պոպլարից՝ ժամը տասներկուսին: «Անմիջապես գնացեք Բեյքր-սթրիթ, — գրում էր Հոլմսը: — Եթե չհասցնեմ վերադառնալ, սպասեք: Կրնկակառիս հետևում եմ նորվուդյան գույզին: Եթե ցանկանում եք մասնակցել ավարտին, կարող եք միանալ մեզ» :

— Լավ լուրեր են: Ուրեմն, Հոլմսը դարձյալ ընկել է նրանց հետքի վրա, — ասացի ես:

— Ահա, ուրեմն, նա էլ է վրիպել, — բացահայտ բավականությամբ բացականչեց Ջոնսը: — Նույնիսկ մեզնից լավագույնին հատուկ է սխալվելը: Իհարկե, այս հեռագիրը կարող է կեղծ տագնապ լինել, բայց իմ՝ Սկոտլանդ-Յարդի տեսուչիս պարտականությունն է թույլ չտալ բաց թողնելու ոչ մի հավանականություն: Քայլեր եմ լսում: Գուցե դա Հոլմսն է:

Աստիճանների վրա լսվեց ոտքերի ծանր քստքստոց, ուժեղ հևք ու հազ, կարծես այնպիսի մի մարդ էր անցնում, որի համար շնչելը ուժերից վեր գործ

էր: Մեկ թե երկու անգամ կանգ առավ: Բայց ահա վերջապէս մոտեցավ մեր դռանը և բացեց: Արտաքինը լիովին համապատասխանում էր մեզ հասած ձայներին: Ծովային հագուստով ծերունի էր, հին բուշլատը կոճկած էր մինչև կզակը: Մեջքը կորացած էր, ծնկները դողում էին, իսկ շնչառությունը, ինչպէս ասթմատիկինը՝ ծանր էր և հիվանդագին: Կանգնել էր, հենվելով կաղնե հաստ ձեռնափայտին և ուսերը բարձրանում էին, թոքերում հավաքելով անհնազանդ օդը: Վզին գունավոր շարժ կար, երկար ճերմակ քունքամազերով շրջապատված դեմքը համարյա տեսանելի չէր, միայն թավամազ հոնքերի տակից փայլում էին մուգ, խելացի աչքերը: Մի խոսքով, վրաս թողեց կյանքի մայրամուտին աղքատության մեջ ընկած պատվարժան ծերուկ ծովայինի տպավորություն:

— Ինչո՞վ կարող ենք ծառայել, հայրիկ, — հարցրեցի ես:

Ծերունական դանդաղ հայացքով նա գննեց սենյակը:

— Միստր Շերլոկ Հոլմսը տա՞ն է, — հարցրեց նա:

— Ոչ, բայց ես փոխարինում եմ նրան: Կարող եք ձեր ցանկացածը ինձ պատմել:

— Իսկ ես ցանկանում եմ տեսնել հենց Շերլոկ Հոլմսին, — համառորեն կրկնեց ծերուկը:

— Բայց չէ որ ձեզ ասում եմ, որ փոխարինում եմ նրան: Դուք, իհարկե, եկել եք Մմիթի շոգենավակի առիթո՞վ:

— Այո, գիտեմ նաև, թե որտեղ են Հոլմսի փնտրած մարդիք: Գիտեմ, որտեղ է գանձը: Ես ամեն ինչ գիտեմ:

— Պատմեք ինձ, դա նույնն է, թե պատմել եք Հոլմսին:

— Ոչ, ես պետք է պատմեմ միայն անձամբ նրան, — պնդեց մեր հյուրը ծերունական համառությամբ ու դժգոհոհությամբ:

— Այդ դեպքում, սպասեք նրան:

— Չեմ ցանկանում սպասել: Չեմ ցանկանում ոչ մեկի համար օրս կորցնել: Եթե միստր Հոլմսը չկա, թող անձամբ ինքն ամեն ինչ գտնի, իմանա: Իսկ ձեզ ոչ մի բան չեմ ասի, ինձ բոլորովին դուր չի գալիս ձեր կերպարանքը:

Նա քարշ գալով գնաց դեպի դուռը, բայց Ջոնսը հասավ նրան:

— Սպասեք, բարեկամս, — ասաց նա: — Դու կարևոր տեղեկություններ ունես և այստեղից ոչ մի տեղ դուրս չես գա: Ցանկանում ես, թե ոչ, դու պետք է սպասես մեր ընկեր Հոլմսին:

Ծերուկը նետվեց դեպի դուռը, բայց Էթելնի Ջոնսն այն փակեց իր լայն թիկունքով, և ծերուկն հասկացավ, որ դիմադրելն անօգուտ է:

— Լավ վերաբերմունք է հյուրի նկատմամբ, — ասաց նա, ձեռնափայտը խփելով գետնին: — Այստեղ եկա միստր Հոլմսի հետ խոսելու, իսկ դուք երկուսդ հարձակվեցիք վրաս, չնայած ձեզ ճանաչել անգամ չեմ ցանկանում: Լավ եք վարվում մարդու հետ:

— Ձեզ ոչ մի վատ բան չենք անի, — ասացի ես: — Նստեք այս բազկաթոռին և սպասեք: Հոլմսը շատ շուտ կվերադառնա:

Նա մոտեցավ բազմոցին և նստեց, մեծ գլուխը հենելով ձեռքերին: Ես ու Ջոնսը նորից վերցրինք մեր սիգարները և շարունակեցինք խոսակցությունը: Հանկարծ Հոլմսի ձայնը ընդհատեց մեր խոսքը:

— Ինձ էլ կարող եք սիգար առաջարկել:

Միանգամից վեր թռանք տեղներիցս: Մեր դիմաց նստած էր Հովնաթև և գոհ ժպտում էր:

— Հո՛ւնս, — բացականչեցի ես: — Դուք այստե՞ղ եք, իսկ ու՞ր է ձերուկը:

— Ահա նա, — պատասխանեց Հովնաթև, մեկնելով ճերմակ կեղծամը: — Ահա և մնացածը՝ քունքամազերը, հոնքերը: Գիտեի, որ դիմակահանդեսը հաջող է, բայց չէի ենթադրում, որ կարող է այսպիսի փորձության դիմանալ:

— Այ քեզ հրաշք, — անկեղծ հիացմունքով բացականչեց Ջոնսը: — Ձեզնից հիանալի դերասան դուրս կգար, առաջին կարգի: Հազում եք իսկ և իսկ աշխատանքային տան վարձու բանվորի նման: Իսկ ձեր դողացող ծնկներին կարելի է շաբաթական տասը ֆունտ տալ: Բայց մեզնից հեռանալ, այնուամենայնիվ, չկարողացաք:

— Այս դիմակահանդեսային համազգեստով աշխատեցի ամբողջ օրը, — ասաց Հովնաթև՝ վառելով սիգարը: — Գիտեք ինչ, հանցագործ աշխարհն արդեն բավականին լավ գիտե ինձ, հատկապես, երբ հենց այստեղ նստած ընկերս ձեռքն առավ գրիչը: Այնպես որ, այժմ առաջավոր դիրքերում կարող եմ հայտնվել միայն փոխված տեսքով: Դուք ստացա՞ք իմ հեռագիրը:

— Այո, այդ պատճառով էլ այստեղ եմ:

— Ինչպե՞ս է առաջ ընթանում ձեր վարկածը:

— Հոդս ցնդեց: Հարկադրված բաց թողեցի երկու գերիներին, իսկ մնացած երկուսի դեմ ոչ մի հանցանշան չկա:

— Մի սրտնեղեք: Մենք փոխարենը մի այլ գույգ կտանք: Միայն խնդրում եմ ձեզ, ժամանակավորապես ամբողջովին ինձ ենթարկվեք, գործեք ըստ նախագծած ծրագրի: Համաձա՞ն եք: Իհարկե, այս գործի ողջ վաստակը, պաշտոնապես ձեզ կվերագրվի:

— Համաձայն եմ, եթե օգնեք բռնելու այդ երկուսին:

— Այդ դեպքում, նախ և առաջ, ինձ անհրաժեշտ է ոստիկանության արագընթաց մոտորանավակ: Ժամը յոթին՝ Վեստմինսթերյան նավահանգստի մոտ:

— Կլինի: Այնտեղ միշտ հերթապահում է ոստիկանական նավակը: Բայց հավանաբար, ավելի լավ կլինի անցնեն փողոցը և հավաստիության համար գանգահարեն:

— Հետո, երկու ուժեղ ոստիկան՝ դիմադրությունը կանխելու համար:

— Նավակում միշտ էլ երկու-երեք ոստիկան կա:

— նրանց բռնելու դեպքում մեր ձեռքում կլինի նաև գանձը: Կարծում եմ, ընկերս շատ ուրախ կլինի արկղը հասցնել մի երիտասարդ լեդիի, որին իրավացիորեն պատկանում է կեսը: Թող նա առաջինը բացի դա: Հը՞, Ուոտսոն:

— Դա ինձ շատ հաճելի կլինի:

— Ընդացակարգի խախտում, բայց գործն այնքան անսովոր է, որ կարելի է աչք փակել: Սակայն հետո գանձը պետք է հանձնել իշխանություններին, մինչև հետաքննության վերջը:

— Իհարկե: Դա հեշտ կլինի անել: Մի հանգամանք ևս: Շատ կուզենայի մի քանի մանրամասներ լսել հենց Ջոնսթան Սմոլի շուրթերից: Գիտեք, սիրում եմ գործը մինչև վերջ պարզել: Առարկություն չի՞ լինի, եթե նրա հետ ոչ պաշտոնապես հանդիպեմ այստեղ՝ տանը, կամ ուրիշ տեղ, իհարկե, հուսալի պահակախմբի առկայությամբ:

— Դուք դրության տերն եք և խաղաթղթերը ձեր ձեռքին են: Բայց մինչև հիմա ես ապացույցներ չունեմ անձամբ այդ Ջոնաթան Սմոլի գոյության մասին: Սակայն եթե դուք նրան ինձ ներկայացնեք, ես չեմ մերժի ձեր խնդրանքը:

— Ուրեմն, որոշված է:

— Որոշված է: Ուրիշ ի՞նչ կա:

— Եվ վերջինը, ցանկանում եմ, որ դուք մեզ հետ ճաշեք: Ոստրեներ ունենք, մի գույգ կաքավ և սպիտակ գինու ոչ մեծ ընտրանի: Ոչ, Ուոտսոն, դուք չեք կարողանում գնահատել իմ խոհարարական արժանիքները:

Գլուխ 10 — Կղզեբնակի վերջը

Ընթրիքն անցավ շատ աշխույժ: Հոլմսը, երբ ցանկանում էր, կարող էր բացոլիկ հետաքրքրի գրուցակից լինել: Իսկ այդ երեկո նա բարձր տրամադրության մեջ էր՝ զգացվում էր ուժեղ նյարդային գրգռվածությունը: Առաջ նրան երբեկ այդքան շատախոս չէի տեսել: Խոսում էր միջնադարյան ինտելեկտուալության և միստերիաների, Ստրադիվարիուսի ջութակների, Ցեյլոնի բուդհայականության և զինվորական նավերի ապագայի մասին: Եվ խոսում էր այնպես, կարծես բոլոր բնագավառների մասնագետ լիներ: Այդ պայծառ բռնկումը նախօրյակին պատած թախիծի հակազդեցությունն էր կենդանի ուղեղի վրա: Պարզվեց, որ Էթելնի Ջոնսը գործից դուրս շատ մարդամոտ է և ճաշի ընթացքում ապացուցեց, որ հասկանում է կյանքի հաճույքը: Զգալով գործի ավարտը, ես էլ բարձր տրամադրության մեջ էի՝ վարակվելով Հոլմսի ուրախությամբ: Ամբողջ երեկոյի ընթացքում մեզնից ոչ մեկը չհիշեց մեր հավաքվելու պատճառը:

Երբ սեղանը հավաքեցինք, Հոլմսը նայեց ժամացույցին և բաժակները պորտվելն լցրեց:

— Եկեք խմենք, — ասաց նա, — մեր փոքրիկ հարձակման հաջողության կենացը: Իսկ այժմ գնալու ժամանակն է: Դուք զենք ունե՞ք, Ուոտսոն:

Իմ հին մարտական ատրճանակը: Սեղանի դարակում է:

Վերցրեք ձեզ հետ: Անհրաժեշտ է: Տեսնում եմ կառքն արդեն եկել է: Վեցն անց կեսին էր պատվիրված:

Վեստմինսթերյան նավակայանի մոտ հասանք յոթից մի փոքր անց: Նավակն արդեն սպասում էր: Հոլմսը մի քննախույզ հայացք նետեց վրան:

— Կա՞ ինչ-որ բան, որը մատնի, թե ոստիկանությանն է պատկանում, — հարցրեց նա:

Այո, կողքի կանաչ լապտերը:

— Այդ դեպքում, հանեք:

Ամեն ինչ կատարվեց ակնթարթորեն, մենք մտանք նավակ և ափից հեռացանք: Ջոնսը, Հոլմսն ու ես նստեցինք նավախելին: Մի ոստիկան կանգնել էր դեկի մոտ, մյուսը հետևում էր վառելիքին, առջևում տեղավորվել էին երկու դյուժին ոստիկաններ:

— Ու՞ր, — հարցրեց Ջոնսը:

Դեպի Թաուեր: Հրամայեք նրանց կանգ առնել Ջեկոբսոն-Յարդի դիմաց:

Պարզվեց, որ մեր նավակը շատ արագնաց է: Մուրացինք բեռնված լաստանավերի շարանների կողքով, կարծես նրանք չէին լողում, այլ կանգնած

էին տեղում: Երբ առաջ անցանք և ետևում թողեցինք գետային շոգենավը, Հովսեփ Բաբայանը բավարարված ժպտաց:

— Կարելի է կարծել, որ մեր նավակն ամենաարագընթացն է գետում, — նկատեց նա:

— Դժվար թե: Բայց սրանից արագընթացներ հավանաբար քիչ կգտնվեն:

— Մենք պետք է հասնենք «Ավրորային» Իսկ նա համարվում է արագընթաց նավ: Հիմա ձեզ կձանթագնեն գործի ընթացքին: Ուռտատն: Հիշում եք, ինչպես էր ինձ տանջում այդ անհեթեթ հապաղումը:

— Հիշում եմ:

— Այսպես ուրեմն, որոշեցի ուղեղիս լիակատար հանգիստ տալ և զբաղվել քիմիական փորձերով: Մեր պետական գործիչներից մեկը մի առիթով ասել է, որ զբաղմունքի փոփոխությունը լավագույն հանգիստն է: Եվ դա ճիշտ է: Երբ ինձ վերջապես հաջողվեց քայքայել ածխաջրածինը, վերադարձա մեր հանելուկին և ամեն ինչ սկսեցի նորից մտածել: Տղաներիս խումբը մեկ անգամ չէ, որ տակնուվրա էր արել ամբողջ գետը և անարդյունք: «Ավրորան» ոչ մի տեղ չկա՝ ոչ նավակայանում, ոչ՝ տանը: Հետքերը թաքցնելու համար դժվար թե խորտակած լինեին: Չնայած այդ հնարավորությունն էլ էր հարկավոր նկատի առնել, եթե որոնումները ի վերջո ոչ մի բանի չհանգեցնեին: Գիտեի, որ այդ Սմոլը բավականին խորամանկ է, բայց կարծում էի, թե որևէ հասարակ նրբին խորամանկություն ուժերից վեր է: Որպես կանոն, դա սպասում ես կրթված մարդուց: Հետո մեզ հայտնի էր, որ նա մի որոշ ժամանակ ապրել է Լոնդոնում, հսկողություն սահմանել Պոնդիշերի-Լոջի վրա, իսկ դա նշանակում է, որ նա Լոնդոնը անմիջապես լքել չի կարող. գործերը հարթելու համար ժամանակ է պետք՝ մեկ օր կամ, ի երջանկություն մեզ, ավելին: Ծայրահեղ դեպքում, այսպիսին է հետևությունը:

— Հետևությունը բավականին թույլ է, — նկատեցի ես: — Նա կարող էր ամեն ինչ հարթել մինչև Պոնդիշերի-Լոջի վրա հարձակվելը:

— Ոչ, չեմ կարծում: Նա շատ թանկ է գնահատում իր ապաստարանը, որտեղ կարելի է վտանգի դեպքում թաքնվել, և դա կլքի միայն այն ժամանակ, երբ միանգամայն հավատացած լինի, որ իրեն ամենևին ոչինչ չի սպառնում: Ահա թե ինչ էլ է ծագել գլխումս. Ջոնաթան Սմոլը պետք է հասկանար, որ իր օգնականի արտասովոր արտաքինը, որքան էլ ինքը ջանա քողարկել, կարող է ամեն տեսակի կասկած ծնել և հնարավոր է, ինչ-որ մեկը գլխի ընկնի նրան կապել նորվուդյան ողբերգության հետ: Նա բավական ինտելիգենտ է այդ հասկանալու համար: Եվ այսպես, նրանք իրենց շտաբ-բնակարանը լքել են գիշերը, մթության քողի տակ: Իհարկե, լավագույն տարբերակը կլինեք վերադառնալ մինչև լուսաբաց: Բայց «Ավրորան», միսիս Սմիթի ասելով, նավակայանից հեռացել է, երբ արդեն ժամը չորսը կլինեք: Այդ ժամանակ լրիվ լույս է, մեկ ժամից փողոցներում մարդիկ կհայտնվեն: Դրանից եզրակացրի, որ հեռու գնացած չպիտի լինեն: Նրանք վարձել են Սմիթի նավակը, լավ վճարել են, որ լեզուն իրեն քաշած պահի և մինչև վերջնականապես անհետանալը շտապել են իրենց որջը: Որոշել են մի քանի օր սպասել, որպեսզի թերթերից իմանան, թե ինչ ուղղությամբ է ընթանում հետաքննությունը և իրենց հետապնդում են, թե ոչ: Եվ այդ ժամանակ, արդեն դարձյալ մթության քողի տակ, գնալ Գրեյվսենդ, կամ Դաունսում ինչ-որ տեղ: Անկասկած, նրանք

նախօրոք հոգացել են տեղ պատվիրել Ամերիկա կամ գաղութներ մեկնող ինչ-որ նավում:

— Իսկ շոգենավա՞կը: Չէ՞ որ իրենց հետ չէին կարող տանել:

— Իհարկե, չէին կարող: Իսկ դա նշանակում է, որ «Ավրորան», չնայած անորսալիությանը, գտնվում է ինչ-որ բոլորովին մոտիկ մի տեղ: Ինձ դրեցի միստր Սմոլի տեղը և ջանացի գործին նայել նրա աչքերով: Ամենայն հավանականությամբ, նա որոշել է, որ «Ավրորան» թողնելը կամ մոտիկ նավակառանում կանգնեցնելը վտանգավոր է. հանկարծ ու ոստիկանությունը, այնուամենայնիվ, ընկել է իրենց հետքի վրա, իսկ որտե՞ղ թաքցնել «Ավրորան», որպեսզի բոլորի համար անտեսանելի լինի, իսկ իր համար ցանկացած բռպեհն՝ հասանելի: Ի՞նչ կանեի ես, եթե հարկ լիներ այդպիսի խնդիր լուծել: Եվ ես գտա միակ, եզակի հնարավորությունը: Մանր վերանորոգման համար նավակը կանգնեցնել ինչ-որ նավանորոգարանում: Այնտեղ հուսալի քողարկված կլինի կողմնակի աչքերից և միշտ լողալու պատրաստ:

— Ինչ պարզ է:

— Բանն էլ հենց այն է, որ հասարակ բացատրությունը ծագում է վերջում: Երբ դա հասկացա, որոշեցի անմիջապես գործել և ընդունելով անմեղ ծերուկ նավաստու կերպարանք, ուղևորվեցի Թեմզայով ներքև՝ գննելու նավանորոգարանները: Դրանցից տասնհինգում «Ավրորայի» մասին ոչ մեկը չէր էլ լսել: Փոխարենը տասնվեցերորդում պարզևատրվեցի համբերությանս համար՝ ինձ ասացին, «Ավրորան» երկու օր առաջ իրենց մոտ կանգնեցրել է փայտե ոտքով մի մարդ և խնդրել է ղեկը ստուգել: «Բայց պարզվեց, որ ղեկը միանգամայն կարգին էր, — ասաց ինձ վարպետը: Ահա այնտեղ է կանգնած, սև՝ կարմիր շերտերով:» Հազիվ հասցրեց այդ ասել, երբ նավանորոգարանում հայտնվեց ոչ այլ ոք, քան ինքը՝ Մորդեկայ Սմիթը, կորած «Ավրորայի» տերը: Իհարկե, ես չէի ճանաչի նրան, բայց նա հիմնավորապես հարբած լինելով, կոկորդով մեկ բղավում էր, որ ինքը «Ավրորայի» տերն է: Մորդեկայ Սմիթը պահանջում էր, որ իր տաշտակը այսօր ժամը ութին պատրաստ լինի: «Ուղիղ ժամը ութին — կրկնեց նա, — ես խոստացել եմ երկու ջենտլմենների, որոնք չեն սիրում սպասել» Հավանաբար նրան լավ էին վճարել, որովհետև շիլինգները աջ ու ձախ էր նետում: Որոշ ժամանակ գնացի ետևից, , բայց նա ծլկեց և մտավ առաջին իսկ պանդուկը: Այդ ժամանակ վերադարձա նավանորոգարան: Ճանապարհին պատահականորեն հանդիպեցի տղաներից մեկին և պատվիրեցի «Ավրորան» հսկել: Տեսնելով, որ «Ավրորան» հեռանում է, նա կսկսի թաշկինակը թափահարել: Այդ ընթացքում մենք կհսկենք գետի վրա: Եվ հենց որ դուրս գան նավանորոգարանից, կբռնենք «Ավրորայի» և գանձերի հետ միասին:

— Դրանք մեր փնտրած մարդիկ կլինեն թե ոչ, բայց ամեն ինչ անթերի է մտածված, — ասած Ջոնսը: — Համենայն դեպս, ես Ջեկոբսոն-Յարդ կուղարկեի ոստիկանական մի ջոկատ և հանգիստ կբռնեի նրանց, հենց որ հայտնվեին:

— Իսկ նրանք այնտեղ չէին հայտնվի: Սմոլը խորամանկ է: Չեմ կասկածում, որ նախ հետախույզ կուղարկի և եթե վտանգ զգա, որջում կթաքնվի մի շաբաթ ևս:

— Բայց կարելի է հետևել Սմիթին և այդ կերպ գտնել նրանց թաքստոցը, — ասացի ես:

— Այդ դեպքում մի օր էլ կկորցնենք: Բացի այդ, իննսունինը տոկոսով համոզված եմ, որ Սմիթը չգիտե, թե որտեղ են նրանք թաքնվում: Նրան լավ են վճարել, վիսկի կա, ինչ իմաստ ունի անհարկի, գործին չվերաբերող հարցեր տալ. . . Հրամաններն ուղարկում են, դրանք կատարում է. . . Ոչ, ես մտածել եմ հնարավոր բոլոր ուղիները, սա լավագույնն է:

Մինչ մենք խոսում էինք, մեր նավակն անցավ Թեմզայի վրայով գցված բազմաթիվ կամուրջների տակով: Արևի վերջին ճառագայթները ոսկեգոծել էին սուրբ Պետրոսի տաճարի գմբեթի խաչը: Թաուեր հասանք, երբ արդեն խավար էր:

— Ահա Ջեկոբսոն-Յարդը, — ասաց Հոլմսը՝ մատնացույց անելով կայմերի ու պարանասարքերի անտառը Սուրեյի ուղղությամբ:

— Ետ ու առաջ նավարկեք այս նավատորմի ծածկույթի տակ, — Հրամայեց Հոլմսը, աչքերին մոտեցնելով գիշերային ծովային հեռադիտակը և միառժամանակ դիտեց ափը: — Տեսնում եմ իմ հերթապահին, բայց դեռ թաշկինակը չի թափահարում:

— Իսկ ի՞նչ կլինի, եթե անցնենք մի քիչ ներքև և նրանց այնտեղ սպասենք, — անհամբերությունից այրվելով առաջարկեց Ջոնսը:

Բոլորս ասես ասեղների վրա նստած լինեինք: Նույնիսկ ոչինչ չիմացող ոստիկաններն ու դեկապետը, հնոցապանների հետ միասին վարակվել էին մեր հուզմունքով:

— Իրավունք չունենք համարձակության դիմելու, — ասաց Հոլմսը: — Տասի դիմաց մեկ հավանականություն կա, որ գետով ներքև կլողան, ոչ թե՛ վերև: Եվ, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնենք այդ հնարավորությունը ևս: Այստեղից մեզ լավ տեսանելի է նավանորոգման մուտքը, իսկ մենք համարյա տեսանելի չենք: Գիշերը խոստանում է լուսավոր լինել և կրակները գետի վրա շատ են: Պետք է մնանք այնտեղ, որտեղ կանք: Տեսնում եք, այստեղից գազի լապտերների լույսի ներքո ինչ լավ են երևում շտապող մարդիկ:

— Նավանորոգարանում աշխատելուց հետո տուն են վերադառնում:

— Ինչ հոգնած ու կեղտոտ են: Բայց յուրաքանչյուրի մեջ հուրհրատում է անմահ կրակի կայծը: Նրանց նայելով ոչ մի դեպքում այդ չես ասի: Եվ, այնուամենայնիվ, դա այդպես է: Համենայն դեպս, մարդը տարօրինակ էակ է:

— Ինչ-որ մեկը մարդուն համարել է հոգով օժտված կենդանի:

— Ուինվուդ Ռիդը լավ է ասել այդ մասին, — շարունակեց Հոլմսը: — Նա ասում է, որ մարդն առանձին վերցրած անլուծելի հանելուկ է, բայց ամբողջությամբ մարդիկ իրենցից ներկայացնում են մաթեմատիկական միասնություն և ենթակա են որոշիչ կանոնների: Օրինակ, միթե հնարավոր է կանխագուշակել առանձին մարդու գործողությունը, իսկ ամբողջ կոլեկտիվի վարքը, պարզվում է, կարելի է գուշակել մեծ ճշտությամբ: Անհատներն իրարից զանազանվում են, բայց մարդկային բնավորությունների տոկոսային հարաբերությունը ցանկացած կոլեկտիվում մնում է նույնը: Այդպես է ասում վիճակագրությունը: Բայց այն ինչ է, թվում է, թաշկինակ է: Իսկապես, այնտեղ ինչ-որ մեկը ճերմակ բան է թափահարում:

— Դա ձեր տղաներից մեկն է: Պարզ տեսնում եմ նրան, — բացականչեցի ես:

— Ահա և «Ավրորան», — բղավեց Հոլմսը: — Գերազանց ընթացք ունի: Հեյ, այնտեղ, ներքևում, լրի՛վ առաջ: Հետևեք դեղին լույսով այդ նավակին: Ես ինձ չեմ ների, եթե ձեռքից բաց թողնենք:

«Ավրորան» աննկատելիորեն դուրս լողաց նավանորոգարանից և արագություն վերցնելով այնպես անցավ փոքր նավերի ետևից, որ երբ մեզ տեսանելի դարձավ, արդեն սլանում էր ամբողջ թափով: Նա գնում էր գետնի վար, հեռու մնալով ավից: Արագությունը շշմեցուցիչ էր: Ջոնսը տագնապահար նայեց:

— Շատ արագ է գնում, — ասաց նա: — Չենք հասնի:

— Պետք է հասնենք, — ասաց Հոլմսը, ատամները սեղմելով: — Ածուխ չի նայեք: Մեքենայից քամեք ինչ հնարավոր է: Ավելի լավ է նավակն այրվի, քան նրանք հեռանան մեզնից:

Այժմ գնում էինք ուղիղ նրանց վրա: Հնոցում կրակը գվվում էր, հուժկու մեքենան դողդում էր, ինչպես հսկա մետաղե սիրտ: Նավակի սուր քիթը դանակի պես ճեղքում էր հանդարտ ջուրը, աջ ու ձախ ուղարկելով երկու օղակաձև երկար ձգված ալիքներ: Շարժիչի տակտով ամբողջ նավակը ցնցվում էր և դողդողում, ինչպես կենդանի էակ: Նավաքթի դեղին լապտերը առաջ էր գցում առկայծող լույսի երկար սյուն: Մեր առջևով լողում էր մութ մի ստվեր՝ «Ավրորան» էր:

Ետևի ճերմակ փրփուրի փոթորիկը վկայում էր նրա արագության մասին: Սլացանք շոգենավերի, բեռնանավերի, առևտրական առագաստանավերի կողքով, շրջանցելով նրանց աջից ու ձախից: Մթության մեջ լսելի էին բարձր ձայներ, «Ավրորան» ավելի ու ավելի առաջ էր ընթանում, և մենք էլ հետապնդում էինք նրան:

— Ավելացնել արագությունը, — բղավեց Հոլմսը, դեկավարման մասից ներս նայելով մեքենայական բաժին. վառ կրակը ներքևից լուսավորել էր նրա լարված, արծվային դեմքը:

— Ինձ թվում է, հասնում ենք, — ասաց Ջոնսը՝ հայացքը չհեռացնելով «Ավրորայից» :

— Ոչ մի կասկած չկա, — բացականչեցի ես: — Մի քանի րոպե ևս, և կհասնենք նրանց:

Հենց այդ ակնթարթին ճակատագիրը չարախնդաց մեզ վրա. մեր ճանապարհը կտրեց երեք բեռնանավ քաշող մի նավ: Եթե չլինեք դեկը մինչև վերջ շրջող նավավարը, կմխրձվեինք նրա մեջ: Երբ վերջապես առաջ անցանք նրանից և դարձյալ բռնեցիցնք ուղղությունը, պարզվեց, որ «Ավրորան» առաջ է անցել ամբողջ երկու յարդով: Բայց, բարեբախտաբար, դեռ ամեն ինչ լավ տեսանելի էր: Մեր մեքենան լրիվ հզորություն էր զարգացրել, նուրբ նավակը դողդողում և ճրթճրթում էր մեզ տանող կատաղի էներգիայի ճնշման տակ: Ետևում թողեցինք Պուլը, անցանք Վեստ-ինդյան նավանորոգարանը, շրջանցեցինք երկար Դեփթ-Ֆորդյան ցամաքալեզվակը և Շան կղզին: Առջևի անորոշ բիծը սկսեց ընդունել բարեձև «Ավրորայի» տեսքը: Ջոնսը միացրեց լուսարձակը և նրա տախտակամածին մարդիկ տեսանք: Մեկը նստել էր նավախելին՝ ոտքերի մոտ դրված ինչ-որ սև առարկայի վրա հակված: Կողքին դրված էր հսկա նյուֆաունդլենդի նման մուգ կույտ: Կաթսայի կարմիր բոցը լուսավորել էր ավագ Սմիթին: Նա մինչև գոտկատեղը մերկացած, լարված, կատաղի, ածուխ էր նետում հնոցը, որդին բռնել էր դեկալձակը: Փախստականները միանգամից չհասկացան, որ իրենց հետապնդում են, բայց տեսնելով, որ գնում ենք իրենց ետևից, կրկնելով բոլոր ձիգզագներն ու շրջադարձերը, դադարեցին կասկածելուց: Գրինվիչի մոտ մեզ իրարափց

բաժանում էր հարյուր սաժեն, Բլեքուոլի մոտ հեռավորությունը կրճատվեց, հասավ մինչև յոթանասունհինգի: Ջինվորական տարիների իմ ամբողջ արկածային կյանքում մեկ անգամ չէ, որ ինձ հարկ է եղել մասնակցել հետապնդումների, բայց երբեք այդպես այրող անհանգստություն չեմ զգացել, ինչպես Թեմզայով կատաղի վազքի ժամանակ: Անվերջ մոտենում էինք ու մոտենում: Գիշերային լռության մեջ լսելի էր նրանց մեքենայի հնքը: Նավախելի վրայի մարդը դեռ այնտեղ էր՝ տախտակամածի վրա խոնարհված ձեռքերով ինչ-որ բան անելով և բուպեն մեկ գլուխը բարձրացնելով, որպեսզի աչք զցի մեր և «Ավրորայի» միջև եղած տարածությանը: Արդեն շատ մոտ էինք: Ջոնսը բղավեց, որ կանգ առնեն: Մեզ բաժանում էր ընդամենը չորս նավաչափ և երկու նավակները թռչում էին, ասես թևեր ունենային: Թեմզայի այն մասն ամայի էր: Մի կողմում ձգվում էր Բարկինգլենդի ցածրավայրը, մյուսում՝ Պլամստեյան տխուր ճահիճները: Լսելով Ջոնսի հրամանը, նավախելի մարդը վեր թռավ և գլխի վերևում սեղմած բռունցքները թափահարելով, սկսեց մեզ հայեցել կռպիտ և խոպոտ ձայնով: Ուժեղ, բարձրահասակ մարդ էր, լայն տարածած ոտքերով կանգնել էր տախտակամածին, և ես տեսա, որ ազդրից սկսած, աջ ոտքի տեղ փայտե պրոթեզ ուներ: Նրա կտրուկ, խոպոտ ձայնից տախտակամածի մուգ կույտը շարժվեց և վերածվեց փոքր, սև մարդուկի, որն ուներ խոշոր, ոչ ճիշտ գլխի ձև՝ զգզված մազերի դեզով: Հոլմսը հանեց ատրճանակը, այդ հրեշին տեսնելով ես ևս հանեցի իմը: Հրեշի վրա ինչ-որ մուգ բան կար, ոչ այն է՝ լայն խալաթ, ոչ այն է՝ ծածկոց, բաց էր մնացել միայն դեմքը, որը կարող էր երևալ միայն մղձավանջային երազներում: Կյանքում երբեք չէի հանդիպել այդպիսի դաժան և արնախում դեմքի: Աչքերը խոժոռ, մռայլ փայլ ունեին, իսկ հաստ, դուրս շրջված շրթունքներն անասնական կատաղությունից ծոմովել էին չար քմծիծաղից՝ մերկացնելով կափկափող ատամները:

— Եթե բարձրացնի ձեռքը, կրակեք, — հանգիստ ասաց Հոլմսը:

«Ավրորան» արդեն մեկ նավաչափ հեռավորության վրա էր, կարելի է ասել, մեկնած ձեռքի հեռավորությամբ: Լավ տեսնում էի այդ երկուսին՝ ոտքերը լայն դրած, ընտրովի հայեցանքներով մեզ անարգող սպիտակ, հաղթանդամ տղամարդուն և սարսափելի գաճաճին՝ նրա նողկալի դեմքն ու մեր լապտերի յույսի ներքո փայլող բացված դեղին ատամները:

Լավ է, որ հասցրինք այդքան մոտենալ: Չնայած աչքներս չէինք կտրում նրանից, արագ շարժումով իր ծածկոցի ծալքերից նա հանեց դպրոցական քանոնի նման փայտե մի կարճ խողովակ և մաքրեց բերանը: Մեր կրակոցները հնչեցին միաժամանակ: Գաճաճը շրջվեց, ձեռքերը տարածեց և շնչասպառ հառաչանքով ընկավ ջուրը: Մի ակնթարթ ալիքների փրփուրների մեջ տեսա նրա մահաբեր, ատող հայացքը: Նույն ակնթարթին փայտե ոտքով մարդը ամբողջ ուժով ընկավ դեկի վրա, և նավակը թեքվեց դեպի հարավային ափը: Շարունակեցիցնք կրակել, բայց վրիպեցինք: Գնդակները սուրացին մի քանի ֆուտ հեռու: Մենք ևս թեքվեցինք, բայց ուշ էր. «Ավրորան» քթով բախվեց ափին: Վայրի ու ամայի էր ափը: Լուսինը սառը լույսով ողողել էր հսկա ճահճահարթավայրը, ուր տեղ-տեղ փայլում էր կանգնած ջուրը, և սևին էին տալիս փտող բույսերի կղզակները: Խուլ խփվելով ափին, «Ավրորան» հիմնովին թաղվեց. քիթը տնկվեց օդում, իսկ նավախելը սուզվեց ջրի մեջ: Փախստականն ափ թռավ, և նրա փայտե ոտքն ամբողջովին խրվեց կաշուն հողի մեջ: Թափահարելով մարմինը, իզուր էր նա ջանում ազատել ոտքը: Այլևս

ոչ մի քայլ չէր կարող անել՝ ոչ առաջ, ոչ ետ: Ոռնում էր անգոր չարությամբ և մյուս ոտքով կատաղորեն խփում ճահճի խյուսին: Բայց չարաբաստիկ ոտքը խորն էր խրվել, և կարողացանք հանել միայն պարանի օգնությամբ, որը կապեցինք իրանին: Հսկա, վտանգավոր ձկան նման երկար ժամանակ քաշում էինք նրան: Երկու Սմիթները՝ հայր ու որդի, ընկճված նստել էին իրենց նավակում, բայց հնազանդորեն ենթարկվեցին մեր հրամանին և տեղափոխվեցին մեր տախտակամածը: Հետո ազատեցինք «Ավրորան» և ամուր կապեցինք մեր նավախելին: Նրա տախտակամածին դրված էր երկաթե ծանր, հնդկական ծանր ձեռակերտ սնդուկը, անկասկած հենց այն, ուր պահվում էին Շոլտո ընտանիքին դժբախտություն բերող գանձերը: Բանալի չկար և զգուշորեն, չնայած բավականին ծանր էր, այն տեղափոխեցինք մեր նավասենյակը:

Դանդաղ վերադառնում էինք Լոնդոն և ողջ ճանապարհի ընթացքում լուսարձակով խուզարկում էինք գետն ու ավիր, բայց այդպես էլ չգտանք փոքրիկ կղզեբնակին: Թեմզայի հատակին, ինչ-որ տեղ, այդպես էլ մինչև դարավերջ պառկած կմնան մեր մառախլապատ ավերում իրենց վերջը գտած այդ արտասովոր օտարականի ոսկորները:

— Նայեք, — ցույց տվեց Հոլմսը մեր փայտե դռան փեղկը, — նա, այնուամենայնիվ, առաջինը կրակեց:

— Իրոք, փայտի մեջ, հենց իմ ու Հոլմսի կանգնած տեղի դիմաց, ցցված էր այն սև փշերից մեկը, որին այնքան լավ ծանոթ էինք: Պետք է, որ փուշը մեր միջով թռած լիներ հենց այն բուրբուխ, երբ միաժամանակ արձակեցինք մեր ատրճանակները: Հոլմսը ժպտաց, իսկ ինձ, պետք է խոստովանեմ, պատեց դողը, երբ պատկերացրի, թե ինչպիսի սարսափելի մահից մազապուրծ եղանք այդ գիշեր:

Գլուխ 11 — Ագրայի գանձերը

Մեր գերին նստել էր նավախցում, փոքրիկ սնդուկի դիմաց, որին այնպես ձգտում էր և հանուն որի հաղթահարել էր այդքան արգելքներ: Դեմքը, որ ասես կարմիր փայտից լիներ, հուսահատ հանդգնության հասնող հայացքով և մեծ ու փոքր կնճիռների ցանցով, խոսում էր բաց երկնքի տակ աշխատած կյանքի մասին: Խիտ բուսականությամբ ծածկված կզակը ուժգին առաջ էր ցցված, ընդգծելով համառ, կամակոր բնավորությունը: Հավանաբար, կլիներ մոտ հիսուն տարեկան, սև, գանգուր մազերը տեղ-տեղ պլեխառն էին: Երբ հանգիստ էր, դիմագծերը զուրկ չէին գրավչությունից, փոխարենը բավական է կատաղեր, մենք դա հենց նոր տեսանք, դառնում էր դաժան ու մռայլ՝ կիտած հոնքերով ու առաջ ցցված կզակով: Այժմ նստած էր անշարժ, շղթայված, խոշոր ձեռքերը ծնկներին դրած և գլուխը կրծքին հակած: Սուր, փայլատակող հայացքը մերթ ընդ մերթ նետում էր սնդուկին՝ իր հանցագործ արարքների պատճառին: Ինձ թվաց, որ խիստ, ծածկամիտ դեմքին ավելի շատ վիշտ կար, քան չարություն: Մի անգամ նա վեր նայեց, և այդ հայացքում ես քմծիծաղ նկատեցի:

— Գիտեք, Ջոնաթան Սմոլ, — սկսեց Շերլոկ Հոլմսը, — շատ եմ ցավում, որ այսպես ստացվեց:

— Ես եւ, սրբ, — արձագանքեց նա զգացված: — Բայց կարծում եմ, այս անգամ ինձ կախաղան չի սպառնում: Պատրաստ եմ աստվածաշնչի վրա երդվելու, որ մեղավոր չեմ միստր Շոլտոյի սպանության մեջ: Այդ փոքրիկ սատանա Տոնգան կրակեց իր անիծյալ նետով: Ձեռքերս արյունով թաթախված չեն, սրբ: Շատ եմ ցավում այդ Շոլտոյի համար, կարծես հարազատ եղբայրս լինէր: Ես լավ քոթակեցի Տոնգային պարանով, բայց ինչ օգուտ: Կատարվածը ետ չես բերի:

— Միգար վերցրեք, — ասաց Հոլմսը: — Եվ մի կում խմեք տափաշշիցս, դուք ամբողջովին թրջվել եք: Բայց ասեք, ինչպե՞ս կարող էիք հուսալ, որ այդ փոքրիկ, թուլակազմ մարդը կհաղթի միստր Շոլտոյին և դեռ կպահի նրան, մինչև դուք պարանով վերև մագլցեիք:

— Ինչպես տեսնում եմ, դուք ամեն ինչ գիտեք, սրբ, կարծես տեսել եք սեփական աչքերով: Ես հույս ունեի, որ այդ ժամին աշխատասենյակում ոչ ոք չի լինի: Ես լավ գիտեի Պոնդիշերի-Լոջի կարգ ու կանոնը: Սովորաբար, այդ ժամին միստր Շոլտոն իջնում էր ներքև ընթրելու: Չեմ ցանկանում ոչինչ կոծկել: Հիմա լավագույն պաշտպանությունը ճիշտ խոսելն է: Եթե դա ձերուկ մայրը լինէր, հանգիստ սրտով թույլ կտայի ինձ կախաղան բարձրացնել: Նրան դանակով հարվածելն ինձ համար միևնույն է, թե ծխախոտ ծխել: Բայց ճակատագրի դաժան խաղ՝ տաժանակրության պիտի գնամ երիտասարդ Շոլտոյի պատճառով, որի հետ նույնիսկ ոչ մի անգամ չեմ վիճել:

— Դուք գտնվում եք Սկոտլանդ-Յարդի Էթելնի Ջոնսի ձեռքում, — Ընդհատեց Հոլմսը: Նա խոստացել է ձեզ ինձ մոտ ուղեկցել, և ես կխնդրեմ ամեն ինչ անկեղծորեն պատմել: Այն ժամանակ հնարավոր է կկարողանամ ձեզ օգնել: Կփորձեմ ապացուցել, որ այդ թույնն այնքան արագ է ներգործում, որ երբ դուք հայտնվել եք աշխատասենյակում, միստր Շոլտոն արդեն մեռած էր:

— Բայց դա այդպես էլ եղել է: Երբ պատուհանից ներս սողոսկեցի և տեսա կողքի թեքված դեմքը, հազիվ կաթված չստացա: Պատրաստ էի խեղդել Տոնգային, բայց նա ձեռքիցս պոկվեց և ձեղնահարկ փախավ: Այդ ժամանակ էլ մոռացավ մահակը և, ինչպես հետո խոստովանեց, կորցրեց այդ անիծյալ փշերը: Կարծում եմ, հենց դրանք էլ մեր դեմ եղած գլխավոր հանցանշաններն էին: Բայց, թեկուզ սպանեք, չեմ հասկանում, թե ինչպես կարողացաք ընկնել մեր հետքի վրա: Ձեր հանդեպ չարություն չեմ տածում, — նա դառը ժպտաց, — միայն մի տարօրինակ բան նկատեցի: Օրինականորեն ունենալով ամբողջ կես միլիոն ֆունտ, պետք է կյանքիս կեսն անցկացնեի ալեհատ կառուցելով Անդամանյան կղզիներում, իսկ երկրորդ կեսը, լավագույն դեպքում, Դարթմորում կնվիրեի հողային աշխատանքներին: Չարաբաստիկ պահի հանդիպեցի վաճառական Ահմեդին և լսեցի Ագրայի գանձերի մասին, որոնք իրենց բոլոր տերերին, միայն դժբախտություն են բերել: Ահմեդն այդ պատճառով սպանվեց, մայրը Շոլտոն ողջ կյանքն ապրեց մեղքի ծանրության տակ՝ սարսափից դողալով: Դրանք ինձ ցմահ բանտարկության կբերեն:

Այդ պահին նավախցի դռնից հայտնվեցին Էթելնի Ջոնսի դեմքն ու հզոր ուսերը:

— Ոչ այս, ոչ այն՝ ընտանեկան խնջույք, — ասաց նա: — Հոլմս, թույլ տվեք օգտվել ձեր տափաշշից: դե ինչ, կարծում եմ, մեզ մնում է շնորհավորել իրար: Միայն ավստո, որ չկարողացանք երկրորդին կենդանի բռնել: Բայց, դժբախտաբար, այլ ելք չկար: Իսկ գիտեք, Հոլմս, պետք է խոստովանեք, որ

բավականին մեծ համարձակության դիմեցիք: Իսկ եթե մենք չհասնեի՞նք նրանց:

— Ամեն ինչ լավ է, երբ լավ է վերջանում, — ասաց Հովմար: — Բայց ես իսկապես չգիտեի, որ «Ավրորան» այդքան արագաշարժ նավակ է:

— Սմիթն ասում է, որ Թեմզայի վրա «Ավրորայից» արագաշարժ շոգենավակ չկա, և եթե ինքը հնոցապան ունենար, երբեք չէինք հասնի իրենց: Ի միջի այլոց, երդվում է, որ ոչինչ չգիտեր նորվուդյան գործի մասին:

— Բաձարձակ ոչինչ, — հաստատեց մեր գերին: — Ես ընտրեցի Սմիթի նավակը, որովհետև լսել էի դրա որակի մասին: Մենք նրան ոչինչ չասացինք, բայց լավ վճարեցինք և խոստացանք ավելին վճարել «Էսմերալդայի» տախտակամածին, որը Գրեյվսենդից ուղեվորվում է Բրազիլիա:

— Դե ինչ, քանի որ Սմիթը ոչ մի վատ բան չի արել, մենք էլ նրան ոչինչ չենք անի: Մենք արագ ենք որսում մեր տղաներին, բայց մեղադրելիս չենք շտապում:

Ծիծաղելի էր տեսնել, թե ինչպես էր սնափառ Ջոնսը փքվում գոռոզությունից՝ ինչպես չէ, այդպիսի թռչնակ է որսացել: Հովմարի դեմքին խաղացող թեթև ժպիտից հասկացա, որ նրան էլ է զվարճացնում ոստիկանական տեսուչի պարծենկոտությունը:

— Շուտով կլինենք Վոքսհոլյան կամրջի մոտ, — ինձ դիմեց Ջոնսը: Գանձերի հետ միասին ձեզ այնտեղ կիջեցնենք: Հազիվ թե հարկ կա ասելու, որ մեծ պատասխանատվություն եմ վերցնում վրաս: Միանգամայն անթույլատրելի է դա: Բայց ինչպես ասում են, խոսքը փողից թանկ է: Սակայն ծառայողական պարտականությունից ելնելով, պետք է ձեզ հետ ոստիկան ուղարկեմ, քանի որ այդքան թանկարժեք բեռ եք տանում: Հուսով եմ, կառք կվարձեք:

— Այո:

— Ափսոս, որ բանալի չկա, թե չէ արդեն այստեղ կստուգեինք: Որտե՞ղ է բանալին, երիտասարդ:

— Հատակում, — կարճ պատասխանեց Սմոլը:

— Հըմ: Ինչ իմաստ ունի մեզ ավերորդ գլխացավանք պատճառել, երբ առանց այդ էլ դրանք քիչ չեն: Կարծում եմ, դոկտոր, հարկ չկա զգուշացնելու, որքան կարող եք զգույշ եղեք: Եվ անմիջապես արկղը բերեք Բեյքր-սթրիթ: Սկզբում կգնանաք այնտեղ, իսկ այնուհետև՝ ոստիկանատուն:

Պարզ և բարեսիրտ ոստիկաններից մեկի հետ ինձ իջեցրին Վոքսհոլյան կամրջի մոտ: Իսկ քառորդ ժամ անց արդեն միսիս Ֆորեսթերի տան մոտ էինք: Սպասուհին շատ էր զարմացած այդքան ուշ այցելության համար: Նա ասաց, որ միսիս Ֆորեսթերը հյուր է գնացել և ուշ կվերադառնա, իսկ միսս Մորսթենը հյուրասենյակում է: Ոստիկանը սիրալիք համաձայնեց ինձ սպասել կառքի մեջ, իսկ ես վերցրեցի արկղն ու գնացի հյուրասենյակ:

Միսս Մորսթենը նստել էր բաց պատուհանի մոտ՝ սպիտակ ու թեթև շրջագգեստով, պարանոցին ու մեջքին վարդագույն ժապավեն կապած: Լամպի մեղմ լույսը պարուրել էր հյուսկեն բազկաթոռի մեջ ընկղմված մարմինն ու նուրբ, լուրջ դեմքը և թեթևակի ոսկեգոծել շքեղ ծամերի խիտ խոպոպները: Ճերմակ ձեռքն անփութորեն հանգչում էր բազկաթոռի հենակին և նրա մտածկոտ կեցվածքից խաղաղ թախիժ էր ծորում: Քայլերիս ձայնը լսելով նա ցնցվեց և տեղից վեր կացավ, գունատ այտերն ուրախությունից շիկնեցին:

— Լսեցի, որ կառք մոտեցավ, բայց մտածեցի, որ միսիս Ֆորեսթերն է այսքան վաղ վերադարձել: Չէի էլ ենթադրում, որ դուք կլինեք: Ի՞նչ նորություն եք բերել:

— Բերել եմ ավելին, քան նորությունը, — արկղը դնելով սեղանին ասացի ես առույգ, ուրախ ձայնով, չնայած սիրտս մղկտում էր: — Բերել եմ այն, ինչ աշխարհում թանկ է ամեն մի նորությունից: Ձեզ հարստություն եմ բերել:

Միսս Մորսթենը նայեց արկղին:

— Գանձը հենց սա՞ է, — հարցրեց նա բավականին անտարբեր:

— Այո, սա Ագրայի գանձն է: Կեսը պատկանում է ձեզ, մյուս կեսը՝ միսոր Շոլտոյին: Ձեզնից յուրաքանչյուրին հասնում է մոտավորապես երկու հարյուր հազար: Տարեկան՝ հարյուր հազար ֆունտ եկամուտ: Անգլիայում այսպիսի օժիտով աղջիկ քիչ կգտնվի: Մի՞ թե դա հիանալի չէ:

Ըստ իս, մի փոքր խաղացի՝ աշխատելով զգացմունք արտահայտել: Շնորհավորելու շամանակ ձայնիս մեջ կեղծություն զգալով նա մի փոքր բարձրացրեց հոնքերը և զարմանքով նայեց ինձ:

— Եթե նույնիսկ ստացա էլ, — ասաց նա, — ապա միայն ձեր շնորհիվ:

— Ոչ, ոչ, — բացականչեցի ես, — ոչ թե իմ, այլ ընկերոջս՝ Շերլոկ Հոլմսի շնորհիվ: Կյանքումս երբեք չէի կարող լուծել այդ հանելուկը, ընկերոջս հզոր, անալիտիկ ուղեղն անգամ միանգամից չլուծեց այն: Չէ, որ քիչ մնաց ձեռքից բաց թողնեինք:

— Աստծու սիրուն, դոկտոր Ուոտսոն, նստեք և ամեն ինչ պատմեք հերթականությամբ:

Համառոտ պատմեցի այն ամենն, ինչ կատարվել էր մինչ մեր հանդիպումը. Հոլմսի զգեստափոխության, «Ավրորայի» որոնման, Էթելնի Ջոնսի Բեյքր-սթրիթում հայտնվելու, մեր երեկոյան արշավանքի և, վերջապես, Թեմզայով կատաղի հետապնդման մասին: Մեր արկածների պատմությունը նա լսեց փայլատակող աչքերով և կիսաբաց շրթունքներով: Երբ հասա մեզնից մեկ դյույմ հեռավորությամբ թռած թունավորված նետին, այնպես գունատվեց, որ թվաց, թե ուր որ է կկորցնի գիտակցությունը:

— Ոչինչ, — ասաց նա, երբ շտապեցի նրան մեկնել ջրով բաժակը: — Արդեն ամեն ինչ անցել է: Պարզապես սոսկացի՝ չէ որ ընկերներս հանուն ինձ իրենց մահվան վտանգի ենթարկեցին:

— Ողջ սարսափելին ետևում է, — ասացի ես: — Առանձնապես վտանգ էլ չկար: Այլևս չեմ ցանկանում սարսափների մասին պատմել: Ավելի լավ է խոսենք հաճելի բաներից: Տեսնում եք, այս արկղում գանձեր են: Ինչ հիանալի է: Հոլմսն ինձ մտածված թողեց, որ արկղը բերեմ և առաջինը դուք բացեք:

— Այո, իհարկե, շատ հետաքրքիր կլինի նայելը, — ասաց միսս Մորսթենը առանց խանդավառության: Անկասկած, նա մտածում էր, որ անտակտություն է անտարբեր մնալ այնքան որոնումների ու վտանգների ենթարկված առարկայի նկատմամբ:

— Ինչ գեղեցիկ արկղ է, — ավելացրեց նա, խոնարհվելով արկղի վրա: — Կարծեմ, իսկական հնդկական աշխատանք է:

— Այո, բենարեսյան ձուլող տնայնագործների արտադրանքն է:

— Ինչ ծանր է, — փորձեց բարձրացնել: — Հավանաբար, միայն արկղն արդեն քիչ չարժե: Իսկ որտե՞ղ է բանալին:

— Սմոլը նետել է Թեմզան, — պատասխանեցի ես: — Հարկ կլինի փորձել միսիս Ֆորեսթերի կրակխառնիչը:

Արկղն ուներ ձուլածո, նստած Բուդդայի տեսքով ծանր փականք: Կրակխառնիչի պոչը մտցրի փականքի մեջ և սեղմեցի ինչպես լծակ: Փականքն ուժեղ շրխկաց և բացվեց: Դողացող ձեռքերով բարձրաձրեցի կափարիչն ու շրջեցի: Այ թե գարմանք հայտնվեց մեր դեմքերին: Արկղը դատարկ էր:

Դժվար չէր հասկանալ ծանրության պատճառը: Հատակը, պատերն ու կափարիչը երեք քառորդով երկաթից էին: Արկղը գեղեցիկ էր, հուսալի և ամուր, հավանաբար պատրաստված էր թանկարժեք իրեր պահելու համար: Բայց թանկարժեք իրերը չկային: Գոնե մարգարիտի մի շարան, ոսկու հատիկ, կամ ադամանդ: Ոչինչ չկար: Արկղը ողբալիորեն դատարկ էր:

— Գանձն անհետացել է, — հանգիստ նկատեց միսս Մորսթենը:

Երբ լսեցի նրա խոսքերը, երբ ինձ հասավ դրանց նշանակությունը, այդ ամբողջ ընթացքում հոգիս մթնեցնող ստվերը հալվեց: Ազատ շնչելով միայն հասկացա, թե ինչ ծանրությամբ էր սրտիս նստել այդ գանձը: Դա ստորություն էր, եսասիրություն, բայց գիտեի, տեսել էի, զգում էի միայն մի բան՝ մեր միջև կանգնած ոսկյա արգելապատնեշն այժմ գոյություն չուներ:

— Փառք աստծո, — սրտանց բացականչեցի ես:

Միսս Մորսթենը զարմացած նայեց ինձ ու ժպտաց:

— Ինչու՞ եք այդպես ասում, — հարցրեց նա:

— Որովհետև հիմա դարձյալ ինձ հասանելի դարձաք, — պատասխանեցի ես, բռնելով նրա ձեռքը: Նա ձեռքը չփախցրեց: — Որովհետև սիրում եմ ձեզ, Մերի, սիրում եմ այնպես, ինչպես աշխարհում ոչ ոք չի սիրել: Որովհետև այդ գանձը, այդ հսկայական հարստությունը փականք էր դրել իմ շուրթերին: Բայց այժմ դրանք չկան և կարող եմ ձեզ համարձակ ասել, որ սիրում եմ ձեզ: Եվ մեկ անգամ էլ կրկնում եմ՝ «Փառք աստծո» :

— Այդ ժամանակ ես էլ կասեմ «Փառք աստծո», — շնջաց նա, և ես կրծքիս սեղմեցի նրան: Հնարավոր է, ինչ-որ մեկն ինչ-որ տեղ գանձ է կորցրել, բայց այդ երեկո ես դարձա աշխարհի ամենահարուստ մարդը:

Գլուխ 12 — Ջոնաթան Սմոլի պատմությունը

Պարզվեց, որ կառքում նստած ոստիկանը շատ համբերատար մարդ էր, որովհետև, ինչպես կարելի է գուշակել, շուտ չլքեցի միսիս Ֆորեսթերի տունը: Բայց երբ ցույց տվեցի դատարկ արկղը, նա նկատելիորեն տխրեց:

— Պարզևը կորավ, — հառաչեց նա: — Գանձ չկա, չի լինի նաև պարզև: Եթե դրանք գտնվեին, Սեմ Բրաունն ու ես գիշերային աշխատանքի համար տասական ֆունտ կստանայինք:

— Միստր Թադեուշ Շոլտոն հարուստ մարդ է, — ասացի ես, — նա ձեզ կպարզևատրի:

Սակայն նա թափահարեց գլուխը:

— Վատ են գործերը, — վիատ ասաց նա: — Միստր Էթելնի Ջոնսն էլ նույնը կասի:

Ոստիկանի կանխագագուստը կատարվեց, քանի որ Ջոնսի դեմքը ձգվեց, երբ վերադառնալով Բեյքր-սթրիթ նրան ցույց տվի դատարկ արկղը: Նրանք էլ հենց

նոր էին եկել, քանի որ ճանապարհին փոխել էին ծրագիրը և փոխանակ ուղիղ տուն գնալու, մտել էին Սկոտլանդ-Յարդ, և Ջոնսը զեկուցել էր արդյունքների մասին: Ընկերս նստել էր բազկաթոռին, ինչպես միշտ՝ անթափանց դեմքով: Մնուր՝ դիմացը, բազկաթոռին, փայտյա ոտքը դրած առողջ ոտքի վրա: Երբ սկսեցի ցուցադրել դատարկ արկղը, հանկարծ նա ուժեղ քրքջաց:

— Սա քո ձեռքի գործն է, Մնուր, — զայրացած ասաց էթելնի Ջոնսը:

— Այո, իմ: Գանձերն այնպիսի տեղում են թաքնված, որ երբեք չեք գտնի, — հրճվանքով ասաց նա: — Դրանք իմ գանձերն են և եթե ինձ վիճակված չե տիրել, թող ոչ ոքինն էլ չլինեն: Ես հոգացել եմ այդ մասին: Ողջ աշխարհում ոչ մեկն իրավունք չունի դրանց վրա, բացի անդամանյան բանտի երեք տաժանակիրներից և ինձնից: Գիտեմ, եթե հիմա ես չկարողացա տիրել, նրանք էլ չեն կարող: Այն ամենն, ինչ արել եմ, արել եմ նաև նրանց անունից: Մեր չորսի միությունը մինչև կյանքի վերջն է: Ահա թե ինչ, ես գիտեմ, նրանք ինձ կարդարացնեն: Ավելի լավ է գանձն ընկած մնա Թեմզայի հատակին, քան հասնի Շոլտոյի կամ Մորսթենի գավակներին: Հանուն նրանց չէ, որ սպանեցինք Ահմեդին: Գանձն այնտեղ է, որտեղ բանալին է: Այնտեղ՝ որտեղ Տոնգան է: Երբ տեսա, որ մեզ եք հասնում, ավարը պահեցի հուսալի տեղում: Այս անգամ հաղթանակը ձեզ ոչ մի ռուպի չբերեց:

— Խաբում ես մեզ, Մնուր, — խոժոռովեց Ջոնսը: — Եթե որոշել էիր գանձը Թեմզան նետել, սնդուկի հետ կնետեիր: Ալդպես հարմար է:

— Հարմար է նետելը, հարմար է գտնելը, — ծաղրանքով մեզ նայելով պատասխանեց Մնուրը: — Մարդը, որի ուղեղը հերիքեց հետքս գտնել, գանձը կհանի նաև գետի հատակից: Հիմա, իհարկե, դժվար կլինի, դրանք նետված են հինգ մղոն շառավիղով: Սիրտս համարյա պայթեց դրանցից բաժանվելու ժամանակ: Ջգում էի, որ խելագարվում եմ, տեսնելով, որ դուք բոլորովին մոտ եք: Բայց հիմա գանձերի մասին խոսելուց օգուտ չկա: Ես կյանքում այնքան բան եմ տեսել, որ սովոր եմ կորցրածի վրա արցունք չթափել:

— Դա շատ վատ է, Մնուր, — ասաց Ջոնսը: Մեզ վրա այդպես ծիծաղելու փոխարեն եթե օգնեք արադարադատությանը, ներողամիտ վերաբերմունքի ավելի մեծ հավակնություն կունենայիք:

— Արդարադատություն՝ն, — բացականչեց նախկին տաժանակիրը: — Լավ արդարադատությունն է: Դրանք իմ գանձերն են: Իսկ արդարադատությունը պահանջում է գանձերը տալ դրանց հետ ոչ մի կապ չունեցող մարդկանց: Ցանկանում եմ իմանալ, թե ինչպես դրանք իմը դարձան: Քսան տարի՝ տենդ սփռող ճահիճում: Ցերեկը ձեռքից բաց չթողնելով բահը, գիշերը զնգզնգացնում ես ձեռնաշխթաներով բանտի հոտած բարաքում: Մժեղները, տենդը, սև վերակացունների վիրավորանքը, որոնք սիրում են ծանակել սպիտակներին: Այդպես դարձա Ագրայի գանձերի տերը: Դուք խոսում եք արդարադատության մասին, իսկ ես չեմ ցանկանում, որ ուրիշներն օգտվեն գանձերից, որոնց համար վճարել եմ կյանքովս: Թող ինձ կախաղան հանեն, թող ինձ խոցեն Տոնգայի նետերը, բայց ես չեմ ցանկանում փտել բանտախցում, իմանալով, որ ինչ-որ մի ուրիշը լողում է ոսկու մեջ, որն իրավացիորեն ինձ է պատկանում:

Անտարբերության դիմակն ընկավ Մնուրի դեմքից: Խոսում էր գրգռված, աչքերը վառվում էին, ձեռնաշղթաները զրնգում էին, երբ կատաղությունից սեղմում էր բռունցքները: Տեսնելով, թե ինչպիսի անսանձ աստելություն է կրծում

այդ մարդուն, ես հասկացա, որ նրա հայտնվելու ժամանակ Շուտոյին համակած սարսափը լիովին հիմնավորված էր:

— Դուք մոռանում եք, որ այդ մասին մենք ոչինչ չգիտեինք, — մեղմ ասաց Հովմար: — Հիմա էլ դեռ չգիտենք, արդյո՞ք օրինական ճանապարհով են ձեզ մոտ հայտնվել այդ գանձերը:

— Դուք ինձ հետ խոսում եք ինչպես հավասարի, սրբ: Չնայած հիանալի հասկանում եմ, որ հատկապես ձեզ եմ պարտական այս զարդարանքի համար, — Սմոլը ցույց տվեց ձեռնաշղթաները, — զայրացած չեմ ձեզ վրա: Խաղն ազնիվ էր: Եթե ցանկանում եք լսել, ձեզ կպատմեմ իմ ամբողջ պատմությունը սկզբից մինչև վերջ: Աստված տեսնում է, այդ պատմության ամեն մի խոսքը զուտ ճշմարտություն է: Շնորհակալ եմ ձեզնից, սրբ, և բավականությամբ մի կույմ էլ կանեմ, եթե շրթունքներս չորանան:

— Ծնունդով Վուսթերշիրից եմ, ծնվել եմ Պերշորի մոտակայքում: Եթե այցելեք մեր կողմերը, կգտնեք բազմաթիվ Սմոլների ընտանիքներ: Հաճաղ եմ մտածել այնտեղ գնալ, բայց երբեք ընտանիքիս հպարտությունը չեմ եղել և կասկածում եմ, թե ինձնով շատ կուրախանան: Նրանք բոլորն էլ հարգված մարդիկ են, եկեղեցի են հաճախում, հարգանք են վայելում շրջանում: Նրանք ֆերմերներ են, իսկ ես միշտ էլ ունեցել եմ հիմար հակումներ: Երբ դարձա տասնութ տարեկան, մի աղջնակի համար պատմության մեջ ընկա: Ինձ փրկեց միայն այն, որ ես հավաքագրվեցի և թագուհու զինվոր դարձա Երրորդ գծային հետիոտն գնդում, որը հենց այդ օրերին մեկնում էր Հնդկաստան:

Բայց ծառայությունս շուտ ավարտվեց, սովորեցի միայն կրակել զենքից և «սագային» քայլքով քայլել: Մի անգամ սատանան տարավ ինձ Գանգեսում լողանալու, լավ էր, որ կողքիս էր մեր սերժանտ Ջոն Հոլդերը: Իսկ նա մեր գնդում լավագույն լողորդն էր: Գետի կեսն էի լողացել, մեկ էլ տեսա՝ կոկորդիլոսը: Ծնկիցս վերև տարավ ոտքս, կարծես դանակով կտրեց: Կիսեղդվեի ցնցակաթվածից և արյան մեծ կորստից, բայց կողքիս հայտնվեց Հոլդերը, ճանկեց ինձ և ափ հանեց: Հինգ ամիս պառկեցի հոսպիտալում: Դուրս գրվեցի փայտե որքով, լիովին հաշմանդամ, անընդունակ զինվորական ծառայության և ընհանրապես ուրիշ բանի:

Այն ժամանակ շատ դժվար կացության մեջ ընկա, կարող էք պատկերացնել՝ անօգնական հաշմանդամ և ընդամենը քսան տարեկան: Բայց ինչպես ասում են՝ չկա չարիք առանց բարիքի: Ինդիգոյի պլանտացիաների տեր Էյբլուայթ անունով մի մարդու վերահսկիչ էր հարկավոր: Պարզվեց, որ նա մեր գնդապետի հին ընկերն էր, որը համակրում էր ինձ: Ջերմորեն ինձ երաշխավորեց Էյբլուայթին: Վերահսկիչը ժամանակի մեծ մասն անցկացնում էր ձիու թամբին և քանի որ ոտքս վերևից էր անդամահատված, ապա կարող էի թամբին մնալ, փայտե ոտքս չէր խանգարում: Ձիով պետք է շրջել պլանտացիաները, հետևեի, թե ինչպես են աշխատում կուլիները և զեկուցեի ծույլերի մասին: Վճարը լավ էր, բնակարանը նույնպես, և արդեն մտածում էի, որ մինչև կյանքիս վերջը կմնամ ինդիգոյի պլանտացիաներում: Տերը բարի մարդ էր, հաճախ էր գալիս ինձ մոտ ծխախառտ ծխելու, որովհետև այնտեղ ապրող սպիտակ մարդիկ ձգտում են մեկը մյուսին: Ամենևին այնպես չէ, ինչպես այստեղ:

Բայց երջանկությունն ինձ երբեք երկար չի ուղեկցել: Երկրում հանկարծ խռովություն ծագեց: Դեռ նախօրեին ապրում էինք խաղաղ ու անվրդով,

այնպես, ինչպես Քենթում կամ Սուրբեյում, իսկ այդ օրն արդեն ամեն ինչ տակնուվրա եղավ: Դուք, իհարկե, այդ պատմությունն ինձնից ավելի լավ գիտեք: Դրա մասին շատ է գրված, իսկ ես կարդալու հետ գլուխ չունեմ: Միայն գիտեմ այն, ինչ աչքովս տեսա: Մեր պլանտացիաները գտնվում էին հյուսիս-արևմտյան արվարձաններին սահմանակից Մուտրի քաղաքի մոտերքում: Ամեն գիշեր ամբողջ երկինքը լուսավորվում էր այրվող ջահերով: Ամեն օր, մեր կալվածքի միջով, իրենց կանանց և երեխաների հետ գնում էին եվրոպացիները, շտապելով Ագրայում անգլիական զինվորների պաշտպանության տակ: Միստր Էյբլուայթը համառ մարդ էր: Գլուխն էր մտցրել, որ այդ ամբողջ գործը մի հոտած ձու էլ չարժե և այսօր-վաղը կվերջանա: Իր պատշգամբում նստած վիսկի էր կոնծում և սիգար ծխում: Իսկ ամբողջ Հնդկաստանը կրակի մեջ էր: Մենք, իհարկե, մնացինք նրա հետ: Մենքը ես ու Դոուսոնն ենք, որն իր կնոջ հետ վարում էր հաշիվներն ու տնտեսությունը: Բայց աղետն, այնուամենայնիվ, պայթեց: Ամբողջ օրը գտնվում էի պլանտացիայում և երեկոյան ձիով վերադարձա: Ոչ խորը խանդակում մթին էր տալիս ինչ-որ անձն մի կույտ: Մոտեցա և սիրտս սարսափից կծկվեց՝ կտոր-կտոր այրված և չախկալներին նետված Դոուսոնի կինն էր: Մի փոքր հեռու, բերանքսիվայր ընկած էր ինքը՝ Դոուսոնը, նրա արդեն փայտացած ձեռքը սեղմել էր ատրճանակը, իսկ մոտը՝ կողք-կողքի ընկած էին չորս սիփայիներ: Ձգեցի սանձափոկն ու կանգնեցրի ձիուն, չիմանալով, որ կողմը գնալ: Այդ պահին Էյբլուայթի տան կտուրից թանձր ծուխ ժայթքեց, ու բոցը դուրս եկավ: Հասկացա, որ ոչ մի բանով չեմ կարող տիրոջս օգնել և միայն ինքս կգոհվեմ, եթե առանց մտածելու նետվեմ փրկելու: Տեղիցս լավ տեսանելի էին կարմիր համազգեստներով խռովարարները: Մի քանի հարյուրից պակաս չէին, բարձր բղավում էին և պարում բոցավառվող տան շուրջը: Ինձ նկատեցին, գլխիս մոտով մի քանի գնդակներ սուլեցին: Այդ ժամանակ շրջեցի ձիս և սլացա բրնձի դաշտերի միջով: Գիշերն Ագրայում էի:

Պարզվեց, որ այնտեղ էլ անվտանգ չէ: Ողջ երկիրը բզզում էր անհանգստացած մեղվանոցի պես: Անգլիացիները հավաքվում էին փոքր ջոկատներով: Տիրում էին միայն այն հողերին, որոնք պահում էին զենքի ուժով: Մնացած բոլոր հողերում անգլիացիները գտնվում էին ապստամբների իշխանության ներքո: Դա միլիոնների կռիվն էր մի քանի հարյուրների դեմ: Եվ ամենաաղբերգականն այն էր, որ մեր հակառակորդը հենց մեր ընտրովի բանակն էր՝ հետևակը, հրետանին, հեծելազորը . . . Նրանց դաստիրակել և վարժեցրել էինք, և այժմ նրանք մեր դեմ մարտնչում էին մեր զենքով, և փողհարները շեփոքում էին մեր ազդանշանները: Ագրայում գտնվում էին Երրորդ Բենգալյան հրաձգային գունդը, սիկհերի մի քանի ջոկատներ, երկու հեծելազորային էսկադրոն և մի մարտկոց: Երբ ապստամբությունն սկսվեց, քաղաքացիական չինովնիկներից և առևտրականներից կամավորական ջոկատ կազմավորվեց: Հուլիսի սկզբին մեկնեցինք Ագրայից թշնամուն դիմավորելու: Շահզանջայի մոտ և մի որոշ ժամանակ հաջողությամբ կանգնեցրինք նրանց, բայց շուտով վերջացավ մեր վառողը, և վերադարձանք Ագրա: Բոլոր կողմերից գալիս էին տագնապալի լուրեր, որը զարմանալի չէր, չէ որ Ագրան գտնվում էր հենց խռովության կենտրոնում: Լակհնաուն ավելի քան հարյուր մղոն արևելք էր, Քանպուրը՝ համարյա նույնքան հարավ: Որ ուղղությունն էլ ընտրեիր, ամեն տեղ կոտորած էր, կործանում և սնանկացում:

Ագրան հինավուրց քաղաք է: Միշտ լի է հնդիկ-ֆանատիկներով և կատաղի, վայրենի կռապաշտներով: Անգլիայի քաջերը կկորչեին նեղ ուղրապտույտ փոքրիկ փողոցներում, դրա համար էլ մեր հրամանատարը հրամայեց անցնել գետը և պատսպարվել Ագրայի հին ամրոցում: Չգիտեմ, ջենտլմեններ, ձեզնից որևէ մեկը լսե՞լ է այդ ամրոցի մասին: Շատ տարօրինակ կառույց է: Հավատացե՞ք շատ արտասովոր բաներ եմ տեսել կյանքում, բայց այդպիսին երբեք չեմ տեսել: Ամրոցը շատ մեծ էր և բաղկացած էր հին ու նոր բերդամասերից: Մեր կայազորը, կանայք, երեխաները, ռազմաթերթն ու մնացած ամեն ինչ տեղավորվել էր նոր բերդամասում: Բայց դա իր չափերով փոքր էր հնից: Հին բերդը ոչ ոք չէր գնում, այնտող բնակվում էին միայն կարիճներն ու քառասնոտնուկները: Այնտեղ շատ կային հսկայական դատարկ դահլիճներ, սրահներ, երկար միջանցքներ՝ անվերջանալի անցումներով և շրջադարձերով, այնպես որ հեշտ էր մոլորվել: Այդ պատճառով, այնտեղ հազվադեպ էր լինում, որ որևէ մեկը համարձակվեր ներս մտնել, չնայած, ժամանակ առ ժամանակ հավաքվում էր հետաքրքրասերների խումբ և ջահերով այնտեղ էր ուղեվորվում:

Ագրայի ամրոցի ճակատային մասի պաշտպանությունն ապահովում էր այդ տեղով հոսող գետը, սակայն կողքային և ետևի պատերն ունեին բազմաթիվ մուտքեր, որոնք հարկավոր էր պաշտպանել: Մարդիք քիչ էին, հազիվ բավարարում էին թնդանոթների և հրակնատների մոտ կանգնեցնելու համար: Ամրացրինք միջնամասը, իսկ դարպասների մոտ կանգնեցրինք փոքր պահակախմբեր՝ մեկական անգլիացի և մի քանի սիկհեր: Ինձ բաժին ընկավ գիշերը պահպանել հարավ-արևմտյան պատի հեռավոր դուռը: Սկզբի համար ինձ տվեցին երկու սիկհ և ասացին, որ վտանգի դեպքում կրակեմ, որպեսզի օգնական ուժ ուղարկեն կենտրոնական պահակախմբից: Բայց քանի որ մեր պահակախումբը գտնվում էր կենտրոնական ուժերից երկու հարյուր մետր հեռավորության վրա և մեզ հասնել կարելի էր միայն հաղթահարելով անվերջանալի միջանցքներն ու սրահները, շատ էի կասկածում, թե հարձակման դեպքում օգնությունը ճիշտ ժամանակին կհասնի:

Շատ էի հպարտանում ունեցածս փոքրիկ ջոկատով, չէ որ որպես զինվոր մեկ ամսից պակաս էի ծառայել, դեռ այս ոտքն էլ գումարած: Երկու գիշեր անցավ առանց պատահարի: Փենջաբցիներս բարձրահասակ էին, կատաղի սիկհեր: Մեկի անունը Մոհամեդ Սինգ էր, մյուսինը՝ Աբդուլա Խան, երկուսն էլ Չիլիանվալայի մոտ կռվել էին մեր դեմ: Անգլերեն բավական լավ էին խոսում, բայց ես քիչ էի շփվում նրանց հետ: Գերադասում էին երկուսով մնալ և ամբողջ ժամանակ իրենց սիկհերենով ինչ-որ բան էին բլբլացնում: Դե, ես սովորաբար կանգնում էի դրսի դռան մոտ և նայում ներքև՝ լայն գալարվող գետի ժայռավենին ու հին քաղաքի փայլատակող կրակներին: Թմրուկների ու տամտամների հարվածները, ավիոնով ու հաշիշով հարբած ապստամբների աղաղակներն ու երգերը մեզ ամեն գիշեր հիշեցնում էին գետի այն կողմից սպառնացող վտանգի մասին: Յուրաքնչյուր երկու ժամը մեկ կենտրոնական պահակատան պարեկը շրջում էր պահակակետերը, ստուգելով, ամեն ինչ բարեհաջող է, թե ոչ:

Հերթապահությանս երրորդ գիշերն արտակարգ մութ էր ու մռայլ, և մի գլուխ անձրև էր տեղում: Այդպիսի գիշերը ժամերով հերթապահելուց ավելի վատ բան չկա: Մի քանի անգամ փորձեցի խոսել ինքնամփոփ ընկերներիս

հետ, բայց ապարդյուն: Ժամը երկուսին եկավ գիշերային պարեկը և մի փոքր աշխուժացրեց տաղտուկ հսկողությունս: Տեսնելով, որ չի հաջողվում սիկհերին խոսակցության մեջ ներգրավել, հանեցի ծխամորձս, մի կողմ դրեցի գենքերս և չրխկացրի լուցքին: Եվ հենց այդ ակնթարթին էլ երկու սիկհերը նետվեցին վրաս: Մեկը հափշտակելով հրացանս թափահարեց գլխավերևումս, երկրորդը կոկորդիս դեմ տվեց երկար դանակը և ատամների արանքից երդվեց, որ դանակը կոկորդս կխրի, եթե շարժվեմ:

Առաջին միտքն այն էր, թե սրիկաները միացել են խռովարարների հետ և սա գրոհի սկիզբն է: Եթե ապստամբները գրավեին մեր մուտքը, բերդը կնկներ, և բոլոր կանայք ու երեխաները կհայտնվեին նրանց ձեռքերում: Հավանաբար, ջենտլմեններ, հիմա մտածում եք, որ ցանկանում եմ ձեզ տրամադրել իմ օգտին, բայց ազնիվ խոսք, հենց մտածեցի այդ մասին, մոռացա դանակը և արդեն ուզում էի բացել բերանս, որ բղավեի՝ թեկուզ դա լիներ իմ վերջին ճիչը:

Ինձ բռնող սիկհը ճիշտ կարդաց մտքերս, քանի որ տեսնելով վճռականությունս, ականջիս շնչաց. «Աղմուկ մի բարձրացրու: Ամբոցն անվտանգության մեջ է: Մեր ափում սրիկա-ապստամբներ չկան» Ձայնն անկեղծ հնչեց, բացի այդ գիտեի՝ բավական է ձայն հանեի, երգս երգված էր: Դա կարդացի շնչացողի աչքերում: Այդ պատճառով որոշեցի սպասել և տեսնել, թե նրանք ինչ են ուզում ինձնից:

«Լսիր, սահիբ, — ասաց նրանցից մեկը, որն ուներ ավելի կատաղի տեսք և որին կոչում էին Աբդուլա Խան: — Կամ կմիանաս մեզ, կամ հավիտյան կլռես: Չենք կարող սպասել . գործը բավականին կարևոր է: Կամ հոգով ու մարմնով մերը կլինես և կերդվես քրիստոնեական խաչի վրա, կամ մարմինդ այս գիշեր կնետվի ջրանցքը, իսկ մենք կգնանք այն փըր՝ ապստամբների մոտ: Ընտրություն չունես: Դե, ինչ, կյա՞նք, թե մահ: Որոշելու համար երեք րոպե ենք տալիս: Ժամանակն անցնում է, հարկավոր է ամեն ինչ վերջացնել մինչև պարեկի վերադարձը:

— Ի՞նչ կարող եմ որոշել, — ասացի ես: — Չէ որ ինձ ասացիք, թե ինչ պետք է անեմ: Բայց իմացեք, եթե խաղաքարտի վրա է դրված ամբողջ ճակատագիրը, սպանեք ինձ, և թող ձեր ձեռքը չդողա:

— Ամբոցին ոչինչ չի սպառնում, — դարձյալ շնչաց սիկհը: — Ցանկանում ենք անել այն, հանուն ինչի ձեր հայրենակիցները գալիս են այս երկիրը . ուզում ենք, որ դու հարստանաս: Եթե այս գիշեր մեզ հետ լինես, ապա երդվում ենք մերկացրած դաշույններով և սիկհի եռակի երդումով, այս երդումը դեռ ոչ մի սիկհ չի խախտել, ձեզ հետ ազնվաբար կիսենք հափշտակված որսը: Կստանաս ամբողջ գանձի մեկ քառորդը: Ի՞նչը էլ ավելի արդարացի կլինի:

— Ի՞նչ գանձ, — հարցրեցի ես: — Ես էլ ձեզ նման հարստանալուն դեմ չեմ: Բայց ասացեք, ի՞նչ պետք է անեմ:

— Նախ երդվիր, — պատասխանեցին նրանք, — հորդ գերեզմանով, մորդ պատվով, քո հավատի սուրբ խաչով, որ ոչ հիմա, ոչ էլ հետագայում մեր վրա ձեռք չես բարձրացնի և պետք է անխախտ պահես գաղտնիքը:

— Երդվում եմ, — պատասխանեցի ես, — եթե միայն ամբոցին վտանգ չի սպառնա:

— Այդ դեպքում մենք էլ ենք երդվում, որ ազնվաբար մեր մեջ կկիսենք գանձերը, և դու կստանաս քո քառորդ մասը:

— Բայց չէ որ մենք երեք հոգի ենք, — ասացի ես:

— Ոչ, չորս ենք: Դոստ Աքբարը ևս պետք է իրենն ստանա: Քանի որ պետք է նրանց սպասենք, քեզ ամեն ինչ կպատմեմ: Մոհամեդ Մինգիը կկանգնի դրսում և նրանց գալուն պես մեզ իմաց կտա: Ահա թե ինչ, սահիբ, քեզ ամեն ինչ կպատմեմ, որովհետև դու ֆերենգի ես, իսկ նրանք երդումը չեն խախտում: Եթե դու ստախոս շուն հնդիկ լինեիր, ապա որքան էլ երդվեիր քո անթիվ տաճարների բոլոր սրբերով, արյունդ կհոսեր, իսկ մարմինդ կնետվեր ջրանցքը: Բայց սիկիերը հավատում են անգլիացիներին, նրանք էլ սիկիերին: Այնպես որ, լսիր, սահիբ, թե քեզ ինչ կպատմեմ:

Հյուսիսային արվարձաններից մեկում ապրում է մի ոռոգ: Չնայած քիչ հող ունի, բայց շատ հարուստ է: Մեծ հարստություն է ժառանգել հորից և ավելի շատ կուտակել է ինքը, որովհետև ավելի շատ սիրում է հավաքել, քան ծախսել: Երբ այս շիլան եփվեծ, նա առյուծի և վագրի՝ սիփայիների և անգլիացիների ընկերն էր: Բայց ահա նրան լուրեր հասան, որ սպիտակ մարդկանց ամեն տեղից քշում են, սպանում, և նա որոշեց, որ սպիտակների վերջն եկել է: Չգույշ մարդ լինելով, իրեն այնպես պահեց, որ ցանկացած իրավիճակում իր հարստության գոնե կեսը պահի: Ոսկին և արծաթը պահեց իր պալատի ներքնահարկում, իսկ ամենաթանկ քարերն ու մարգարիտները լցրեց սնդուկում և հանձնարարեց իր հավատարիմ ծառային առևտրականի տեսքով անցկացնել Ագրայի ամրոցը, որպեսզի մինչև խաղաղվելը այնտեղ մնան: Եթե հաղթեն խոռվորարները, արծաթ ու ոսկի կունենա, իսկ եթե հաղթեն անգլիացիները՝ կփրկվեն թանկարժեք իրերը: Այդ ձևով բաժանելով հարստությունը, նա միացավ սիփայիներին, որովհետև նրանց հաղթանակն այն ժամանակ ակնառու էր: Ուրեմն, սահիբ, ուշադրություն դարձրու, այդ թանկարժեք իրերը պիտի հասնեին նրան, ով մինչև վերջ հավատարիմ պիտի մնար իր պարտքին:

Ահմեդի անվան տակ ճանապարհորդող այդ կեղծ վաճառականը հիմա Ագրայում է: Փափագում է թափանցել ամրոցը: Նրա հետ է կաթնեղբայրս՝ Դոստ Աքբարը, որը գիտե գաղտնիքը: Դոստ Աքբարը խոստացել է այս գիշեր նրան բերել ամրոցի արևմտյան մուտքի մոտ: Եվ հենց մեր մուտքն է ընտրել: Ուր որ է նրանք կգան, և մենք Մոհամեդ Մինգիի հետ կդիմավորենք: Այստեղ ամայի է, Ահմեդի մասին ոչ ոք ոչինչ չգիտե: Եվ կջանանք, որ ոչ ոք երբեք չիմանա: Իսկ հետո կկիսենք գանձերը: Ի՞նչ կասես, սահիբ:

Վուսթերշիրում մարդու կյանքը սուրբ է և անձեռնմխելի, բայց բոլորովին այլ է, երբ շուրջդ ամեն քայլափոխի կրակ է, արյուն ու մահ: Ինձ համար միևնույն էր, կապրի մի ինչ-որ վաճառական Ահմեդ, թե ոչ: Փոխարենը, գանձերի պատմությունը սիրտս մտավ: Սկսեցի մտածել, թե ինչ լավ կլինի Անգլիա վերադառնալ այդպիսի հարստությամբ, այ թե հարազատներիս աչքերը կչոլեն, տեսնելով ոսկով լի գրպաններով դատարկապորտ Ջոնաթանին: Սրանից կարող եք դատել, ինչ ընտրություն կատարեցի: Մակայն Արդուլա Խանը կարծեց, թե դեռ տատանվում եմ:

— Լսիր, սահիբ, — շարունակեց ինձ համոզել նա, — եթե այդ մարդը ընկնի կայազորի պետի ձեռքը, միևնույն է կգնդակահարեն կամ կկախեն, իսկ ոռոգայի հարստությունը կգնա պետական գանձարան և ոչ մեկին ոչ մի ուրախություն չի պատճառի: Քանի որ նրա համար դարան ենք պատրաստել, գործը պետք է ավարտել: Իսկ գանձերը մեզ մոտ իրենց ավելի վատ չեն զգա, քան պետական գանձարանում: Անմիջապես կհարստանանք և կդառնանք կարևոր

պարոններ: Այստեղ բոլորովին մենակ ենք և ոչ ոք երբեք չի իմանա այս մասին: Մեզ համար ամեն ինչ նպաստավոր է: Մեկ անգամ էլ կրկնիր, սահիբ, մեզ հե՞տ ես, թե մեր դեմ:

— Ձեզ հետ եմ ամբողջ սրտով ու հոգով, — պատասխանեցի ես:

— Լավ, — պատասխանեց նա զենքս վերադարձնելով: — Տեսնում ես, քեզ վստահում ենք, որովհետև դու էլ մեզ նման չես կարող խոսքդ դրժել: Իսկ այժմ պետք է սպասենք:

— Եղբայրդ գիտե՞, ինչ էք ձեռնարկել:

— Նրա ծրագիրն է: Ամեն ինչ ինքն է մտածել: Իսկ այժմ գնանք Մոհամեդ Մինգիի մոտ, կսպասենք այնտեղ:

Անձրևը դեռ շարունակվում էր, որովհետև սկսվել էր անձրևային եղանակը: Ծանր սև ամպերը ծածկել էին երկինքը և երկու քայլի վրա ոչինչ չէր երևում:

Ուղիղ մեր արջն ընկած էր ծանծաղ մի խանդակ, որը համարյա չոր էր և նրա միջով հեշտությամբ կարելի էր անցնել: Ինձ պատել էր շատ տարօրինակ զգացողություն, որ ահա երկու վայրենի փենջաբցիների հետ կանգնած այստեղ սպասում եմ իր մահվանն ընդառաջ գնացող մարդու:

Հանկարծ աչքերս մթության մեջ խանդակի մյուս կողմում լապտերի քողարկված աղոտ լույս նշմարեցին: Լույսը կորավ հողակույտի ետևում, հետո դարձյալ հայտնվեց և սկսեց դանդաղ մոտենալ մեզ:

— Գալիս ես, — ասացի ես:

— Ձայն տվեք, սահիբ, ինչպես ընդունված է այդպիսի դեպքերում, — շնչաց Աբդուլան: — Թող ոչինչ չկասկածի: Մեզ նրան հանձնեք, որպես ուղեկցորդներ, իսկ ինքներդ մնացեք մուտքի մոտ: Չշփոթելու համար պատրաստեք լապտերը:

Լապտերի լույսը մեկ կանգ էր առնում, մեկ դարձյալ շարժվում մեր կողմը: Շուտով մյուս կողմում նկատեցի երկու մթին կերպարանք: Մոտեցան խանդակին և համարյա չորեքթաթ սկսեցին իջնել խանդակի թեք պատով, հետո շրմփացին կպչուն հատակին և սկսեցին մագլցել մեր կողմը: Այստեղ էլ հենց ձայն տվեցի:

— Ո՞վ կա այդտեղ, հարցրի ցածրաձայն:

— Բարեկամներ, — հետևեց պատասխանը:

— Լապտերով լուսավորեցի նրանց: Առջևից գալիս էր մի հսկա սիկհ՝ համարյա մինչև գոտին հասնող սև մորուքով: Միայն կրկեսում եմ տեսել նման բարձրահասակ մարդ: Մյուսը փոքր, կլոր մի հաստիկ էր՝ դեղին չալմայով, ձեռքին մի կապոց՝ շալով փաթաթված ինչ-որ բան: Ամբողջովին դողում էր սարսափից, ձեռքերն այնպես էին ցնցվում, ասես տենդի մեջ լինեք: Ծակից նայող երկչոտ մկան պես անընդհատ շուրջն էր նայում իր մանր, շագանակագույն փայլող աչքերով: Ինձ էլ սարսուռ պատեց, երբ մտածեցի, որ այդ մարդը հիմա կմեռնի, բայց հիշեցի գանձերը, և սիրտս քարացավ: Տեսնելով լուսավորված դեմքս, հաստիկը ուրախությամբ նետվեց դեպի ինձ:

— Փնտրում եմ ձեր պաշտպանությունը, սահիբ, — հեվասպատ էր լինում նա: — Ես դժբախտ վաճառական Ահմեդն եմ: Որպեսզի հասնեմ Ագրայի ամրոցի հուսալի պատերին, անցել եմ ամբողջ Ռաջպուտանը: Ինձ ճանապարհին կողոպտեցին, ծեծեցին, այպանեցին, որովհետև կառավարության բարեկամն եմ: Օրհնյալ լինի ինձ փրկություն բերող գիշերը: Ինձ և իմ խղճալի ունեցվածքին:

— Ի՞նչ կա ձեր կապոցում, — հարցրի:

— Երկաթե արկղիկ, — պատասխանեց նա: — Իսկ մեջը բացի ինձնից ուրիշ ոչ մեկի համար արժեք չներկայացնող երկու կամ երեք ընտանեկան սրբություն կա:

Բայց ես աղքատ չեմ, կպարզևատրեմ քեզ, երիտասարդ սահիր, և քո պետին, եթե թույլ տաս ինձ թաքնվել այս պատերի ետևում:

Զգացի, որ ևս մի քիչ, ու էլ չեմ դիմանա: Որքան շատ էի նայում նրա ճարպոտ, սարսափից դողացող այտերին, այնքան հրեշավոր էր թվում ինձ այս սառնասրտորեն մտածված սպանությունը: Գոնե շուտ վերջանար այս բոլորը:

— Տարեք նրան կենտրոնական ամբոցը, — հրամայեցի ես:

Սիկհերից երկուսը գնացին կողքով, երրորդը՝ ետևից: Չորսը միասին դանդաղ հեռացան միջանցքով: Դժբախտ վաճառականը մահվան հետ տառացիորեն հայտնվեց դեմ-դիմաց: Լապտերովս մնացի մուտքի մոտ:

Լսեցի, թե ինչպես էր նրանց համաչափ քայլերի ձայնը արձագանքում ամայի միջանցքների կամարների ներքո: Հանկարծ քայլերը լռեցին: Հնչեցին ձայներ, կովի աղմուկ, հարվածներ: Իսկ մեկ բոպե անց, լսեցի ծանր շնչառությամբ իմ կողմը վազող մարդու քայլերի ձայնը: Լապտերով լուսավորեցի երկար, ուղիղ միջանցքը և տեսա կարմրատակած դեմքով հաստիկին: Իմ կողմն էր սլանում ամբողջ շնչով, իսկ ետևից նրան կրնկակոխ, վագրային թռիչքներով հետապնդում էր հսկա սիկհը, որի ձեռքում փայլում էր դանակը: Երբեք չէի տեսել, որ մարդիկ այդքան արագ վազեին, ինչպես այդ փոքրիկ առևտրականը: Նրան մնում էր վազել միայն իմ մոտով և դուրս թռչել փողոց: Այնտեղ արդեն կփրկվեր: Դարձյալ վարկյանի ինչ-որ մասի ընթացքում խղճացի նրան, բայց հիշեցի գանձերը և նորից դաժանացա: Երբ հավասարվեց ինձ, ոտքերի տակ նետեցի գենքն, ու նա ընկավ՝ վիրավոր նապաստակի նման երկու անգամ գլուխկոնձի տալով: Չհասցրեց ոտքի ցատկել, սիկհը արդեն գլխավերևում էր և երկու անգամ դանակով հարվածեց նրա կողին: Ահմեղը ոչ ցնցվեց, ոչ էլ տնքաց, այլ այդպես էլ պառկած մնաց ընկած տեղում: Իմ կարծիքով, կոտրել էր վիզը: Ինչպես տեսնում եք, ջենտլմեններ, պահում եմ իմ խոստումս և ամեն ինչ պատմում եմ ինչպես եղել է, չմտախոգվելով, թե ինչ տպավորություն կթողնի այն ձեզ վրա:

Նա ընդհատեց և շղթայված ձեռքը մեկնեց Հոլմսի պատրաստած սողայով վիսկիի բաժակին: Նայեցի նրան և զգացի, որ սարսափից դողում եմ ոչ միայն այն պատճառով, որ նա մասնակից է եղել այդ նենգ սպանությանը, այլ ինձ ցնցեց այն, թե ինչ թեթևությամբ և ինչ ցինիկորեն է պատմում այդ մասին: Ինչպիսի պատիժ էլ նախատեսվի, չեմ խղճա նրան: Նողկանք արտահայտող դեմքով Շերլոկ Հոլմսն ու Ջոնսը նստել էին լուռ, ձեռքները դրած ծնկներին: Մնուրը, հավանաբար, նկատեց այդ, որովհետև, երբ դարձյալ սկսեց խոսել, ձայնում մարտահրավեր նկատվեց:

— Այդ բոլորը, իհարկե, շատ վատ է, — ասաց նա: — Բայց կցանկանայի իմանալ, արդյո՞ք շատ մարդիկ կգտնվեն, որոնք իմ տեղը լինելով, այլ կերպ կվարվեին, կհրաժարվեին հարստությունից, իմանալով, որ բարության դիմաց իրենց կոկորդը կկտրեն: Բացի այդ, երբ Ահմեղն ամբողջ մտավ, գործն արդեն այլ ընթացք ստացավ. ես կամ նա: Եթե փախչեր, ամեն ինչ կբացվեր, ինձ կդատեին ռազմադաշտային դատարանով և կգնդակահարեին, որովհետև այդպիսի ժամանակներում չի կարելի հույս դնել ներողամտության վրա:

— Շարունակեք, — կարճ հրամայեց Հովմար:

Դե ահա, մենք երեքով՝ Աբդուլան, Աբբարը և ես նրան քարշ տվեցինք ամրոց: Չնայած թզուկ էր, բայց հալիժ ընկանք: Մոհամեդ Մինգհը մնաց մուտքի մոտ հսկելու: Միկիերը նախօրոք որոշել էին, թե որտեղ կարելի է դիակը թաքցնել: Երկար շրջադարձերով սրահը մեզ տարավ մի մեծ դատարկ դահլիճ, որի աղյուսե պատերն աստիճանաբար քանդվում էին: Հողե հատակը ճաքել և նստվածք էր տվել, ստեղծելով բնական գերեզման: Այստեղ էլ թաքցրինք վաճառական Ահմեդին, գերեզմանը լցնելով պատից պոկված աղյուսներով: Վերջացնելով Ահմեդի հետ, վերադարձանք դեպի գանձերով լի սնդուկը:

Մնդուկը մնացել էր այնտեղ, ուր դրել էր Ահմեդը սիկիերի առաջին հարձակման ժամանակ: Դա հենց նույն արկղն էր, որ հիմա դրված է ձեր առջև՝ սեղանին: Դրվագագարդ կափարիչի բռնակին մետակսե ժապավենով կապված էր բանալին: Բացեցինք սնդուկը, և լապտերի լույսի ներքո փայլեցին, կայծկլտացին այնպիսի թանկարժեք քարեր, որոնց նմանների մասին կարդացել եմ միայն արկածային գրքերում և մանուկ հասակում երազել Պերշորում: Դրանց փայլից կարելի էր կուրանալ: Հագենալով այդ հիանալի տեսարանից, հանեցինք թանկարժեք քարերը և սկսեցինք հաշվել: Հարյուր քառասուններեք հատ մաքուր ադամանդ կար, դրանց մեջ էր նաև «Մեծ Մոզուլը», իմ կարծիքով այդ քարը հենց այդպես է կոչվում: Ասում են, իր մեծությամբ աշխարհում երկրորդ քարն է դա: Այնտեղ կային նաև իննսուն հատ գեղեցիկ զմրուխտ, հարյուր յոթանասուն հատ սուտակ, ճիշտ է, շատ մանր, կար նաև տասը հատ շափյուղա, վաթսունմեկ ազաթ և բազմաթիվ բյուրեղաքարեր, օնիքսներ, կատվի աչքեր, փիրուզներ և ուրիշ շատ քարեր, որոնց անուններն այն ժամանակ չգիտեի: Հիմա քարերն ավելի լավ եմ ճանաչում, քան առաջ: Այնտեղ կար նաև մոտավորապես երեք հարյուր հատ հիանալի մարգարիտ, որոնցից տասներկուսը՝ շարան սարքած: Ի միջի այլոց, այդ շարանները կորել են սնդուկից: Երբ վերջերս բացեցի, դրանք չկային:

Հաշվելով մեր գանձերը, դրանք նորից դրեցինք սնդուկի մեջ և տարանք ցույց տալու Մոհամեդ Մինգհին: Հետո մեկ անգամ էլ երդվեցինք մեկս մյուսիս չդավաճանել և պահել մեր գաղտնիքը: Որոշեցինք մեր գանձերը կիսել, երբ երկրում խաղաղություն տիրի, իսկ մինչ այդ սնդուկը պահել ապահով տեղում: Դրանք հիմա բաժանել իմաստ չունեն, եթե մեզ մոտ տեսնեին այդպիսի հարստություն, կասկած կհարուցեր: Ամրոցում բոլորն ապրում էին միասին, այնպես որ օտար աչքից պահելու ոչ մի հնարավորություն չկար: Այդ պատճառով սնդուկը տարանք հենց այն դահլիճը, որտեղ պառկած էր Ահմեդը, և թաքցրինք համեմատաբար լավ պահպանված պատերից մեկում: Լավ մտապահեցինք տեղը ու հաջորդ օրը ես չորս հատ գծագիր գծեցի և յուրաքանչյուրի վրա, ներքևի մասում գրեցի «չորսի նշանը», քանի որ չորսս էլ կապված էինք անխախտ երդումով: Երդվում եմ ձեռքս դնելով սրտիս, որ երբեք չեմ դավաճանել այն:

Ջենտլմեններ, պետք չէ ձեզ պատմել, թե ինչով ավարտվեց ապստամբությունը: Երբ Ուիլսոնը գրավեց Դելին, իսկ սրբ Քոլին ազատեց Լակոնաուն՝ ապստամբներն ընկան: Հասան անգլիական թարմ զորամասերը, և Նանա Սահիբը փախավ արտասահման: Գնդապետ Գրեյթեդի թոշոդ ջոկատները շրջապատեցին Ագրան և դուրս մղեցին բոլոր խռովորարներին: Խաղաղությունը վերջապես հաստատվեց երկրում, և մենք չորսով արդեն

հուսով էինք, որ հեռու չէ այն օրը, երբ աննկատելիորեն կկարողանանք ամբողջից դուրս բերել մեր գանձերը: Բայց վիճակված չէր մեր հույսներն իրականացնել. մեզ ձերբակալեցին, որպես Ահմեդին սպանողների:

Ահա թե ինչ էր կատարվել: Ռաջան վստահելով Ահմեդին, հարստությունը հանձնել էր նրան: Սակայն արևելքում մարդիկ կասկածամիտ են, այդ պատճառով Ռաջան Ահմեդի ետևից ուղարկել էր երկրորդ ծառային, որին Ահմեդից ավելի էր վստահում: Երկրորդին հրամայել էր Ահմեդին ոչ մի վարկյան տեսադաշտից բաց չթողնել, և վերջինս ստվերի նման ամենուրեք հետևել էր նրան: Ճակատագրական այդ գիշերը Ահմեդի ետևից եկել էր մինչև դուռը և տեսել, թե ինչպես նրան ամբողջ թողեցին: Նա չէր կասկածել, որ Ահմեդին ապաստան են տվել, և երկրորդ օրն ինքն էլ էր ուղևորվել այնտեղ: Բայց Ահմեդին այնտեղ չէր հանդիպել: Դա զգաստացրել էր նրան և Ահմեդի անհետացման մասին զեկուցել էր սերժանտին, նա էլ պետին: Անմիջապես փնտրեցին և շատ շուտ գտան Ահմեդի մարմինը: Վստահ էինք, որ բոլոր հետքերը թաքցրել էինք և մխիթարվում էինք ուրախ հույսերով, երբ հանկարծ չորսիս էլ ձերբակալեցին և մեղադրեցին Ահմեդի սպանության մեջ: Այդ գիշեր մեզնից երեքը պահակ էին կանգնած հարավ-արևմտյան դռան մոտ, իսկ չորրորդը, ինչպես հայտնի դարձավ, ճանապարհորդել էր սպանվածի հետ:

Գանձերի մասին դատարանում ոչ մի խոսք չասվեց, որովհետև ռաջային զրկեցին իշխանական գահից և վտարեցին Հնդկաստանից: Գործի հանգամանքները շատ արագ հետաքննեցին և դատարանը մեզ ներկայացրեց սպանության մեղադրանք: Սիկհերը դատապարտվեցին ցմահ տաժանակրության, իսկ ես՝ մահվան, որը հետո փոխեցին նույն ժամկետով տաժանակրության:

Մենք հայտնվեցինք հիմար վիճակում: Իմանալով, որ այնպիսի մի գաղտնիքի տեր ես, որը կարող է քեզ վեր բարձրացնել, և նստել բանտում՝ ազատվելու ոչ մի հույս չունենալով, անտանելի էր: Տանել հսկիչի ծաղրանքներն ու գանահարությունները, միայն բրինձ ուտել ու ջուր խմել, երբ ազատության մեջ քեզ սպասում է հեքիաթային հարստություն, կարելի է խելագարվել կամ ինքնասպան լինել, բայց ես միշտ համառ եմ եղել և, սրտապնդվելով, սկսեցի սպասել իմ ժամին:

Եվ ահա, ինչպես ինձ թվաց, ժամը եկավ: Ագրայից մեզ տեղափոխեցին Մադրաս, իսկ այնտեղից Անդամանյան կղզիներ՝ Պորտ-Բլեր: Նոր բանտում սպիտակամորթներ քիչ կային, և քանի որ սկսեցի անմիջապես ինձ օրինակելի պահել, շուտով հայտնվեցի արտոնյալ վիճակում: Հոպթաունում ինձ խրճիթ տվին: Հոպթաունը փոքր ավան է Հարիեթ լեռան լանջին, և նույնիսկ այնպիսի ժամանակ եղավ, երբ ինձ թողեցին իմ կամքին: Տեղը գարշելի էր, տենդով վարակված կղզիներում, մեր տաժանավայրի արգելապատնեջի ետևում, բնակվում էին մարդակեր ցեղեր: Նրանց միակ զվարճությունը հարմար բռայեին թունավոր փշերով բանտարկյալների վրա կրակելն էր: Մենք հող էինք փորում, կոյուղի անցկացնում, աշխատում բատատի պլանտացիաներում և դեռ շատ ուրիշ աշխատանքներ կային, այնպես որ, մեր ամբողջ օրը զբաղված էր, փոխարենը գիշերը մեզ էր պատկանում: Բացի դրանցից, սովորեցի մեր բժշկի համար դեղ պատրաստել և ջանում էի ինչ-որ բան յուրացնել նրա գիտությունից: Ամբողջ ժամանակ զգոն էի՝ փախուստի առիթ կպատահի, թե ոչ: Բայց Անդամանյան կղզիները մոտակա կղզիներից գտնվում էին հարյուրավոր

մղոն հեռավորության վրա, իսկ ծովի այդ լայնություններում քամին շատ թույլ է կամ բոլորովին չկա: Այնպես որ, այդտեղից փախչելը ուժից վեր գործ էր:

Բժիշկ Մոսերթոնը ուրախ և մարդամոտ երիտասարդ էր: Երիտասարդ սպաները հավաքվում էին նրա սենյակում և թուղթ էին խաղում: Նրա ընդունարանը, որտեղ սովորաբար դեղ էի պատրաստում, կպած էր հյուրասենյակին և սենյակների միջև մի փոքրիկ պատուհան կար պատի մեջ: Հաճախ, երբ հատկապես թախծոտ և միայնակ էի, ընդունարանում հանգցնում էի լամպը և կանգնած էի այդտեղ՝ պատուհանի միջով դիտելով խաղը և լսելով նրանց խոսակցությունը: Միբուրում եմ թուղթ խաղալ և դա համարյա նույն էր, թե ինքդ ես խաղում: Այնտեղ սովորաբար հավաքվում էին մայր Շոլտոն, կապիտան Մորսթենը, լեյտենանտ Բրոմլի Բրաունը, բանտի տեղացի պահակապետը, բժիշկը և երկու-երեք բանտային չինովնիկներ՝ հին, փորձված խաղացողներ, որոնք վարում էին մտածված և հաղթական խաղ: Համերաշխ խումբ էր հավաքված:

Շուտով նկատեցի, որ զինվորականները միշտ պարտվում էին, չինովնիկները՝ հաղթում: Չէի ասի, թե նրանք անազնիվ էին խաղում, ոչ: Բայց այդպես էր ստացվում: Բանտային այդ առնետները, ընկնելով Անդամանյան կղզիներ, բացի թղթախաղից երբեք ուրիշ բանով չէին զբաղվում, լավ գիտեին իրենց խաղընկերների սովորությունները և խաղում էին լուրջ, իսկ զինվորականները խաղալու էին նստում միայն ժամանակ անցկացնելու համար: Երեկոյից երեկո զինվորականներն ավելի շատ էին տանուլ տալիս և ավելի շատ էին ցանկանում տանուլ տվածը ետ վերադարձնել: Ամենավատը մայր Շոլտոյի վիճակն էր: Սկզբում նա կանխիկ էր վճարում՝ ոսկով և դրամաքարտերով, հետո սկսեց մեծ գումարների ստացականներ տալ: Երբեմն մի փոքր շահում էր, կարծում եմ, դա դիտմամբ էր արվում, որպեսզի քաջալերվեր: Իսկ հետո անհաջողություններն սկսեցին ավելի դաժանորեն հետապնդել նրան: Օրերով ման էր գալիս ամպի պես մռայլված, նույնիսկ սկսեց խմել ի վնաս առողջության: Մի անգամ խիստ պարտվեց: Նստած էի խրճիթում, երբ մայրը կապիտան Մորսթենի հետ օրորվելով տուն վերադարձավ: Նրանք բարեկամներ էին և երբեք չէին բաժանվում: Մայրը սաստիկ վշտացած էր տանուլ տվածի համար:

— Ամեն ինչ վերջացած է, Մորսթեն, — ասաց նա: Կորած մարդ եմ: Ինձ մնում է միայն պաշտոնաթող լինել:

— Հիմարություն է, ծերուկ, — բացականչեց կապիտանը՝ թփթփացնելով բարեկամի ուսին: — Ինքս էլ պակաս դժվարին կացության մեջ չեմ, բայց . . .

Ահա այն ամենը, ինչ լսեցի այդ ժամանակ, բայց մայրի բառերը ստիպեցին ինձ խորհել:

Մի երկու օր անց տեսա, թե ինչպես է մայր Շոլտոն դանդաղ թափառում ավով մեկ և որոշեցի խոսել հետը:

— Պետք է խորհրդակցեմ ձեզ հետ, մայր, — ասացի ես:

— Լսում եմ, Սմոլ: Ի՞նչ կա, — սիգարը բերանից հանելով պատասխանեց նա:

— Դուք չգիտե՞ք, — սկսեցի ես, — թե որ պաշտոնական անձին պետք է հաղորդեմ պահված գանձերի մասին: Ինձ հայտնի է, թե որտեղ է թաքնված կես միլիոն ֆունտը և քանի որ ինքս չեմ կարող դրանցից օգտվել, ապա մտածեցի,

ավելի լավ չէ՞ դրանք հանձնել իշխանություններին: Հնարավոր է, դրա համար կրճատեն ժամկետս:

— Ասում ես կես միլիոն, Սմոլ, — մայրի շունչը նույնիսկ կտրվեց և ակնապիշ նայեց ինձ, որ հասկանա, արդյո՞ք լուրջ եմ խոսում:

— Այո, թանկարժեք քարերի ու մարգարիտների տեսքով: Այնտեղ իրենց համար ընկած են: Եվ ոչ ոք դրանց մասին չգիտե: Դրա տերը տաժանակիր է, օրենքից դուրս: Այնպես որ, դրանք պատկանում են առաջին իսկ գտնողին:

— Դրանք պատկանում են կառավարությանը, Սմոլ, — փոխված ձայնով խոսեց մայրը, — կառավարությանը, և ուրիշ ոչ մեկին:

Բայց այդ բառերն այնքան անվստահ ասաց, կակազելով, որ հասկացա՝ մայրը կուլ տվեց խայծը:

— Սըր, ուրեմն խորհուրդ եք տալիս թանկարժեք իրերի մասին հայտնել գեներալ նահանգապետին, — ասացի պարզամիտ ձևանալով:

— Որպեսզի հետո չափսոսաք, պետք չէ շտապել, Սմոլ: Պատմիր մանրամասն: Ճիշտ խորհուրդ տալու համար պետք է ամեն ինչ իմանամ:

Կատարվածը պատմեցի որոշ փոփոխություններով, որպեսզի չգուշակի, թե որտեղ է դա տեղի ունեցել: Երբ վերջացրի, քարացածի պես կանգնեց և մտածեց: Շուրթերի շարժումներից հասկացա, թե մեջն ինչպիսի պայքար է գնում:

Դա շատ կարևոր գործ է, Սմոլ, — ասաց նա վերջապես: — Այդ մասին ոչ մեկին ոչ մի խոսք: Շուտով էլի կգամ քեզ մոտ: Եվ այն ժամանակ կխոսենք:

Մոտս եկավ երկու օր հետո, գիշերը, կապիտան Մորսթենի հետ:

— Սմոլ, կցանկանայի, որպեսզի կապիտան Մորսթենը այդ պատմությունը լսեր քո շուրթերից, — ասաց մայրը:

Բառացիորեն կրկնեցի մայրին ասածս:

— Ճշմարտանման է հնչում, հը՞, — ասաց նա կապիտանին: — Ես, հավանաբար, կհավատայի:

Կապիտան Մորսթենը անխոս գլխով արեց:

— Լսիր, Սմոլ, — սկսեց մայրը, — կապիտանի հետ ամեն ինչ քննարկեցինք և եկանք այն եզրակացության, որ գեներալ նահանգապետն այստեղ գործ չունի: Դա քո անձնական գործն է և ազատ ես վարվելու ինչպես հարկ համարես: Բայց ահա թե ինչ կցանկանայի հարցնել. ի՞նչ գին կառաջարկես գանձերիդ համար: Մենք կարող ենք գնալ դրանց ետևից կամ ծայրահեղ դեպքում հոգ տանել դրանց ապահովության մասին: Եթե, իհարկե, համաձայնության գանք:

Խոսում էր սառը, անտարբեր տոնով, բայց աչքերը փայլում էին հուզմունքից և ընչաքաղցությունից:

— Գիտեք ինչ, ջենտլմեններ, — ջանալով նույնպես հանգիստ խոսել, պատասխանեցի ոչ պակաս հուզմունք չզգալով: — Իմ պայմաններում գտնվող մարդուն պետք է մի բան՝ ազատություն: Ազատություն ինձ և ընկերներիս՝ սա է իմ պայմանը: Այդ ժամանակ ձեզ բաժնետեր կրնդունենք և գանձը կբաժանենք հինգ հավասար մասի: Դուք երկուսով կստանաք հինգերորդ մասը:

— Հըմ, հինգերո՞րդ, — խոսեց մայրը: Քիչ է:

— Ամեն մեկին հիսուն հազար ֆունտ, — ասացի:

— Բայց ինչպե՞ս կարող ենք ազատել: Չէ՞ որ լավ գիտես, որ անհնարինն ես պահանջում:

— Ամենին, — պատասխանեցի: — Ամեն ինչ մտածված է մանրամասնորեն: Փախուստին խանգարում է միայն մի բան՝ հեռավոր նավարկության համար պիտանի նավակ և մի քանի օրվա ուտելիք: Կալկաթայում կամ Մադրասում հեշտ է համապատասխան նավակ գտնել: Նավակն այստեղ կհասցնեք: Գիշերը կբեռնենք, և եթե դուք մեզ ծովով փոխադրեք հնդկական ափի ցանկացած մասը, համարեք, որ դուք ձեր բաժինն աշխատեցիք:

— Եթե դուք մենակ լինեիք, — նկատեց մայորը:

— Չորսս կամ ոչ մեկը, — ասացի: Մենք երդվել ենք մեջք-մեջքի կանգնել և միշտ գործել միասին:

— Տեսնում եք, Մորսթեն, — ասաց մայորը: — Սմոլն իր խոսքի տերն է: Չի լքում ընկերներին: Կարծում եմ, կարող ենք նրա վրա հույս դնել:

— Կեղտոտ գործ է, — ասաց կապիտանը: — Բայց դուք ճիշտ եք, դրամը կփրկի մեր սպայական պատիվը:

— Լավ, Սմոլ, — ասաց մայորը: — Մենք կաշխատենք կատարել խնդրածդ: Բայց սկզբում, բնական է, պետք է համոզվենք, որ պատմածդ հնարովի չէ: Ասա ինձ, որտեղ է թաքնված գանձը: Կվերցնեմ միամսյա արձակուրդ և պարենային նավով կմեկնեմ Հնդկաստան:

— Սպասեք, սպասեք, — ինչքան շատ էր հուզվում նա, այնքան հանգիստ էի դառնում ես: — Պետք է ունենամ ընկերներին համաձայնությունը: Չէ որ ասացի՝ չորսս կամ ոչ ոք:

— Հիմարություն, — բացականչեց մայորը: — Ինչ կապ ունեն այդ սևամորթները մեր ջենտլմենական համաձայնության հետ:

— Սև են թե կանաչ, — ասացի, — բայց իմ ընկերներն են, և երդվել ենք երբեք մեկս մյուսիս չլքել:

Գործը վերջնականապես հարթվեց երկրորդ ժամադրության ժամանակ՝ Մոհամեդ Սինգի, Աբդուլա Խանի և Դոստ Աբբարի ներկայությամբ: Մի անգամ էլ ամեն ինչ քննարկեցինք և որոշեցինք՝ մայոր Շոլտոյին և կապիտան Մորսթենին տալիս ենք Ագրայի ամրոցի այն մասի գծագիրը, որտեղ պահված են գանձերը: Մայոր Շոլտոն մեկնում է Հնդկաստան, համոզվելու պատմածիս ճշմարտացիության մեջ: Եթե սնդուկը տեղում է, գնում է մի փոքրիկ նավակ, մթերքներ և լողում դեպի Ռաթլենդ կղզի, ուր պետք է մենք սպասենք: Հետո վերադառնում է իր պարտականություններին: Մի փոքր անց արձակուրդ է գնում կապիտան Մորսթենը: Նրան դիմավորում ենք Ագրայում և կիսում գանձերը: Նա վերցնում է իր և մայորի բաժինը և վերադառնում Անդամանյան կղզիներ: Կազմելով այսպիսի ծրագիր, երդվեցինք անգամ հավերժական սարսափների տակ չխախտել այն: Ամբողջ գիշեր նստեցի թուղթ ու թանաքով և առավոտյան կողմ պատրաստ էր երկու գծագիր, ստորագրված «չորսի նշանով», այսինքն Աբդուլայի, Աբբարի, Մոհամեդի և իմ:

Բայց ես, թվում է, իմ երկար պատմությամբ հոգնեցրի ձեզ, ջենտլմեններ, իսկ ընկերս՝ միստր Ջոնսը, ինչպես տեսնում եմ, շտապում է ինձ երկաթե ճաղերի ետևում նստեցնել: Կաշխատեմ համառոտ պատմել: Մայոր Շոլտոն գնաց Հնդկաստան և այլևս երբեք չվերադարձավ Անդամանյան կղզիներ: Շուտով կապիտան Մորսթենն Անգլիա մեկնող մարդատար-փոստատար շոգենավի ուղևորների ցուցակի մեջ ինձ ցույց տվեց նրա անունը: Պարզվեց, որ մահացել էր քեռին՝ ժառանգություն թողնելով Շոլտոյին, և նա պաշտոնաթող

եղավ: Կարծում էր, որ մեզ այլևս երբեք չի տեսնի: Չէ՞ որ նա մեծ ստորություն կատարեց՝ մասնեց բոլորիս, այդ թվում՝ նաև իր ընկերոջը: Մորաթենը դրանից հետո շուտով մեկնեց Հնդկաստան և, իհարկե, սնդուկը թաքստոցում չգտավ. սրիկան հափշտակել էր այն, չկատարելով պայմանները, հանուն որի բացել էինք գաղտնիքը: Հենց այդ օրվանից ապրում էի վրեժխնդրության զգացումով: Այդ մասին մտածում էի գիշեր-ցերեկ: Շուտոյից վրեժ լուծելն ինձ համար դարձավ միակ, ամենակուլ կիրքը: Ոչնչից չէի վախենում՝ ոչ դատից, ոչ կախադանից: Ինչ գնով ուզում է լինի, փախչել, գտնել Շուտոյին, սեփական ձեռքերով կտրել նրա կոկորդը. ահա ինչ էի երագում: Նույնիսկ Ագրայի գանձերն էին խամրում Շուտոյի պատժի քաղցր պատկերի առաջ:

Ես շատ բան եմ ծրագրել այս կյանքում և միշտ ամեն ինչ հաջողվել է: Բայց անցան շատ միակերպ և վիատեցնող տարիներ՝ մինչև ճակատագիրը կժպտար ինձ: Արդեն ձեզ ասել եմ, որ բժշկության մեջ ինչ-որ բան ձեռք եմ բերել: Մի անգամ, երբ բժիշկ Մոմերթոնը պատկած էր մալարիայի նոպայով, բանտարկյալներն անտառում բռնել էին փոքրամարմին մի տեղաբնակի: Նա մահացու հիվանդ էր և հեռացել էր անտառում մեռնելու: Գրկեցի, չնայած նրանից օձի ճտի նման չարություն էր բուրում: Երկու ամիս բուժեցի և, պատկերացրեք, ոտքի կանգնեցրի: Նա կապվեց ինձ հետ և, հավանաբար, չէր ձգտում անտառ վերադառնալ, որովհետև ամեն օր քարշ էր գալիս խրճիթիս մոտ: Նրանից մի քանի բառ սովորեցի իրենց լեզվով, որն էլ ավելի ամուր կապեց նրան ինձ: Տոնգան, այդպես էր նրա անունը, գերագանց ծովագնաց էր: Ուներ մեծ, ընդարձակ նավակ:

Երբ տեսա, թե ինչպես է ինձ կապվել և ինձ համար պատրաստ է ամեն ինչի, սկսեցի լրջորեն մտորել փախուստի մասին: Այսպիսի ծրագիր մշակեցիս: Նա պետք է գիշերն իր նավակը հասցներ հին, լքված, չպաշտպանվող նավամատույցը և այնտեղից ինձ վերցնեք: Հանձնարարեցի հետը վերցնել խմելու ջրով մի քանի շիշ, կոկոսի ընկույզներ, շատ բատատ և քաղցր կարտոֆիլ:

Փոքրիկ Տոնգան հավատարիմ, հուսալի ընկեր էր: Ոչ մեկը չի ունեցել և չի ունենա այդպիսի ընկեր: Գիշերն, ինչպես պայմանավորվել էինք, նավակը բերեց նավամատույց: Բայց այնպես ստացվեց, որ այդ գիշեր հերթապահ էին կանգնեցրել մի աֆղանացու, որը երբեք առիթը բաց չէր թողնում ինձ վիրավորելու կամ խփելու: Վաղուց երդվել էի վրեժխնդիր լինել, և ահա այդ ժամը հասավ: Կոկոսի ապրելու վերջին բոպեներին ճակատագիտը դիտմամբ հանդիպեցրեց մեզ այդ գիշեր, որպեսզի կարողանամ հաշիվներս մաքրել: Կանգնել էր ծովափին, մեջքով դեպի ինձ, կարաբինն ուսին: Շուրջս քար փնտրեցի, որով կարողանայի ուղեղը թափել, չգտա: Այդ ժամանակ գլխումս վայրենի միտք ծագեց, հասկացա, ինչը պետք է իմ զենքը դառնա: Մթան մեջ գետնին նստեցի և արձակեցի փայտե ոտքս: Երեք մեծ թռիչք գործելով հարձակվեցի վրան: Նա հասցրեց կարաբինը դեմ տալ ուսին, բայց ես թափով վրա բերեցի փայտե ոտքս և ջնջիսեցի գանգը: Հարվածից փայտե ոտքիս վրա փոս մնաց: Երկուսով ընկանք, որովհետև չկարողացա հավասարակշռությունս պահել: Բարձրացա և տեսա, որ անշարժ ընկած է: Դեպի նավակը շտապեցի և մեկ ժամից արդեն բաց ծովում էինք: Տոնգան վերցրել էր իր ունեցած-չունեցածը, ամբողջ զենքը և բոլոր աստվածներին: Մնացած իրերի մեջ գտա նրա բամբուկե երկար նիզակը և մի քանի խսիր, հյուսված կոկոսի տերևներից,

որոնցից առագաստանման ինչ-որ բան շինեցի: Տասը օր բաց ծովում էինք, տասնմեկերորդ օրը մեզ վերցրեց մալայացի ուխտագնացներով բեռնված առևտրական նավը, որը սինգապուրից գնում էր Ջիդու: Դա խայտաբղետ մի խումբ էր, և ես ու Տոնգան շուտով կորանք նրանց մեջ: Նրանք ունեին մի շատ լավ հատկություն՝ հարցեր չէին տալիս:

Եթե սկսեմ պատմել բոլոր այն արկածները, որոնք հարկ է եղել ապրել ինձ և փոքրիկ բարեկամիս, դուք ինձ շնորհակալություն չեք հայտնի, որովհետև մինչև լուսաբաց չեմ վերջացնի: Ուր ասես մեզ չի նետել ճակատագիրը: Բայց ահա, Լոնդոն ընկնել ոչ մի կերպ չէինք կարողանում: Գիշերները երազումս տեսնում էի Շոլտոյին: Գիշերները երազումս հազար անգամ սպանել եմ նրան: Վերջապես, երեք կամ չորս տարի առաջ հայտնվեցինք Անգլիայում: Ինձ համար դժվար չէր իմանալ, թե որտեղ է ապրում Շոլտոն:

Հետո աշխատեցի պարզել, թե ինչ են եղել գանձերը: Բարեկամություն ստեղծեցի նրա տնեցիներից մեկի հետ: Չեմ ասի անունը, չեմ ուզում, ինչ-որ մեկը ևս փոխի բանտում: Շուտով տեղեկացա, որ գանձն անվնաս է և գտնվում է Շոլտոյի մոտ: Այն ժամանակ մտածեցի հարձակվել վրան: Բայց Շոլտոն խորամանկ էր: Որպես դոնապան միշտ պահում էր երկու պրոֆեսիոնալ բռնցքամարտիկների և որդիներն ու հնդիկ ծառան էլ միշտ կողքին էին:

Եվ ահա լսում եմ, որ նա մահամերձ է: Խելագարի նման նետվեցի Պոնդիշերի-Լոջ: Մի թե ինձնից այդ ձևով կարծնի: Գաղտագողի այգի մտա և ներս նայեցի նրա պատուհանից: Շոլտոն պառկել էր անկողնում, աջ ու ձախ կողմերում կանգնել էին երկու որդիները: Ցանկացա նետվել երեքի վրա էլ, բայց այդ բռնակներն նայեցի նրան, նա էլ նկատեց ինձ, ծնոտը կախ ընկավ, և ես հասկացա, որ մայրը Շոլտոյի համար աշխարհում ամեն ինչ վերջացած է: Այնուամենայնիվ, հենց այդ գիշեր սողոսկեցի նրա ննջարանը, քրքրեցի ամբողջ թղթերը՝ որևէ տեղեկություն փնտրելով գանձերի թաքստոցի մասին: Բայց ոչ մի բան չգտա: Եվ այդտեղ էլ գլխումս միտք ծագեց, որ եթե ես երբևիցե հանդիպեմ իմ ընկեր սիկիերին, նրանց հաճելի կլինի իմանալ, որ ինձ հաջողվել է մայրի սենյակում թողնել մեր ատելության վկայականը: Թողթի կտորի վրա նկարեցի «չորսի նշանը», ինչպես մեր քարտեզների վրա էր, և ամրացրի հանգուցյալի կրծքին: Թող նա գերեզմանում հիշի այն չորսի մասին, որոնց խաբեց ու թալանեց:

Ապրուստ վաստակելու համար շրջում էինք տոնավաճառներում, և իւեղճ Տոնգան դրամի համար ցուցադրում էր իրեն: Սև մարդակերը հանդիսականների առջև ուտում էր հում միս և պարում իր մարտական պարերը: Այնպես որ, օրվա վերջում միշտ մի գլխարկ դրամ էր հավաքվում: Առաջվա պես կապ էի պահպանում Պոնդիշերի-Լոջի հետ, բայց այնտեղից ոչ մի նորություն չկար: Միայն գիտեի, որ որդիները շարունակում են փնտրել գանձը: Վերջապես եկավ այն լուրը, որին մենք այնքան երկար սպասեցինք: Գանձերը գտնվեցին: Դրանք հայտնաբերվեցին Բարթոլոմյու Շոլտոյի քիմիական լաբորատորիայի ձեռնահարկում: Անմիջապես տեղ հասա և ամեն ինչ գնեցի: Հասկացա, որ իմ ոտքով այնտեղ չեմ հասնի: Սակայն իմացա ձեռնահարկի պատուհանի մասին, ինչպես նաև, որ միստր Շոլտոն ընթրում է ներքևում: Մտածեցի, որ Տոնգայի օգնությամբ ամեն ինչ հեշտ կլինի: Նրան վերցրեցի հետո, մեջքին փաթափեցի պարանս, որ նախագգուշաբար վերցրել էինք հետներս: Տոնգան մագլցում էր կատվի պես և շուտով հայտնվեց

տանիքին: Բայց, դժբախտաբար, Բարթոլոմյոյ Շոլտոն դեռ աշխատասենյակում էր և հատուցեց կյանքով: Տոնգան կարծում էր, որ Շոլտոյին սպանելով շատ լավ է վարվել: Երբ պարանով բարձրացա սենյակը, նա աքլորի պես ման էր գալիս: Եվ շատ զարմացավ, երբ իրեն անվանեցի արյունարբու սատանա և սկսեցի ծեծել պարանի ազատ ծայրով: Հետո վերցրի գանձերով սնդուկը, ներքև իջեցրի, այնուհետև ես իջա, և թղթի վրա նկարելով ու սեղանին թողնելով «չորսի նշանը», հեռացա: Ցանկացա ցույց տալ, որ թանկարժեք իրերը վերջապես վերադարձել են նրանց, ում իրավացիորեն պատկանում էին: Տոնգան քաշեց պարանը, փակեց պատուհանը և գնաց տանիքով այնպես, ինչպես եկել էր:

Չգիտեմ, ուրիշ ինչ ավելացնեմ պատմությանս: Լսեցի, թե ինչպես ինչ-որ նավավար գովում էր Սմիթի արագնթաց «Ավրորա» շոգենավակը: Մտածեցի, որ դա հենց այն է, ինչ պետք է մեզ: Պայմանավորվեցի ավագ Սմիթի հետ, վարձեցի նավակը և խոստացա լավ վճարել, եթե մեզ ողջ ու անվնաս հասցնի Բրազիլիա մեկնող նավին: Նա, իհարկե, գուշակեց, որ գործը մաքուր չէ, բայց նորվուդյան սպանության մասին չէր լսել: Դուք ինձ վատ ծառայություն մատուցեցիք, ջենտլմեններ, և այն ամենը, ինչ պատմեցի ձեզ, զուտ իսկություն է: Ես դա պատմեցի ոչ թե ձեր ուշադրությունը շեղելու համար, այլ որովհետև իմ փրկությունը ճշմարտությունը պատմելու մեջ է, որպեսզի ամբողջ աշխարհն իմանա, թե ինչպես մայր Շոլտոն խաբեց ինձ, և որ ես ամեննին մեղավոր չեմ նրա որդու սպանության մեջ:

— Հիանալի պատմություն է, — ասաց Շերլոկ Հոլմսը: — Միանգամայն արժանի վերջաբան՝ ոչ պակաս հիանալի գործի համար: Ձեր պատմության երկրորդ մասում ինձ համար գաղտնիք չկա, բացի, թերևս, ձեզ հետ բերած պարանից: Ի միջի այլոց, ես կարծում էի, թե Տոնգան կորցրել էր իր բոլոր փշերը: Իսկ մեզ վրա մի փուշ կրակեց:

— Այն, որ մնացել էր խողովակում: Մնացածը կորցրել էր:

— Հասկանալի է, — ասաց Հոլմսը: — Ինչպես չմտածեցի:

— Ուրիշ հարցեր կա՞ն, — սիրալիկ հարցրեց մեր գերին:

— Ոչ, շնորհակալ եմ, այլևս չկան, — պատասխանեց ընկերս:

— Լսեք, Հոլմս, — ասաց Էթելնի Ջոնսը, — դուք մի մարդ եք, որին պետք է սիրաշահել: Բոլորին հայտնի է, որ հանցագործություն բացահայտելու ձեզ հավասարը չկա: Բայց պարտականությունը մնում է պարտականություն, իսկ ես առանց այն էլ շատ խախտումներ թույլ տվեցի, սիրաշահելով ձեզ և ձեր ընկերոջը: Ավելի հանգիստ կլինեմ, եթե ես մեր պատմողին տեղավորեմ հուսալի տեղում: Կառքը դեռ մեզ սպասում է, իսկ ներքևում սպասում են երկու ոստիկան: Շատ պարտական եմ ձեզ և ձեր ընկերոջը օգնության համար: Ինքնին հասկանալի է, ձեր ներկայությունը դատարանում պարտադիր է: Բարի գիշեր:

— Բարի գիշեր, ջենտլմեններ, — ասաց Սմոլը:

— Առաջինը դու անցիր, — խոսեց շրջահայաց Ջոնսը, երբ նրանք վեր կացան դուրս գալու սենյակից: — Չեմ ցանկանում փայտե ոտքով հարվածես գլխիս, ինչպես արել ես Անդամանյան կղզիներում:

— Ահա և վերջ, — ասացի ես, մի քանի բռպե լուռ ծխելուց հետո: — Կարծում եմ, Հոլմս, որ ձեր մեթոդը վերջին անգամ ուսումնասիրելու հնարավորություն էր սա: Միսս Մորսթենը պատիվ արեց՝ համաձայնելով իմ կինը դառնալ:

Հովմար հանկարծակիությունից ճչաց:

— Ես վախենում էի դրանից, — ասաց նա: — Ոչ, չեմ կարող ձեզ շներհավորել:

— Ձեզ դուր չի՞ գալիս իմ ընտրությունը, — հարցրի թեթևակի խոցված:

— Դուր է գալիս: Պետք է ասեմ, որ միսս Մորսթենը հրապուրիչ օրհորդ է և կարող է իսկական օգնական լինել մեր գործում: Անվիճելիորեն այդ սովյալներն ունի: Ուշադրություն դարձրեք, որ հենց առաջին օրը իր հոր թղթերից մեզ բերեց ոչ այլ ինչ, քան Ագրայի ամրոցի նախագիծը: Բայց սերը էմոցիոնալ զգացմունք է և այդպիսին լինելով հակադիր է մաքուր և բանական մտքին: Իսկ ես, ինչպես ձեզ հայտնի է, միտքը բոլորից բարձր եմ դասում: Ինչ վերաբերում է ինձ, ես երբեք չեմ ամուսնանա, որպեսզի չկորցնեմ մտածողության պայծառությունը:

— Հուսով եմ, — ծիծաղելով ասացի ես, — որ ուղեղս կդիմանա այս փորձությանը: Բայց դուք, Հովմա, դարձյալ ճնշված տեսք ունեք:

— Այո, սկսվում է հակազդումը: Ամբողջ շաբաթ քամած լիմոնի նման կլինեմ:

— Ինչ տարօրինակ է ձեզ մոտ իրար հաջորդում այն, ինչը, խոսելով ուրիշի մասին, կանվանեի ծուլություն՝ ամենասակտիվ և լարված գործունեության պարբերականությամբ:

— Այո, — ասաց նա, — իմ մեջ ամբարված են և մեծ ծուլի, և տխրահռչակ կովարարի հատկանիշները: Հաճախ եմ հիշում Գյոթեի խոսքերը՝ Schade, das die Natur nur einen Menschen aus dir schuf, denn zum wurdigen Mann war und zum Schelmen der Stoff: (Ափսոս , որ բնությունը քեզնից մեկ մարդ է սարքել . քո նյութից և՛ բարեպաշտ և՛ սրիկա դուրս կգար): Ի դեպ, դառնալով նորվուդյան գործին ասեմ, որ, ինչպես ենթադրում էի, տանը իսկապես օգնական ունեին: Դա ոչ այլ ոք էր, քան ծառայապետ Լալ Ռառն: Եվ այսպես, այնուամենայնիվ, Ջոնսին է պատկանում մի խոշոր ձուկ բռնելու պատիվը:

— Ինչ անարդարացի բաշխվեց շահումը, — նկատեցի ես: — Այս գործում ամեն ինչ դուք արեցիք: Բայց կին ունեցա ես, իսկ փառքը մնաց Ջոնսին: Ի՞նչ մնաց ձեզ:

— Ի՞նչ, — ասաց Հովմար: — Իսկ ինձ՝ կոկաինով սրվակը:

Եվ նա իր նեղ ճերմակ ձեռքը մեկնեց պիտույքատուփի

Թարգմանիչ՝ Հովհաննես Գեւորգի Ղուկասյան (ռուսերենից)